


Արևի գրիգորյան

ԿՅԱՆՔԻ
ՃԱՆԿԱՐՉՈ



ՀԱՅԱՍՏԱՆԻ 1946 ԵՐԵՎԱՆ



ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

СИГНАЛЬНЫЙ ЗВЕМПЛС

ԱՏՎԱԿԱՆ Հ 1961 թ.

ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

(ՆՈՎԵԼՆԵՐ ԵՎ. ԽԵԳԵՆԴՆԵՐ)

Առաջարկներ



ԵՐԵՎԱՆ

ZUSAMMENFASSUNG

1948

ՆՎԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԱԿԱԳԻՒՆ ՄՈՐՄ³
ՑԻՐՈՒՀԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ



Արամ Գրիգորյանը

Արամ Գրիգորյանը սկսնակ զբող չէ. նա զբում է վաշուց — և վատ չի զրում: Նա ունի իր ստեղծագործական աշխարհը և՝ իր նախասիրած թեման այդ աշխարհում: Իր հայրենի Լենինական քաղաքում նրան ճանաչում են բոլորը: Մեր գրական միջամայրում ևս անծանոթ անուն չէ Արամ Գրիգորյանը, իբրև նովիկեների, լեզենդների և կարճ պատմվածքների հեղինակ: Նրա արծարծած թեմաների, կամ կառուցած սյուժեների մասին մեր գրական շրջաններում երբեմն վեճեր լինում են, բայց նրա գրական շնորհը վաղուց արգեն վիճակնության նյութ չէ այլևս:

Եվ, այնուամենայնիվ, մեր ընթերցող հասարակության լայն շրջանների համար Արամ Գրիգորյանը զրական նոր զեմք է: Եվ դա նրա մեղքը չէ, ինա՞րին: Մենք ինքներս ենք հաճախ անտարեր լինում դեպի մեր զրական ջանել կազմերը: Նրանք առաջանում, առնում և զրավորվում են մեր կողքին: Նրանց զրական շնորհը տարեց-տարեցի հասունանում, կազմակերպվում է, ստանում է նոր երանդներ, խորանում է և ճոխանում, բայց մենք այդ համափառ չենք նկատում:

Արամ Գրիգորյանը, ինարին, կարիք չունի, որ նրա այս գիրքը հանձնաքարվի ընթեցողին: Նա, ըստ իս, արդին այնքան կազմակերպված զրող է, որ ինքն իր գործերի գեղարվեստական արժանիքներով ել կարող է առանց որևէ միջնորդի ճանապարհ գտնել զեպի ընթերցողի սիրտը: Իսկ այս հաշուակում է, որ նա ունի ոչ միայն իր խորապես ապրած առելիքը, այլև իր պատմելու նկանակն ու ձեր, որը — կարող է — զեռ վերջնականապես զուցե չի հղկված, բայց որն իրենն է անպայման և որը նրա ստեղծագործական անհատականության շիտակ վկայությունն է:

Եթե, սակայն, այս ներածականն այնուամենայնիվ գըրվում է, ապա զրա շարժապիթը թերեւ ոչ այնքան ինքը Արամ Գրիգորյանն է՝ իբրև ստեղծագործող, որըան նրա նախընտրած

ժանրը, որի առանձնահատկությունները մեզանում երբեմն ուշալ են հասկացվում, և դրա հետեւանքով՝ հաճախ ոչ ճշմարիտ կերպով էլ մեկնաբանվում են մեր երիտասարդ հեղինակի դուռը:

Արամ Գրիգորյանը նովելիստ է, — դրականության այնպիսի մի ժանրի ներկայացուցիչ, որպիսին մեզանում տակաւ վեն շատ քիչ է զարգացած: Եվ դա դժվար արվեստ է: Դա անպայման պահանջում է երկի ամփոփ և կուռ կոմպոզիցիա, — այս մեկ, և ապա՝ խոհական եղանակով զրված և լուծված որոշակի իդեա: Գեղարվեստական արձակի մեջ չկա երեկի թե նույնն է, ինչ որ, ասենք, պոեզիայի մեջ՝ քառյակը:

Նովելը ոչ միայն գեղք է պատմում, այլև հոգեբանական ինչ որ բարդ խնդիր է դնում և լուծում: Նա ստիպում է ընթերցողին մտածել, վերադնահատել և վերաբերքավորել իր վաղուց ի վեր ունեցած վերաբերմունքը դեմքի կյանքի անդամ իսկ ծանոթ երեսոյթները, զեպի մարդն ու նրա կտարած գործերը: Սյուժենային իր երեսմա արտասովոր ընթացքով նահաճախ բոլորովին նոր տեսանկյունից է դիտում այն, ինչ վաղածանոթ է և թվում է, թե այլևս պարզ է, ինչպիս օդը և օդի նման էլ անառարկելի:

Եվ դրա համար էլ, իմ կարծիքով, նովելի սյուժեն հաճախ կարող է շատ բացառիկ և նույնիսկ արտասոց լինել, և մեծ մասամբ հենց այդպես էլ լինում է: Հեղինակն այդ ժանրի մեջ կարող է երբեմն շատ սուր զրություններ ստեղծել, առաջին պահից՝ նույնիսկ անհավատալի թվացող, որովհետեւ նովելի մեջ այդ զրություններն ինքնանպատակ չեն: Նրանք կենցաղ չեն պատկերացնում: Նրանք միայն միջոց են, որ օժանդակում են հեղինակին իր այս կամ այն կարեռ միտքնու խոհը կամ իդեան արվեստի հնաբըներով արտահյտելու:

Որ Արամ Գրիգորյանն ընտրել է այդ դժվար և պահանջկոտ ժանրը, — դա վկայում է, որ նա մտածող և որոնող մի հեղինակ է, որի համար ամենախոր և ամենահետաքրքրական երեսոյթն այս աշխարհում մարդն է՝ իր հոգու բոլոր քարդություններով:

Այս ժողովածուի մեջ ամփոփված են միայն մի քանիսը՝ նրա դրամ բազմաթիվ նովելներից ու լեգենդներից:

Դըանք, անշուշտ, գեղարվեստական տարբեր արժեքի դործեր
են և տարբեր ձեերով ու հնարքներով էլ գրված են՝ չկրկնելով
միկը մյուսին, — այդ կնկատի և ինքը՝ ուշադիր ընթերցողը՝
կան այնտեղ գործեր, որոնց մեջ գերիշխողը ռեալիստական
ոճն է; Կան, սակայն, և այնպիսինեցը, որտեղ նյութի խորա-
պես ռեալիստական միջուկը մատուցված է ընթերցողին փոքր
ինչ սարձր ուսմանտիկական շնչով և գրանից բխող պատկերավոր
ու ձոխ լեզվով: Դա հնարքավորություն է տալիս նրան՝ մի տե-
սակ լովկելով կենցաղային առօրյայից՝ ոտք դնել խոհական
ընդհանրացումների աշխարհը: Եվ, ինձ թվում է, որ դրանք
ահա նրա լավագույն գործերն են և որ հենց այդ ուղղությունը
է, որ նա պիտի առավել խորացնի իր սեփական ոճի և դեմքի
ստեղծագործական հետազա որոնումները:

Բայց դրանք ապագայի հարցեր են, և դրանց վերջնուկան
լուծումը տեսական ժամանակ է պահանջում: Եվ, ուրեմն, այսոր
ավելորդ են գուշակություններն ու կանխորշումները: Ինձ այս
պահին առավել հետաքրքրում է նրա գործերի խացական
կողմը-այն, թե իդեաների ինչ սիստեմով է ներկայանում մեզ
հեղինակը և թե՝ ինչպես է ներկայացնում ընթերցողին այն
ամենը, ինչ նա ամենաէական ճշմարտությաւններն է համա-
րում՝ մարդուն հաղորդելու, նրան սդեղնչելու համար:

Ահա— «Հովաննի վերջին խոսքը»:

Ըստերցողը կարող է տարակուսել, թե՝ ինչմեռ, խոսք բա-
նալով Արամ Գրիգորյանի նովելների մասին, ես՝ իբրև քննու-
թյան առաջն օբյեկտ՝ հիշատակում եմ մի գործ, որ պատկա-
նում է նրա «Լեզենդներ» շարքին: Կարող էի, հարկավ, հան-
գամանորեն բացարել նման վարժունքս: Սակայն, երբ ըն-
թերցողը կկարգա այս գրքույիշը, նա ինքն էլ կտեսնի, որ Արամ
Գրիգորյանի լեզենդները տարբերվում են մի շարք այլ հեղի-
նակների: Գրած լեզենդներից հենց նրանով, որ նրանց գրական
մշակումը փաստորեն տրված է իր իսկ ձեռքով գրած նովելնե-
րի ոճով ու ժանրով: Այնպես որ գրանց տարբերությունը թե-
րևս սոսկ թեմատիկ է և մասամբ էլ վերաբերում է դուցք նը-
րանց լեզվական ֆակտուրային միայն: Այս հանդամանքն էլ
համարավորություն է տալիս ինձ քննարկել դրանք միասնաբար:

Անցնենք նյութին:

Շերունի Հոմանքը՝ ջահել էր թվում, որովհետեւ նրան էր պատկանում Սիավուշը — չտեսնված գեղեցկության տեր արարական նժույզը։ Նա հպարտ էր և առույդ, և բոլորը նրան նախանձում էին — և նըագոտած դանձին, և նրա ծերության օրերի այդ ջահելու ջահել գեղեցկությանը։ Նա կարող էր գոյն հարեւել ամեն ինչ, անգամ իսկ իր կյանքը, սակայն, հրաժարվել Սիավուշից նա չէր կարող երբեք։ Եվ ահու մի օր ստոր խաքեռությամբ զողաշան նրա չքնաղ նժույզը։ «Եվ հանկարծ ապրած տարիների զաժան ծանրությունը մեկից իջավ Հոմանի ուսերին, բաշեց զեսլի հողը, մութն ու մլարը պատեցին աչքերը...»։

Ուրեմն՝ մարդը — Մարդ է և գեղեցկութեն ջահել է, քանի նրա հոգում ապրում է այդ զեղեցկի բարձր իգեալը, երբ նրա հոգին այդ ոգեսրիչ դանձի տերն է։ Մարդ ևս ուզում լինել, — ձգտիր զեսլի բարձրը, զեսլի ազնիվն ու զեղեցկիվ, ունեցիր մի սրբություն, որ քեզ համար կյանքիցդ էլ թանկ լինի, — և գու ջահել կմնաս և հոգով հպարտ ու անընկնելի։ Դա խորապես ճշմարիտ միտք է։ Բայց արդյո՞ք միայն մարդը։ Փորձենք ավելի խորը գնալ։ Ահա և ինքը՝ նայ ժողովուրդը — զարերի մթին ձորերից դեպի լույս գաղաթները մագլցող այդ հին ու բարձաշարք ժողովուրդը։ Հազիվ թե աշխարհիս կուտուրական ազգերի մեջ կա այսօր մեկ ուրիշը, որ նրա չափ ծեր լինի իր հասակով։ Բայց նա ունեցել է միշտ իր Սիավուշը — իր հոգու նժույզը — ազատության, երջանիկ ու զեղեցկիկ կյանքի իր չքնաղ իդեալը, և ոչ մի չար ուժ չի կարողացել կողովտել նրան, կորդիլ նրա սրտից այդ նվիրական երազանքը, — և այսօր, ահա՛, նա աշխարհիս ամենաջահել ժողովուրդներից մեկն է։ Ի ստեղծարար եռանդով և ավելի վեր բարձրանալու անկոտքելի կամքով։

Ահա մեկ ուրիշ նովիկ — «Թաթիկը» — մի փոքրիկ շնիկի խորապես ողբերգական պատմություն։ Հետաքրքրական է այս երկի հղացումը։ Մարդուն, աշխարհը, կյանքը, վատն ու ճշմարիտը, այս ամենը տալ անբան կենդանու անմիջական ընկալման միջնորդվ, զիտել նրա զարմացած աչքերով։ Սա ինարիկ մի ննարք է միայն (որին, ի գետ, դիմել են ժամանակին և Տոլսոտյը — «Խոլատոմեր» և Զեխովը — «Կաշտանկա» և ուրիշները)։ — մի

հնաբք, որի միջոցով՝ մեր հեղինակն ուզում է ցույց տալ, թե
որքան անմարդկային, անբնական և անմիտ ու ինչպահեղ էր
այն ամենը, ինչ արին մեր արդար հոգի վրա Փաշիստական
ճիվաղները։ Բարբարոսությունն այնքան եր գիվային, որ
անբան կենդանին անգամ ահավոր ցնցում է ապրում։

Բայց էականն ու գլխավորը նովելի մեջ, ինարկե, այս
չէ։ Էականը — խորին հրճվանքն է այն գիտակցությունից, ոք
իսկական Մարդն անհաղթ է։ Նա, ով կարողացել է մարդկայ-
նություն ներշնչել նույնիսկ շանը, սերմանել նրա մեջ միքո-
և անգավաճան հավատարմության վեն զգացմունքներ, — նա
անմահ է՝ ոքքան էլ ուզեն վնասել նրան աշխարհի բոլոր սև
ուժերը։

Փոքրիկ շնիկի աչքերի առջեկորդական վում էր ողջ աշխար-
հը, խորտակվում էին ժամանակի ընթացքում ձեռք բերած նրա
բոլոր հասկացողությունները՝ արդարի և օրինականի մասին։
Ուրեմն՝ մահն է զալիս և ոչնչացումը — և թվում էր, հենց դա
է, ինչ որ կա աշխարհում։ Եվ ահա, արդեն խավարում են Թա-
թիկի ցավագնորեն զարմացած աչքերը, նա ողիով մեռնի՝ ի-
րեն այլևս մեռած թվացող աշխարհում և հենց այդ պահին,
ահա, նա զգում է իր նախկին տիրոջ ծանոթ ու հարազատ հո-
տը և — տեսնում է նրան, — նրան, որ վազուց արդեն չկար, գնա-
ցել էր այն օքից, ինչ մեր հոգի վրա սկսել էին կատարվել
չտեսնված բաներ։ Նա եկել վերադաբել էր — և ահա, առաջ-
վա նման, իր կոշտացած ձեռքով շոյում է մահացող Թաթիկի
գլուխը։

Ուրեմն կյանքը կա, կա Մարդը, նա չի մեռել
կա ուրեմն և՛ սերը, և՛ զգվանքը, և՛ արդարությունը։

Աշխարհն, ուղեմն, չի կործանվել, քանի գեռ ապրում է
լավի համար պայքարող, արդարը կառուցող, սիրող Մարդը, սո-
վետական բաղաքացին։

Սոված և հյուծված Թաթիկն այժմ հանգիստ կարող է
մեռնել, — վերադառնում էր նորից այն, ինչ կոչվում էր
կյանք։ Ամեն ինչ զալիս, իր տեղն էր ընկնում։ Իսկ նրանք,
որոնց մարդիկ «Փրկիցներ» էին անվանում, — զատապարտված
են կործանման։

Ահա թե որն է այս նովելի արժանիքը։ Նա կրկին անգամ դրավագբռում է մեր մարդկանց անհուն ատելությունը դեպի տքն սև ստոր ուժերը, որոնք ուզում եին սպանել ստեղծագործ խաղաղությունը և օրինական կյանքը։

Մի երկու խոսք ել «Ո՞րն էր արդար» նովելի մասին։

Թեմայի և սյուժեի տեսակետից այս գործն, իհարկե, նոր համարվել չի կարող հայրենական պատերազմից հետո սյուժեային այս հանդույցով գործեր դրվեցին— ամուսինը վերադառնում է ռազմաճակատից և իմանում է, որ կինը չի սպասել իրեն— ամուսնացել է ուրիշի հետ։ Սակայն այս նովելի արժանիքը, ուրիշ մի շարք երկերի համեմատությամբ հենց ան է, որ այստեղ հեղինակին հնատաքըքը բնավ այդ դեպքը չէ ինքնին և ոչ ել այն, որ դա լինի նման գեղաքերի վարդանաներից մեկը։ Հեղինակը լավ զիտե, որ մեր սովորական մարդկանց մաքուը և շիտակ փոխհարաբերությունների համար դա բնորոշ ու տիպիկական չէ— և դա չէ նրան զբաղեցնողը։ Նրան զբաղեցնողն անցյալի հին և այլանդակ բարքերի այն արգահատելի մնացուկներն են, որ երբեմն երևում են և այսօր։ Հեղինակի նոլատակն է խփել այդ մնացուկներին, մի անգամ ևս օգնել նոր մարդուն՝ եթե նա սայթաբեր է՝ զդալ ու զիտակցել իր և հին աշխարհի մարդու միջև եղած տարբերությունը, խսկ դա սովորական գրողի պարտականություններից մեկն է։

Մի նովել հս— «Հանդիսումը»։

Զինվորական քննիչ Համբարձումյանը ճակատում հարցաքըննում է զերի ընկած մի գերմանացու։ Եվ նրան տարօրինակ է թշվում, որ գերմանացու զեմքը կարծես թե իմարկատած լինի։ Հետպահ հարցաքննությունից պարզվում է, որ, իբրև, այդ գերմանացին մեր հողի վրա եղած ժամանակ վիրավսրված է եղել զեմքից, և ապա, ճարպիկ մի օպերացիայի միջոցով, կատարել են մի քան, որ կոչվում է տրանսպլանտացիա, այսինքն՝ նոր մեռած մարդու կաշիվ մի կտորով կարկատել են նրա դեմքն այլանդակող այդ վերքը։ Դա սովորական մի բան է, բայց ինչ է ուզում ասել հեղինակն իր այս նովելով, որն է նրա իդեան։ Խորը, բայց և լուսավոր տրադիզմով լի այսպիսի մի հուտվածով է վերջանում այդ նովելը, — «Համբարձումյանը նայում

էր նրա դեմքին, որի վրա, որպես գեղեզմանում, հանդչում էր իր տանջաման արած աղջկա մարմի մի մասը...»:

Կենտրոնացե՛ք մի պահ՝ այս մարդի վրա:

Անմահ և անսպանելի է սովետական մարդը՝ մարդ ներուց: Նրան խոշտանգելով անվամ, գաղան ֆաշիստը անզոր է նրա առջև:

Ստեղծագործ մարդն է բարձրի և գեղեցկի գաղափարն իր մեջ կը ողը: Դեղեցկությունն ու ճշմարդտը սպանել չե՛ լինի: Այն կողուատել և այլանդակության դեմքին: Կարեկատան անել չե՛ լինի, իսկույն կ երեա, և մարդը կաեմնի այդ կողոպատվածը, որ շողջողում է նույնիսկ իրեն անվայել ու անհամապատասխան տեղում, ինչպես թանկագին գոհարը՝ աղբակույտում, և կոչնչացնի ստօր կողոպատչին, որ մաքուր մնա մարդու գեղեցկությունը՝ մարդկայնության աշխարհում:

Ահա՝ այդ նովելի իդեան, և — կարծում եմ — այդ խորը միտքն արտահայտելու համար ո՛չ միայն կարելի էր այսպիսի հանսովը սյուժե վերցնել, այլև՝ պետք էր այդպես վարվել:

Դովելի զգուշավորությամբ է մոտենում Արամ Գրիգորյանը նոր մարդուն: Դա չե՞ որ մեր գրականության «Թնդրոց խնդիրն» է: Եվ նրա նովելներում սովետական մարդիկ՝ սկսած փոքրիկ Միշայից («Թաթիկը») մինչև Համբարձումյանը («Հանդիպումը»), Շահնամերուին («Ա՞րն էր արդար»), Լեոնը («Կյանքի ճանապարհը») թեև գծված են առայժմ առանց նրանց լրիվ կերպությունում տալու մեծ հավակնության, բայց ճշմարդացի են արդին, անձնազոն, լրջախոն և հայրենասեր:

Մոռում է, որ Արամ Գրիգորյանն առավել համարձակությամբ մոտենա նոր մարդու բարձր կերպարին, ավելի խոր գծերով կերտի նրա պայծառ դեմքը: Դա նրա անհետաձգելի խնդիրն է: Ավելին,՝ զամեր կյանքի հրամայական պահանջն է:

Առանձին տեղ են բննում Արամ Գրիգորյանի «Լեկենդ-ները», որտեղ նրան դարձյալ գրավում և խոհական մղումներ է տալիս մարդկային հոգու անհատակ խորությունը, նրա ապրումների բարդությունը: Այդ լեզենդները գրված են սեղմ, առանց ավելրդաբանությունների, բայց կա նրանց մեջ այն հաճելի պարզությունը, որ զարմանալի հստակ և դյուրամատչելի է դարձնում նրանց միջոցով հաղորդվող մաքի խորությունը:

Դրանց մեծ մասը մեր ժողովրդի մեջ ապրող՝ իմաստուն առևլյթների և առանպելանման պատմությունների գեղարվեստական վերամշակումն է՝ անցկացված զրողի ներքին լաբորատորիայով, և այդ վերամշակումն այնքան է ստեղծագործական, որ լեզենդներն անպայման կարող են մ' օրիգինալ, և թարմ գործեր համարվել: Գնահատելի է այն, որ հեղինակը խորին ակնածանքով ունկնդիր է ժողովրդի իմաստության ձայնին, և նըանց մեջ է որոնում հաստատումն իր ստեղծագործական իդեաների: Թանի կա այդ օրգանական կապը, և լլինի նաև վըստահությունը, որ Արամ Գրիգորյանի գրական օրիգինալ շնորհը կաճի և կիորանաւ:

Ելտակ ճանապարհի վրա է կանգնած Արամ Գրիգորյանը: Դժվար ճանապարհով է գնում նա: Սա կարող է ապացույց լինել, որ նա վստահ է իր ուժերին, իսկ ստեղծագործական այդ արդարացված վատահությունը արդեն գրավական է, որ նա իսկական զրող է, և զրող է նույնիսկ այն դիպքում, եթե զեր որոնումների մեջ է, և եթե դեռ անընդհատ ռճական փորձեր է կատարում:

Այս փոքրիկ գրքույկով մեր սովետահայ գրականության մաքն է մանում ստեղծագործական մի դիմք, որից այսուհետև մեր ժողովուրդն իրավունք կունենա պահանջել ավելին, քան նա տվել է մինչև այսօր, որովհետև այն, ինչ նա այսօր է տալիս իր ժողովրդին, արդեն իսկ պարտավորեցնում է հեղինակին առավելագույն չափով:


ՑԻԳՐԱՆ ՀԱՆՈՒՄՑԱՆ


(Արվ. վաստ. գործիչ)

Երևան. 1946. մայիս

ଶ୍ରୀମଦ୍ଭଗବତ







ԿՅԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Հարուստ էր Շարան:

Չուներ ոչինչ պակաս, բայց կյանքը փախչում
էր նրանից:

Հաղիվ էր լրացել երեսուն տարին, մազերը գեռ
ու էին, և չկար նշան ծերության, բայց կյանքը հեռ
ուանում էր:

Օրերի հետ թուլանում էին ձեռքերը, և ուժն էր
պակասում:

— Միթե ծերություն չտեսած պետք է մեռնեմ
վաղաժամ, — խոսեց Շարան և կանչեց մարդկանց,
որ փրկության դուռ բանան:

Եկան, խորհուրդ արին միաբան և ասացին նը-
րան:

— Կառուցիր մի տուն, մի պալատ վսեմ, որ
աշխարհը տեսած չլինի, ապրիր այնտեղ և կյանք
կունենաս:

Հրամայեց Շարան, և նրա կամքով բոլոր կող-
մերից հոչակավոր վարպետներ եկան:

Պալատը խոյացավ մեծաշուք: Պատերը բարձր-
էին և ոսկեզօծ, հատակը լույս էր շողարձակ, խե-

սյուները, որ ամուր էին, աղամանդից էին պատրաստված:

Զկար ոչինչ թերի. խոյակներ կային, որ բնուշաբանն էլ չեր տեսել: Բայց կյանքը դարձյալ փախչում էր:

Ավելի էին թուլանում Շարայի թերը, պակասում էր նաև աչքերի լույսը:

— Գուցե թե պալատս կատարյալ չեղավ, — մտածեց Շարան ու կանչեց երկրի ընլոր գիտուններին և ասաց. — տեսեք և ասացեք ինձ, աշխարհում կա՞ իմ՝ պալատի նման մեկ ուրիշը... Իմ պալատը թերություններ չունի՞ արդյոք:

Տեսան, հրճվեցին գիտունները և ասացին. — Զկա այսպիսի պալատ տշխարհի վրա: Զկա, չի եղել անթերի է նա և աննման:

Մակայն մեկը միայն, գիտուններից ամենասփորձվածը, այսպես խոսեց. — Պալատդ, Շարա, անթերի է, իրավ, բայց սյուներ չունի:

— Սյուներ, — զարմացավ Շարան. — չե՞ս տեսնում, իմ պալատի սյուները աղամանդից են և ամբակուու:

— Տեսնում եմ, — պատասխանեց ծերունին և ասաց. — պալատդ, Շարա, սյուներ չունի... Դու հայր և մայր ունեիր ծերացած, բայց զուրս արիր նրանց տնիցդ, քո ծեռքով քանդեցիր քո տան սյուները:

Եվ չգիտե՞ս միթե կյանքի գաղտնիքը, — ով չի հարգում ծերությունը, ծերություն չի տեսնի:

Լսում էր Շարան և լաց էր լինում, բայց ուշ էր արդեն:

Կյանքը հեռանում էր...



ՀՈՎՆԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԸ

Մարտշ քաղաքում մի մարդ էր աղբում՝ անուս-
ուր հովնան:

Հովնալին այդ մարդու, ինչպես լույսը երկնքի,
առարածվել էր աշխարհից աշխարհ:

Այս ժամանակ չկար մեկը, որ լսած զիներ քաջ
հովնանի հոչակափոր նժույգի մասին: Սիավուշ էին
առաւմ նրան: Սիրուն էր Սիավուշը, ավելի սիրուն,
քան մայր եղնիկի աչքերի մեջ իր ձագուկի պատ-
կերը: Բարակիբանն էր նա, նուրբ ու ոլացիկ էր հը-
րաշալի պարանոցը, և սրատես էր, ավելի սրատես,
քան հավերժական բարձրությունների բնակիչ ար-
ծիվը:

Ի՞նչը կարող էր հաղթել Սիավուշին, եթե
առաջ նետեր կուրծքը, ծով աղիքի նման փրփրագեղ
բաշը տար քամուն: Երկը ոչ մի նժույգ չէր կարող
մրցել Սիավուշի հետ: Նայում էր երկնի աստղե-
քին և թոշում էր խելանեղ փոթորիկներից էլ արագ:

Փայլուն զույն ուներ, ուկեփուն էր, ու թվում
էր, թե հեքիաթի արևազուն նժույգն էր իջել հողի
վրա: Այգակես էր Սիավուշը՝ աղնիվ հովնանի հոչա-
կափոր ձին:

Եվ բարի էր Հովնանը, ճշմարտասեր, ինչպես
բոլոր իսկական կարիքները: Վաղուց արգեն սպի-
տակն էր իջել իգիթի մազերին, բայց էլի հաղթող
էր, քաջ և կորովի: Ճշմարիտ է, ծերացել էր կըտ-
րիճը, սակայն մնացել էր թարմ, որպես իսկական ն-
րիտասարդ, և սառը ձյունը գեռ չէր իջել նրա հոգու
գարունների վրա:

Ու մի անդամ, վերապառնալով հեռուններից, Մաբա-
շի ճանապարհին, մտավ Դիարի շուկան: Հովնանը նըս-
տել էր Սիավուշին և հպարտ նայում էր շուրջը: Շուկա-
յում եղած մարդիկ նախանձով էին նայում ծերացած
իգիթին և նրա ձիռն: Այդ ժամանակ էր, ահա, որ մեկը
բռնեց Հովնանի նժույզի սանձը, մյուս ձեռքը վեր պար-
զեց և աղերսանքով ասաց. — Օ՛, մեծ իգիթ, կտամ իմ
կարողությունը, կտամ աժենն ըան, ինչ սիրտդ կա-
մենա, միայն թե զիջիր այս ձին, տուր ինձ:

— Է՛հ, եղբայր, ինչ ուզում ես պահանջիր, չեմ
մերժի, բայց այդ՝ անկարող եմ, հայրս ինձ սսել է՝
երեք բան կյանքում մի զիջիր ուրիշի՝ կինդ, ձիդ և
սուրզ:

Այսպես էր բացատրում ազնիվ Հովնանը, բայց
իզուր, անձանոթը չէր բարձրանում և աղաչում էր
զիջել նժույզը:

Սակայն Հովնանը իր որոշման վրա հաստատ
մնաց:

Նույն այդ պահին հարձակվեցին կողոպտիչնե-
րը, սրեր շողացըին և ուզեցին կովով խլել Սիավու-
շին:

Նրանք ձին խնդրող մարդու բարեկամներն էին:
Բայց այսուղ էլ ավագակները հանդիպեցին.

քաջարծիվ Հովնանի հզոր սրբն, որը մի կողմ վասնեց նրանց և ճանապարհ բացեց, իսկ Սիավուշն առատեց իր տիրոջը:

Այդպես էր հոչակալոր ձին: Քանի՛ քանի՛ անգամ իր ծերացած տիրոջը նա ազատել էր վտանգից: Իսկ Հովնանը, նա, որի ձիու սմբակները թրջվել էին մեծ հաղափնյի բոլոր կողմերում վազող ջրերի մեջ, նա, որ կարմիր արեի տակ մազերն էր սպիտակացրել՝ ճշմարտություն որոնելով, ինարկե, չէր գիջի:

Այդպես էր նրա կյանքի օրենքը:

Այդպես էր ապրել նա:

Եվ թաշում էր Սիավուշը, նայում էր գեղի ամպերը, ու թվում էր, թե հենց հիմա թեեր է ստանալու և, արեի կարուավ, սպիտակահեր իր տիրոջը տանելու է վեր, հեռո՛ւհեռուները:

Հոգով հրճվում էր Հովնանը: Զէ՞ որ նա փրկեց իր ձիուն, իսկ ձին՝ իրեն:

Այդպես էր այն քարեկամությունը, որ կապում էր իրար Հովնանին և նրա նժույզին:

Եվ զնաց, հեռացավ Հովնանը:

Այնտեղ՝ քաղաքի շուկայում մնաց սկզբում աղերսող, իսկ հետո՝ կողոպտիչ մարդը՝ Մնաց՝ ձիու կարուար սրառում, ձեռքը ծոցին:

* * *

Վաղ առավոտյան իգիթը շարունակեց իր ճանապարհը:

Նա զնում էր գեղի Մարաշ՝ հայրենի քաղաքը: Նոր էր բույրը, բացվել: Աշխարհի գեղեցկունին՝ հը-

բավարս արել ձեմում էր երկնակամարտում, իսկ բը-
նությունը երգում էր քաղցրախոս բլրուկների սիրով:

Նժույզի վրա նստած ասած էր սուրում Հովհա-
նը: Եվ հանկարծ, ճիշտ ճանապարհի մեջտեղը, նը-
կատեց մի մարդու, որ վայր էր ընկել: Հովհա-
նը կանգնեցրեց ձին, իջավ ցած, մոռեցավ գետին
տապալված մարդուն և նկատեց, որ խեղճ օտարա-
կանը խոշտանգված էր ու ծանր վիրավորված:

— Ո՞վ է քեզ այլպիս արել, — հարցրեց Հով-
հանը:

Այն ժամանակ, հաղիվ շուրթերը բանալով, այս-
պես խոսեց վիրավորը.

— Ճանապարհորդ եմ, եղրայր, օտարության
մեջ տարիներ մաշեցի, երեխաներս սովոր մեռան,
փող հավաքեցի, վերադարձա ողարտքու տալու, ողա-
տիվո՝ կնոջս պարտապանների ձեռքից ավատելու
համար, բայց ահա, հարձակվեցին ավագակները, վի-
րավորեցին, տարան: Օգնիքը ինձ, անծանոթ եղրայր,
տար ինձ իմ հայրենի քաղաքը, տար ինձ Մարտ:

— Ուրիշն խոշտանգված օտարականը ևս Մա-
րտ քաղաքից է... Մարտ 2, Մարտ 2, ինչե՛ր ևս տե-
սել դու, — վշտացած հառաջեց ծերունի կարիճը:

Մարդն ընկած էր գետնին, վիրավոր ու անօդ-
նական, պետք էր օգնել նրան: Եվ Հովհանը զգու-
շությամբ զրկեց վիրավոր մարդու դլուխը, դորովա-
գութ նայեց խեղճի գեմքին, ապա, վեր բարձրացնե-
լով նրան, զրեց իր ձիու վրա:

Վիրավորը անքում էր վերքերի ցավից: Դժվա-
րությամբ նստեց ձիու թամրին և ներքե խոնար-
հելով հոգնատանջ գլուխը հաղիվ կարողացավ բռնել
նժույզի բաշից:

Եվ այդպես, առաջ շարժվեցին՝ օտարականը Սիավուշի վրա, իսկ Հովնանը՝ հանգարա քայլելով: Գնում էր Հովնանը, և դառն մտորումները փոթորկում էին նրան:

Հետո ցանկացավ ծխել, դոտկատեղից հանեց ծխամորձը, հանեց նաև ծխախոտի քարկը, ապա, դառնալով Սիավուշի վրա նստած մարդուն, մեղմ ձայնով ասաց:

— Բոնիր սահնձը, եղբայր իմ, իսկ ես ծխամորձս թութունով լցնեմ, բոնիր, թե կարող ես:

Վիրավորը կռացավ, Հովնանի ձեռքից հազիվ կարողացավ վերցնել սահնձն ու կրկին ցավատանջ մարմինը հակեց ներքեւ:

Տնքում էր խեղճը:

Իսկ Հովնանը ծխում էր, քուլաները բարձրանում էին վեր և շղարշի նման տարածվում ունեղոծ օդում: Գնում էր կարիճը և մտածում:

— Որքան է փչացել աշխարհը, խլում են մարդու պատիվը՝ կնոջը, պանդուխտներին ավաղակներն են կողապտում... Ուրեմն, որտե՞ղ է ճշմարտությունը՝ ո՞ւր է գնում մարդկությունը:

Սյուպես էր մտածում Հովնանը և հույզերի մեջ խորասույզ արագացրեց քայլերը, իսկ Սիավուշի վրա նստած մարդը բավական ետ էր մնացել արդին:

Եվ հանկարծ Հովնանը լսեց Սիավուշի ոտքերի ձարյնը: Զին դոփում էր հողը և թոշում:

Սլանում էր հրաշք ձին: Նրա թոփչքին կայծակըն անգամ չէր կարող հասնել:

— Վա՛յ, վա՛յ, փախցրեց հիվանդին, քարերին:

կտա, կսպանի մարդուն... Կանգնի՛ր, եղբա՛յր իմ
անձը քաշի՛ր, մոտեցի՛ր ականջին՝ Սիավուշ առա՛,
անձը քաշի՛ր, եղբա՛յր իմ, — բզավում էր Հովնանը
և վագում:

Ու մեկ էլ նկատեց, որ օտարականը ձիգ նստել
էր ձիու մեջքին, ամրորեն բռնել սանձն ու ասպան-
գակում էր:

Նոր միայն հասկացավ Մարաշ քաղաքի հին-
քնակիչը, որ անծանոթը կեղծել էր:

Նա վիրավոր չէր, նա ինքը Դիարի շուկայում
հանդիպած այն մարդն էր, որ խնդրել էր ձին...

Ուրեմն նա խարեց:

... Եվ հանկարծ, ապրած երկար տարիների դա-
ժան ծանրությունը մեկից իջակ Հովնանի ուսերին,
քաշեց զեպի հողը, մութն ու մլարը պատեցին աշ-
քերը,

Ծերությունը, թե վիշտը՝ հանկարծահաս փոթոր-
կի նման ալեկոծեցին կտրիճի սիրտը... Պոկվում
էին նրա կենաց ծասի արմատները:

Նա և՛ խարված էր, և՛ զրկված...

Խորտակված էր մարդը, բայց հավաքեց իր բո-
լոր ուժերն ու բարձր ձայնով բղավեց.

— Կանգնիր, այ մարդ, լսիր վերջին խոսքս,
միւնույն է, ձիս տարար՝ տմբ, ուրեմն լսիր վեր-
ջին անդամ:

Անծանոթը կանգնեցրեց ձին:

Նրանց բաժանում էր բավական տարածություն։
Սիավուշը ծառս եղավ, փոթորկեց, ուսներով քանդեց
հողը... Ու նոր միայն տեսավ իր տիրոջը, հեռավոր-
գաժանված, որպես անցած պատկեր:

Փախստականը կամենում էր լսել Հովհանի վերջին խոսքը:

Եվ այն ժամանակ Հովհանն ասաց.

— Լսեր, այ մարդ, տարար ձիո՞ւ տար, միայն խնդրում եմ աշխարհին չպատմես, թե ինչ ձևով կատարեցիր այդ, որովհետև այն ժամանակ մարդիկ հիվանդներին անգամ չեն հավատա, չեն խղճա:

1938 թ.





ԱՐՑՈՒՆՔՆԵՐԸ

— Բնության ձշմարիտ օրենքով դնումեն ծերերը,
և երիտասարդությունն է դալիս, որ հավերժական մնա
կյանքի դարսունը:

Եվ քաջերի սերունդը քաջերն են լինում, որ
պեսզի մշտապիս ազատ մնա հայրենի աշխարհը:

Ուրեմն ընկածների համար հարկավոր չէ սըս-
տակեղեք սուրդը անհույս, որ կյանքն է մաշում:

Նրանց գործն է արդար:

— Այսպիս ասաց մեր ժողովուրդը և ստեղծվեց այս
լեզենդը, որ մենք կարգանք:

* * *

Զեր ամուսնանում հայոց սպարապետը:

Արդեն անցել էին զորավարի քառասուն տարի-
ները, սակայն կնոջ անուն գեռ չէր տալիս:

Եվ հավաքվեցին երկրի ծերերը, խոնարհությա իր
գնացին սպարապետին ի տիս ու ասացին.

— Քաջ սպարապետ, երբ դու չլինես, ո՞վ է բարձ-
րացնելու սուրդ, որ անունն է քո, ժամանակ է մրդ,
որ ամուսնանաս:

Սպարապետը լսեց ծերունիներին, մտածեց եր-
կար և ասաց.

— Ճշմարիտ եք, հայրեր! Կամուսնանամ ան-
շուշտ, բայց պայման ունեմ: Ես կամուսնանամ այն

աղջկա հետ, ով այժմ յանից իսկ կպարտավորվի լաց չլինել, եթե մեր որդին, որ կլինի անշուշտ, սպանվի կովում: Թող այս լավ գիտենա իմ հարսնացուն, և գիտենա նաև այն, որ հաստատ է իմ որոշումը — արդունքներ չլինեն, այլապես դաժան կլինեմ: Գնացեք, ուրեմն, բարեկամներս, և եթե գտնվեց մեկը, կտամուսնանամ անշուշտ:

Բոլոր կողմերում հայտնի դարձավ սպարապետի⁹ որքան զարմանալի, նույնքան տարօրինակ պայմանը:

Շատերը վարանեցին, շատերն անքուն գիշերներ լուսացրին և միայն դեղեցիկ Տաթեղիկն էր, որ խոնարհելով չքնաղ դլուխը, հաստատ համաձայնություն տվեց:

Նա, որ պաշտում էր զորավարին, ավելի հմայիչ դարձավ, քանզի անվերադարձ սիրով սիրվեց:

Ամուսնացավ սպարապետը:

Շուքով եղավ հարսանիքը:

Եվ ժամանակին, ինչպես երջանկության առավոտ, ծնվեց սպարապետի որդին, որ հոր կամքով Արամ կոչվեցավ:

Ու նորից քարավանների նման անցան տարիները: Բանի՝ քանի՝ անդամ հաղթանակով պսակվեց հայոց սուրբ: Բարձրագահ շողաց սպարապետի համբավը:

Այլպես եղավ: Բայց ժամանակի հետ ձյունը շատացավ և սպիտակը տիրեց սպարապետի դլուխը: Եկավ ծերությունը:

Նա եկավ նաև Տաթեղիկի համար, և նա, որ ցողի նման թարմ էր, սկսեց իր կյանքի աշունը:

Սոկայն հոգով ջահել մնացին սպարապետն ու իր

կինը։ Արամը, որ նրանց անգլանիկ զավակն էր, արդպես բոլորում էր իր կյանքի քսան և հինգ տարին։ Նա, որ հորից ժառանգել էր պատերազմող մարզուերկաթյա կամքը, պարթե էր, ուժեղ, իսկ մորից նրան էր անցել սեորակ աչքերի անմար կրակը, որ հմայքով էր պսակում իրեն։

Սպարապետը, որ պաշտում էր որդուն, պատրաստվում էր մեծ ուղախության։ Այդ մասին խանդադատանքով նա խոսում էր Տաթևիկի հետ, որոնելով հարմարին մի հարանացու, երբ նորից երևաց թշնամին։

Սպարապետի հետ զինավառ պատերազմ գնաց նաև Արամը։

Կյանքի ու մահու կոխվ բոլբոքվեց։

Եվ վերջին գրոհն էր այն, երբ չար թշնամին գետին տապալեց Արամին։

Արեն անգամ սև հագավ ու թվաց, թե ավելի ժերացավ սպարապետը։

Այլևս չկար Արամը։

Բայց հաղթեց հայոց զորքը, և այդ էր ճշմարիտը։

Երբ վերագառնում էին, Արամի արնաշաղախ զիակը սպարապետն էր տանում։ Նրա սպիտակ մոռուքը, որ իջնում էր կուրծքն ի վար, ասես ծածանվում էր վշտահար, բայց չէր լավս հայրը։ Մեծ քաղաքը սպում էր բոցակորով Արամի մահը։ Իսկ մայր տաճարի զանգակները թափում էին հնչուն արցունքներ։

Բոթը հասավ Տաթեվիկին։

Դուրս վազեց թեատրած, ընկավ ծնկներին, և այն է՝ արտասվելու էր բարձրադաշտակ, երբ նկատեց

սպարապետին՝ խիստ ու խորհրդավոր... Ու հիշեց հին
պայմանը:

Լուս. սիրալը կրակն ընկալ ահավոր ցավի,
բայց արցունքի կաթիլ անգամ չերևաց աշքերում:

Սպարապետը քաջամարտիկ Արամի դիակը
չհանձնեց հողին: Նրա մարմինն ամփոփեցին մար-
մարե զամբարանում:

Եվ ամեն օր, վաղ առավոտյան, սպարապետը
զնում էր զամբարան:

Երբ ներս էր մտնում զորավարը, հրաշալի մի
խորհրդով արթնանում էր Արամը, մի պահ խոսում
էր և նորից հանգչում խաղաղ:

Սպարապետը տուն էր զառնում ու նորից գնում
զորքերին ի տես, որ պատրաստ լինեն:

Մեկ օր էլ, ինչպես ամեն մի օր, երբ զորավարը
ցանկացավ տեսնել որդուն, մտավ զամբարան, այլև
չարթնացավ Արամը:

Եվ շտապով տուն դարձավ նա, դառնությամբ
նայեց կնոջն ու ասաց.

— Հիշեր, Տաթեվիկ, երբ ամուսնանում էինք,
ինչ էր մեր պայմանը, իսկ զու այսօր լաց ես եղել
և ինչքա՞ն արցունք ես թափել զու...

— Ճշմարիտ ես, տեր իմ, բայց ինձ էլ լսիր,
զու ամեն օր գնում ես զամբարան, հանգստանում
ես, իսկ ե՞ս, — մա՞յր եմ ես, թե ոչ կացել եմ, այս,
սակայն ինչպե՞ս հասկացար, հաղիկ յոթը կաթիկ
կլիներ իմ արցունքը, զգացի որ կդաս, — խոսեց
Տաթեվիկն ու սպասեց:

Իսկ սպարապետը դառնությամբ ասաց.

— Յոթը, ասացիր... Լավ, Տաթեվիկ, յոթն օք

հետո քեզ կտանեմ դամբարան, և կտեսնես դու. թե
ինչու չպետք է արցունքները թափել:

Երբ կրկին յոթն օր անցավ, սպարապետը Տաւ-
թեփիկի հետ գնաց Արամի դամբարանը: Հանգարա-
բացվեցին գոները, մայրը տեսավ որդուն: Նա նույնն-
էր, բոլորովին նույնը: Բայց սարսափեց մայրը,
որովհետեւ զարհուրելի տառապանքների մեջ անքում-
էր որդին: Երկար տանջանքներից հետո միայն Արա-
մը բացեց աչքերը ու տեսնելով ծնողներին, ասաց.

— Որտեղ էիք դուք, այդ ի՞նչ էիք անում...
Յոթն օր է ահա, ես ընկած եմ արցունքի ծովերի-
մեջ և խեղզվում եմ... Հազիվ հանգստացա...»

Այսպես խոսեց Արամը և, կարծես թե դառն մի-
շավից ապաքինված, հանգիստ շունչ առավ, ու նորից
խաղաղությամբ փակվեցին աչքերը, ինչպես հանգ-
չում է մեռյալը:

Երբ դուրս էին դալիս Արամի դամբարանից,
սպարապետը դարձավ կնոջը և ասաց.

— Տեսա՞ր, աիրունիս, ահա թե ինչու հայրենյաց
և ճշմարտության համար զոհվածի մայրն արցունքներ-
չպետք է թափի: Մեծացրու մյուս զավակներիդ, որ-
մեռածը հանգիստ լինի:

Եվ ապա հողին հանձնեցին Արամի դին, որով-
հետեւ հողն է մարդու վերջին հանգիստը:

1946 թ.





ԱՂԲՅՈՒՐԻ ՄՈՏ

Հին էր այդ աղբյուրը:
Երբ էր կառուցվել կամ ավ էր կառուցել, ոչ ոքի
հայտնի չէր:

Կար մի ծերունի, սակայն, որ ամեն առավոտ
դալիս լվացվում էր: Նրան հայտնի էին շատ բաներ,
քայց նաև ել լսում էր:

Սպիտակ հոնքերի տակից խորասույզ՝ նայում
էր աղբյուրի հոսանքի տակ, ջրի տեսական շփումից
զաղուց արդեն մաշված քարին և ասում էր.— Հին է
այս պատմությունը:

... Այդ առավոտ էլ սովորականի նման, աղ-
բյուրի մոտ եկավ ծերունին, աղա նստեց կանաչների
վրա և սկսեց թեժացնել ծխամորճի կրակը:

Երկնակամարում, ջահելության նման մաքուր
օդի մեջ, երդում էին արտուռները: Հմայված նրանց
էր լսում ծերունին, երբ գույլերը ձեռքերին աղբյու-
րին մոտեցան երեք կին:

Մեղմիկ լաբկաչով իջնում էր ջուրը: Ծերունին
գտում էր ուշակիր, իսկ մայրերն սկսեցին իրենց զը-
պուցը:

Այն մեկը, որ կկոցում էր աչքերը, որովհետեւ

կարճատես էր արդէն, զրույցը բանալով, այսպես ասաց.— Իմ որդին, քույրերս, աննման ձայն ունի, և նրա անունին մեռնեմ, չկա նրան հավասարը:

Իսկ այն կինը, որի ճակատին կապույտ երակներէին երեռւմ, որովհետեւ նիհար էր չափաղանց, այսպես խոսեց.— Իսկ իմ որդին, հապա ի՞մը, ահազին ուժ ունի, քար թե սեղմի, արյուն կհանի, նրա բոյին մեռնեմ, ո՞վ կա նրան հավասար:

Եվ հոսում էր աղբյուրն անուշիկ, սպասում էր ծերունին, իսկ այն մայրը, որ լուռ էր տակավին, խաղաղ էր չափաղանց և ջուր էր վերցնում:

Մի պահ հանգիստ էր առնում ջրի տակ եղած քարը:

— Հապա քո որդին, քույրիկ, չե՞ս խոսում, քո որդին հապա,— հարցըին նրան:

Բայց լուռ էր նա: Ժպտում էր մեղմ ու կարծեառնկնդրում էր աղբյուրի կարկաչին: Եվ երբ նորից հարցըին, ասաց.— Ի՞մը... Դե, ոչինչ, որդի է...:

Արեն էր բարձրանում հետզհետեւ ու երդում էին արտուտները:

Եվ այն պահին, երբ կանայք վերցըին ջրով լի ծանր գույլերը, հայտնվեցին երեք պատանի:

Մեկը երգում էր բարձր ու հնչեղ, օդն էր թընդացնում: Արտուտները վախեցան, իսկ կարճատես կինը ժպտաց գորովանքով:

Երկրորդը, որը մի հսկա էր մարմնով, ծանր քարեց էր նետում, կովում էր ժայռերի հետ, մարդիկ դարմանում էին, և հրճվում էր կապույտ երակներով կինը:

Իսկ երրորդ պատանին լուռթյամբ, բայց շտա-

աղով մոտեցավ աղբյուրին, մոր ձեռքից վերցրեց ջրով
լի գույլերը և հեռացավ անխոս:

— Հե՞յ, բարի ծերուկի, զու հո տեսար մեր որ-
դիներին,— հարցրեց կապույտ երակներովը:

— Թե տեսար մեր որդիներին, ասա, մըն է կա-
տարյալ,— խոսեց կարճատեսը: Իսկ ծերունին օդին
հանձնեց ծխի քուլաները, մեկ անգամ էլ նայեց աղ-
բյուրին, մասածեց մի պահ և ասաց.— Հին պատմու-
թյուն է... Ես այստեղ միայն մի որդի տեսա...

Էլի հոսում էր աղբյուրը, էլի մաշվում էր քարը—
և արտուաներն էին երգում, և արեն էր բարձրա-
նում:





ՍԵՎԱԴՅՆ ԵՎ ԴԱՆԻԵԼԸ

Քաջ և իմաստուն մարդ էր Սեվագան:

Նա էր, որ կովում էր չարի զեմ և հաղթում էր, որովհետեւ ընկեր ուներ:

Երկիրն ու երկիրնքը գուցե թե այնպիս ներդաշնակ չեն իրար, ինչպիս Սեվագան ու Դանիելը: Այդ Սեվագան էր, որ կարող էր զետին տապալել ուժեղ ներից ուժեղին, որովհետեւ բազուկները հաղթ էին և ամրակուռ:

Բայց նա զիտեր հաստատ, որ իր խսկական ուժը Դանիելն է, իր ընկերը: Անխախտ էր նրանց բարեկամությունը և ճշմարիտ: Արծիվը, որ ամենասրատեան է այս աշխարհում, չէր կարող այնպիս հեռուն նկատել, ինչպիս Սեվագան:

Բայց նա համոզված էր վստահ, որ իր աշքերի լույսը նախ և առաջ իր ընկերն է, Դանիելը:

Այդպիս էր Սեվագայի և Դանիելի ընկերությունը:

Այն խելքն ու իմացությունը, որ ուներ Սեվագան, աշխարհը կարող էր զարմացնել: Նա էր, որ հասկանում էր ասազերի կշռույթը, հաշվում էր շարժումն աշքեր, և այն, թե ինչ կա լուսնի վրա: Բայց Սեվագան համոզմունքով զիտեր, որ իր իմացությունն ու խել-

քը ամենից առաջ ընկերության մեջ է: Դանիելն է իր ուժը:

Եվ երեսուն տարի շարունակ, ինչպես գարնան օրենքը, կանաչ ու թարմ էր մնում նրանց ընկերությունը: Բայց մեկ անգամ տատցին Սեփաղային, որ անսպաս թշնամին կաշառել է Դանիելին, և Դանիելը պատրաստվել է սպանել իրեն:

Զհավատաց Սեփաղան: Եվ միթե կտրիձը, որ տղամարդ է, կոպանի իր ճին ընկերոջը:

Սեփաղան չէր կարող հավատալ և ինչպես հավատոր: Միթե սուս է մարդկային ուժը, միթե ճշշմարիտ չէ աչքերի լույսը և միթե զոյություն չունի խօսցությունն ու խելքը:

Չէ՞ որ այդ ամենը և այն, ինչ վեհ է ու ձշմարիտ, Սեփաղան ընկերոջ մեջ է ահսել:

Չէր կարող համոզվել Սեփաղան, որ Դանիելը կոպանի իրեն, բայց ու կասկածանքը խոսվեց նրա հանդիսաբը:

Միթե երեսուն տարի շարունակ խարված է եղել նա: Եվ եթե այլպիս է, հապա ինչպես ների ինքն իրեն:

* * *

... Եվ մի դիշեր անտառի միջով ձանապարհ ընկան Դանիելն ու Սեփաղան: Գնում էին նրանք, որ օդնության հասնեն նեղյալներին:

Զիեռ էր սաստիկ: Տերեաթափ ծառերը զողում էին մարդկանց նման: Առջեից շարժվում էր Սեփաղան և մտածում էր Դանիելի մասին, ընկերոջ մասին,

իսկ ի՞նչ էր մտածում Դանիելը, որ զալիս էր հետեւ վից — անհայտ էր:

Մեկ էլ այն զգաց նա, որ Դանիելն արագացրեց քայլերը, մոտեցավ իրեն և անսովոր հետո՝ ինչպես մարդասպանը, երբ շտապում է:

Ետ դարձավ Սեփաղան և տեսավ, որ Դանիելը ձեռքը գցել է դաշույնին, բայց դուրս քաշել չի կարողանում:

— Այդպես, ուրեմն, ճիշտ էին ասում, որ ընկերութավաճան է...

Մթնեցին Սեփաղայի աչքերը, մահվան կնճիռը պատեց նրա ճակատը, բայց լոեց տառապանքով, կանգ առավ: Սպա դուրս քաշեց իր դաշույնը, խորասույդ նայեց բոլորովին շփոթված ընկերոջը, մոտեցավ նրան և ասաց. — Ահա՛, վերցրու իմ դաշույնը, քոնը դուրս չեկավ... Այստեղ, մեր բարեկամի տանը, երբ գառը մորթեցիր, մոռացար մաքրել դաշույնդ, իսկ հիմա սառել է, կպել պատյանից... Ահա իմը, սրանով խոփիրւ.

Սյալես խոսեց Սեփաղան, իր դաշույնը հանձնեց Դանիելին և ետ դարձավ:

Դատապարտվածի նման կանգնել էր նա և մըսածում էր մարդու մասին, աշխարհի մասին և այն մասին, թե ինչպես երեսուն տարի շարունակ խարժած է եղել ինքը, իսկ Դանիելը շտապեց ձեռքը բարձրացնել... Եվ խփեց...

Փոթորկաշունչ անտառը դոռաց զարհուրանքով ծառերն օրօրվկցին վշտաբեկ... Բայց Սեփաղան դեռ սպասում էր... Նա չէր վիրավորվել:

Այն ժամանակ ետ դարձավ նա և տեսավ, որ Դանիելն ընկած է երեսն ի վայր:

Նա ինքնասսպան էր եղել. Դաշույնը խրված էր կրծքի մեջ:

Դիշերն էր իր շուրջը և անտառն էր մոնչում, բայց Սեվագան նախ ծածկեց Դանիելի գիտկը, ասկա առաջ դնաց:


Հետանում էր նա և մատծում էր. Ուրեմն ճշշմարիտ է մարդկային ուժը, ինչքը մարդու և աչքերի լույսը... Ուրեմն ինքը չի խարվել: Ճշմարիտ է, Դանիելը գալաճանեց, բայց ինքնասսպան եղավ: Ուրեմն, կա ընկերությունը, որ մարդու էությունն է:

Գնում էր Սեվագան:

Արդեն երկինքն էր ժպառում և մոռենում էր առավոտը:

1939 թ.





ՆՎԵՐԸ

Իմաստուն Արբակը, որ դիտեր հավաքերի լեզուն,
կանչեց բոլոր թռչուններին և ասաց. — Ամենամեծ
նվերը կտամ նըան, ով հենց հիմա կդնա, կքանզի իր
ըունը և կրերի այստեղ: Գնացեք, ով չփերազարձավ,
կզրկվի իմ պարզեից, իսկ ով բերեց՝ կտանատ նը-
վերու:

Արբակին լսեց գեղձանիկը, գլուխը խոնարհեց,
հապաղեց մի պահ և դնաց, հեռացավ:

Արծիվը, որ սիրում էր իմաստունին, շտապեց
ըարձրանալ լեռները, որ տեսնի իր բունը: Կոռնկը
տիտոր բարձրացը թիերը և թռավ:

Գնացին բոլոր թռչունները:

Իսկ Արբակը սպասեց:

Եվ ժամանակ անցավ:

Օք երեկո էր գառնում արգեն, բայց ոչ մի
թռչուն չէր երևում: Դատարկ էր երկնակամարը, չը-
կար և շարժում: Իսկ Արբակը՝ աչքերը հեռուներին
դեռ սպասում էր:

Եվ մեկ էլ նկատեց, որ իրեն է դալիս մի թե-
զավոր: Թռչունն այդ հոգնած էր սաստիկ, բայց ըշ-
տապում էր:

Նայում էր Արբակը և վշտացած էր խորապես:

իսկ թուունը, որ սև էր բոլորովին, ավելի էր մոտենուում:

— Շուտով լսվեց մի չար ձայն, և Արբակը տեսավ, որ եկողը ագռավին է: Շտապում էր և շուրջն էր նաև յում ագռահ:

— Առաջինը ես եկա, տեր իմ, — խոսեց ագռավը, հեաց ուժասպառ և ավելացրեց. — մի քիչ ուշացա, որովհետեւ րունս հիմնովին քանդեցի, կամքդ կատարված է, ահա, բերել եմ, տուր նվերս:

Եվ զեռ խոսում էր ագռավը, իսկ Արբակը ձեռքը բարձրացրեց:

— Լոիր, — ասաց, — տեսնում եմ, քանդել ես բունդ:

— Նվերդ, — խոսեց Արբակը և ասաց.

— Իր տունը քանդողը ուրիշի տունն ավելի հեշտ կքանդի: Գնա, ագռավ, և միշտ հալածվիր, որ տուն չքանդես: Ահա նվերդ:





ԱՐՄԻՎԸ

Այն ժամանակ զեռ սպրում էր իմաստուն ^{բա} Արակը:

Նա էր, որ զիտեր հավքերի լեզուն և խոսում էր բոլոր թեավորների հետ:

Զարմանալի հնարքներով թոշունների տերն էր իմաստունը և նրան էր, որ ենթարկվում էին երկնի անցորդները:

Հեռավոր աշխարհների մասին Արբակին էր պատմում հավքն այն սպիտակ, որ անցնում է մեծ ծովերից:

Իր ցավի մասին նրան էր ասում ծիծառը սիրուն, պատմում էր վշտով, որ բունն իր քանզից անսիրտ թշնամին, և որոնում է հողն իր հայրենի, բայց վերագարձի ճամբա չի գտնում:

Այդպես էր Արբակը:

Բարի էր նա, մեծ էր ու անհաղթ:

Բայց իմաստունն էլ հաղթվեց:

Նրան կախարդել էր իր կինը, չքնաղ Գինովենն նա, որ ավելի էր հմայիչ քան արշալույսը, կավատ էր հողով և գավաճան էր:

Մեկ օր էլ, մթին ցանկությամբ, Գինովենն ուղից տիրել իմաստունի աշակերտին, որ զեռ ջահել էր ու թարմ, ինչպես գաբունը:

Հեռուները կդնար Արքակի աշակերտը, որ չտեսներ, չհմայվեր, բայց տարփանքով ձգտում էր կինը և հասավ:

Հմայվեց նաև աշակերտը:

Ավելի բորբոքվեցին Գինովրեի սև աչքերը:

Վասովեց, կրակվեց նաև աշակերտն ու բազմանքով տաց. — Բայց ուր դնանք, տիրունիս, որտեղ լինենք, բոլոր թոշունները իմաստունի բարեկամներն են, գիտեն նրա լեզուն և տեսնելով մեզ, կպատմեն իմաստունին, ի՞նչ անենք:

Լուս մնաց Գինովրեն, փակեց աչքերը սիրուն ու ժպտաց:

— Թոշունները, — չարությամբ բացականչեց նաև ասաց. — թոշունները չեն լինի...

Ապա անքուն տենչանքի բոցը վառելով աշակերտի սրտում, զնաց իմաստունի մոտ:

Թե այդ գիշեր Գինովրեն ինչպես համոզեց իմաստունին, գծվար է ասել, որովհետեւ երբ կինը գեղեցիկ է ու դավադիր, սարսափելի է: Միայն թե առավտույան հայտնի դարձավ, որ Արքակի հրամանով պետք է սպանվեին մեծ պարտեզի բոլոր հավքերը:

Հրամանն անխախտ էր:

Սպանվեցին բոլոր թոշունները:

Միայն մեկն էր բացակա: Արծիվը չկար:

Երեք օր անցավ, երեք անդամ բարձրացավ արեգակը: Դրախտային պարտեզը, որ հավքերի աշխարհն էր, այս անդամ անտեր գտավ:

Իմաստունի կինը փայլեց զոհունակ ու հաղթող:

իսկ աշակերտն այն ջահել, արդեն սովորեց խառըությամբ հաճույք ստանալու ձանապարհը:

Երեք օր հետո միայն հեռուներից վերադարձավ արծիվը:

Եկավ, նստեց Արբակի ուսին և ողջույն արվեց: Բայց Արբակը չընդունեց արծվի բարել, դայշացավ սաստիկ ու բացականչեց.— Հիմար, հանգուդն արծիվ, որտե՞ղ էիր դու, իմ հրամանով եկան բոլորը, իսկ դու, որտե՞ղ էիր դու:


Սպասեց արծիվը և այսպես պատասխանեց, — Ուշացա, տեր իմ, բայց ես գնացել և ուզում էի պարզել՝ աշխարհի վրա մեռնողն է շատ, թե ծնվողը:

Արբակը, որ լսում էր, մի պահ մոռացավ զայրույթն ու հարցըց. — Եվ ի՞նչ — մեռնողն է շատ, թե ծնվողը:

Իսկ արծիվն այսպես պատասխանեց. — Մինչև հիմա, տեր իմ, ծնվողներն էին շատ, բայց հիմա մեռնողները, քանզի նրանց թվին պետք է ավելացնել նաև այն մարդկանց, որ չար խորհրդով սպանություն էն կատարում:

1946 թ.





ՄԻՄՈՆ ՄԵՂԱՎՈՐԸ

Աշխարհն էր մեղավոր, թե ինքը՝ գժվար է առել միայն հայտնի էր հաստատ, որ արդեն սպանել էր իննսունին մարդ։ Եվ երբ գարձավ հասուն մի այր, ու սկսեցին սպիտակել մազերը, ամենքն էլ նրան ասում էին՝ Սիմոն Մեղավոր։

Եվ այդ երկրի կարգի համաձայն, ով սպանել էր հարյուր մարդ, նրան փրկություն չկար։

Բայց շատ էր ուշացել Սիմոն Մեղավորը։ Մընացել էր մեկը միայն, որ հարյուրը լրանար։

Ամեն անգամ, աշխարհի, թե իր պատճառով, երբ հարկ էր լինում սպանել, Սիմոնը երդվում էր, որ զա վերջինը կլինի, վերջինը... Սակայն կրկին լինում էր։ Եվ ահա, եկավ՝ հասավ իննսունինին։

Մնացել էր մեկը, որ հարյուրը լրանար։ Այն ժամանակ կփակվելին բոլոր զոները, և ներման ոչ մի ճանապարհ չէր լինի։

Այդպիս էր օրենքի կամքը, ու սարսափեց Սիմոնը։

Ուրեմն ինչ պետք է աներ նա, որ ներվելին իւ-

մեղքերը եվ այդ էք պատճառը, որ նա գնաց երկրին խմաստունի մոտ: Գնաց ու աղերսանքով չոքեց նրա առաջ, պատմեց իրեն տանջող վշտերի մասին, պատմեց ու աղաչեց՝ խորհուրդներ տալ իր մեղքերը քավելու և ներում ստանալու համար:

— Դիտեի քո մասին,—խոսեց խմաստունը և ասաց.—Ահա, քեզ եմ տալիս իմ գավաղանը, որ քառասուն տարի է արգեն հեռացել է մայր ծառից: Վերցրու այս, տար քեզ հետ, գնա հեռավոր մի տեղ, յոթը ճանապարհի վրա իջևան կառուցիր ու այնտեղ, գետնի մեջ տնկիր նաև այս գավաղանը: Ազրիր և քո տանը հյուրընկալիր բոլոր ճանապարհորդներին, պահիր նրանց, խնամիր նրանց անասունները և ճանապարհ դիր ապահով: Ու այնքան ժամանակ այդպիս արա, մինչեւ կանաչե, ծիլ տա այս գավաղանը: Ու երբ կանաչեց, ծիլ տվեց, մեղքերիդ ներում կլինիր աղատ կլինես: Մի՛ մոռանա, սակայն, որ ոչ մի ճանապարհորդ չպետք է անցնի քո տան մոտից՝ առանց հացդ կարելու:

Վերցրեց գավաղանը Սիմոն Մեղավորն ու գնաց: Վաճառքի հանեց աղաբանքներն իր, վերցրեց հարըստությունը, որ ուներ բավական ու գնաց յոթը ճանապարհի վրա ընկած ամայի մի տեղ:

Օրերի ետևից օրեր անցան, և բարձրացավ հոյակապ մի տուն՝ բոլոր հմայքներով հարուստ: Սիմոնը սեփական ձեռքերով հեռուներից ջուր բերեց, արեր կիզեց նրան, ապրեց բազում չարչարանքներ, բայց կարողացավ իջևանը ծաղկյալ դարձնել: Ու երազուն սոսիները բարձրացան դեպի երկինք:

Ծոգից ու ծարավից այրվող ճանապարհորդները

փառավորվում էին՝ իջևանելով Սիմոնի տանը, և չեղ
պինում մեկը, որ չկտրեր նրա հացը:

Ու անցնում էին տարիները: Հեռուները դնացող
թոշունների թևերով ժամանակն էր անցնում, բայց
ամեն անդամ, երբ Սիմոնն ի տես էր գնում մի ծայ-
րը գետնի մեջ թաղված գավազանին, նկատում էր,
որ անօդուտ են անցնում իր սպասումները: Ոչ միայն
չէր կանաչում գավազանը, այլ ավելի էր չորանում՝
քամիների և արևի ազգեցությանը ենթակա:

Վշտանում էր Սիմոն Մեղավորը: Դեմքի խո-
րը կնճիւները, որ տարիներն էին տկոսել, պատմում
էին նրա տառապանքների մասին: Բոլորովին սպի-
տակել էին մազերը, որ մի ժամանակ սե էին՝ սե
գիշերներից առավել: Բայց իր մարմին նման գեռ ա-
մուր էր նրա կամքը, որ ձգտում էր ներման: Եվ
անդապրում շատացնում էր ծաղկունքը բուրումնալի:
հողի ընպերքից աղբյուրներ էր հանում, բարձրացնե-
լով իջևանի համրավը, բայց չէր ծաղկում գավազա-
նը:

Օրերի մեջ, օրերի նման գալիս գնում էին ճա-
նապալճորդները, վայելելով իջևանի բարիքները, իսկ
դավազանը՝ մնում էր անփոփոխ:

Սակայն երկը իմաստունի հին խորհրդին ան-
սպառվ՝ Սիմոն Մեղավորը ոչ մի ճանապարճորդի չէր
թողնում առանց իր հացից նրան բաժին տալու:

Եվ գա օրենք էր դարձել նրա համար:

Եվ գրա մեջ էր ներման վերջին հույսը:

Սակայն ով կարող է ասել, թե վաղն ինչ կըերի
իր հետ:

* * *

Այդ առավոտ էլ, ինչպես ամեն առավոտ, արևի

հետ արթնացավ Սիմոն Մեղավորը: Որպես կարստյալ-հայացքը հեռուներին հառած, սպասեց աշխարհի բոլոր կողմերից եկող ձանապարհորդներին: Սպասեց պատ-րաստակամ ծառայի նման, որ սիրով իր օգնությու-նը տա:

Տիրուր և վշտակիր էր նա: Թավ հոնքերը, որ իջ-նում էին աչքերի վրա, կարծես ծածկել էին ուղում նրա վերջին հույսը: Բայց ահա Սիմոնը նկատեց հե-ռուներից իրեն եկող մի ձիավորի:

Արագասլաց նժույգը փոշի էր հանում և թոցնում էր հեծյալին:

Հույսը կրկին երեաց Սիմոնի դեմքին, որովհե-տե փարատվեց մոռայլը: Զէ՞ որ նորից առիթ կունի-նար օգնել ձանապարհորդներին, ծառայել նրանց, մոռանալ իր վիշտը:

Եվ մոտենում էր հեծյալը: Ահա նա բոլորովին-նկատելի դարձավ: Սև էր նժույգը, փրփրաբաշ: Հեծվորը հեռվից էր դալիս և փոշեթաթավ էր:

Նրան ընդառաջ գնաց Սիմոն Մեղավորն ու ձեռքը կրծքին դնելով, ինչպես ընդունված էր այն աշխար-հում, խոնարհում արավ.— Բարին քեզ հետ, ով ճա-նապարհորդ, բայց իջիր այսակը, հանդիսատ տուր ձիուդ և հոգնած մարմնիդ, ապա թե՛ գնա բարի:

Սակայն չուզեց լսել ճանապարհորդը, ընդհակա-ռակը՝ կատաղորեն մտրակեց ձիուն, որ հոգնած էր արգեն ու հեռացավ հապճես:

— Կանգնիր, կանգնի՛ր, բարեկամ, մի հեռանց առանց հացս կտրելու, — բացականչեց Սիմոնը, բայց իզուր էր խոսում: Ճանապարհորդը խուսափում էր նը-րանից, մտրակում էր ձին:

— Մի գնա, ով բարի մարդ, ես ուխտ ունեմ,—
առում էր Սիմոնը և վազում նրա ետևից, սակայն.
Հեր կանգնում ձիավորը: Նայում էր, տեսնում իրեն.
աղաչողին, բայց հեռանալ էր ուղում աճապարանքով:

Անա և իջևանի վերջին դուռը...

Եվ չի կանգնում ձիավորը: Ուրեմն բոլոր սպա-
սումներն անտեղի անցան:

— Կանգնի՛ր, — հին օրերի աճեղ կանչով բղավեց
Սիմոնը:

— Կանգնի՛ր, ով մարդ... կանչեցին սպասավոր-
ները, բայց իզներ, արդեն հեռանում էր հեծյալը:

— Կանգնի՛ր, կանգնի՛ր, — ասես թե աղերսան-
քով բնությունն էր կանչում, բայց զնում էր հեծ-
յալը արագավագ:

— Ավա՛զ, ուրեմն... ավա՛զ...

Եվ որպես շանթը, հին մի չարություն, որ եր-
բեմն պղտորում էր Սիմոնի սիրտը, ընդգրկեց նրա-
էությունը:

Ու թափով վազեց, վերցրեց հրացանը: Եվ փողն
առաջ պարզելն ու հեծվորին դետին տապալելը կա-
տարվեց նույն պահին:

— Ա՞ս... էլի կը ավա՛զ, կը կին սպանությո՛ւն... վեր-
ջացա՛վ ուրեմն, վերջացա՛վ... լրացավ հարյուրը: Ան-
դարձ փակվեցին փրկության դռները... փակվեց գա-
դաղի կափարիչը, էլ ի՞նչ հույս:

Աշխարհի, թե իր զեմ վրդովված, ավելի շուտ հու-
սահատ, իր տեղում մեխաված մնաց Սիմոն Մեղավորը:

Եվ նրա համար դար թվաց այդ պահը... Այլու-
ներում չկար:

Ու գանդաղ, որպես կորած մի մարդ, նա շար-

ժըվեց առաջ: Գնաց, որ հողից դուրս քաշի գավազանը, տանի հանձնի երկրի իմաստունին ու նրան պատմի իր վերջին, բայց անդարձ մեղքի մասին:

Եվ երբ ցանկանում էր հողից դուրս հանել հին գավազանը, մարդիկ բոնեցին նրա ձեռքը և հարցըն հևասպառ. — Չտեսա՞ր արդյոք, այստեղից մի ձիավոր չանցա՞վ:

— Տեսա ու սպանեցի... Վերջացավ...

— Սպանեցի՞ր... Փառավորվես դու:

— Ինչպե՞ս, — զայրույթից կրակվեցին Սիմոնի աչքերը:

Եվ այն ժամանակ մարդիկ ասացին նրան. — Դու պատժեցիր մեկին, որ թույն էր դարձել համակ, ծախել էր ուզում իր հայրենիքը: Իսկ մայրը նրա աղաչում էր զուր՝ դարձի գալ կրկին: Բայց չարն ըստոր՝ իր մորն սպանեց և մատնիչ դարձավ:

— Մատնիչ, մայրասպա՞ն, — նրա փոխարեն կարծես թե բնությունն էր հարցնում՝ զայրացած աշխարհի և մարդկանց գործերի վրա:

— Այս, մատնիչ էր ու մայրասպան... Եվ չդիտես արդյոք, որ ամեն մի սպանություն սպանություն չէ:

Սիմոնը լսում էր մարդկանց և ձեռքը զցեց դավազանին, ցանկացավ դուրս քաշել, բայց ուժը չէր պատում...

Քառասուն տարվա դավազանը ծլել էր, ծաղկել:


Կարծես թե նրա հետ ծաղկում էր նաև Սիմոն Մեղավորը:

1945 թ.



ନୀର୍ଜନମ





ԹԱԹԻԿԸ

Մեծացել էր այդ փոքրիկ քաղաքում, այդ փոշոցի վրա և աշխարհում ուրիշ ոչինչ չէր ճանաչում դրանից բացի:

Սակայն նրան ամենից հարազատ ու ծանոթ էր ճաղավար պարխապ ունեցող մեկ հարկանի այն տունը, ուր չի հիշում, թե երբ բերեցին իրեն: Մկրտչ, երբ գեռ շատ էր փոքր, կերակրում էին այն կոսի կաթով, որին վախեցնում էր նա, երբ արդեն մեծացել էր:

Իսկ ինչպես ստացավ իր անունը, հիշում է արդյոք, ոդվար է ասել: Բայց դա պատճեց այսպիս: Իր փոքրիկ տերը, Միշան, գրկում էր նրան, ունեղ սեղմում կրծքին, առանց զգալու, որ սիրունիկ շնիկին ցավ է պատճառում, վազում էր տուն, տաք վառարանի մոտ, առաջ բաշքում էր, բարձրացընում ուսին, բայց հենց որ դնում էր գետին, առանց ժամանակ կորցնելու շնիկը վազում էր մահճակալի տակ: Միշան դնում էր նրա ետեկից, բայց իզուր, շնիկն արդեն սովորել էր ինքն իրեն պաշտպանել: Պատին սեղմված, դունչը դնում էր թաթիկների վրա և հաջում էր, երբ Միշան ցանկանում էր մոտենալ, բռնել նրան:

Միշան կրկին կանչում էր, բայց շնիկը դուրս չէր գալիս, մինչեւ որ չկանչեր մեծ տերը՝ Միշայի հայրիկը:

Այն ժամանակ միայն դուրս էր գալիս թաթը -

տոցից, իսկ մեծ տերը վասդաքշում էր, առաջ վերցնելով կաթը՝ լցնում էր հատկապես շնիկի համար պատրաստված ափսեի մեջ, հացի մանրունք էր բրդում և նոր միայն տալիս էր նրան:

— Տեսնեմ ևս, աղաս, խելոք է շնիկը, զու չարչաքում ևս նրան, զրա համար էլ վախչում է քեղանից, իսկ ով կաթ է տալիս, լավ է վարփում, նրան էլ սիրում է: Շնիկը խելոք է և իսկական թաթիկ: Մի անգ է, բոլորովին սև գույն ունի, միայն առջեւի թաթիկներն են սպիտակ, կարծես թե մածնի մեջ է ընկեր, շատ է սիրունիկ, իսկական թաթիկ, — բայց առըրում էր մեծ տերը, իսկ Միշան ծափ էր տալիս, թռչկոտում և ասում էր, — Սպիտակ թաթիկ, թաթիկ ջան, էլ չեմ չարչարի, աղնիվ խոսք, չեմ չարչարի:

Աղա ավելացնում էր կաթի բաժինը, տալիս էր նաև ուրիշ բաներ, — կե՛ր, թաթիկ ջան, կե՛ր:

Այսակղից էլ մնաց անունը: Երբ մեկը թաթիկ էր ասում, նրան թվում էր, թե մի լավ բան է լինելու, ցցում էր ականջները, վազում էր, ցատկում:

Շուտով մեծացավ թաթիկը: Նա արդեն կատարյալ շուն էր: Հասակը ոչ բարձր էր, ոչ էլ ցածր: Խելոք ու բարի էր բարեկամների նկատմամբ, չար ու անգուսով՝ վատնղի ժամանակ:

Մեծացել էր նաև Միշան, նա արդեն չորրորդ դասարանի աշակերտ էր: Թաթիկը հասկացել էր, որ փոքրիկ տերը, եթե իրեն սեղմում էր կրծքին, դա բոլորովին էլ չարությունից չէր, այլ սիրուց: Հիմա ինքն էլ շատ էր սիրում չարաճճի խաղեր:

Թաթիկը գիտեր նաև այն, որ տան մեջ կը նամենից շատ սիրում էր փոքրիկ տերը, ինքն էլ չա-

փաղանց սիրում էր նրան։ Եվ իսկապես, մարդ թե կենդանի՝ աշխարհում ամենից հարազատ մեկին է զգում։ Բայց Թաթիկը ահա, օրինակ, ինչպես չսիրեր Միջայի մայրիկին, որը նրա համար հատուկ ճաշ էր պատրաստում, այնքան համեղ, այնքան հյութալի։

Փոքրիկ տիրոջ մայրիկը, որն ընդհանրապես բարկանում, բղավում էր ուրիշների վրա, որովհետեւ տան մեջ ընդհանուր կարդ ու կանոնը նա էր հաստատում, մեղմ ու սիրալիր էր Թաթիկի հետ։

Իսկ Թաթիկն անսուարկելիորեն ենթարկվում էր սիրուհուն։ Հապա մեծ տերը... Զէ՞ որ առաջին անգամ նա փաղաքշեց, Թաթիկ անունը դրեց, չէ՞ որ նա էր իր համար դրսի մաքուր օդի մեջ փայտից անսակ պատրաստել այնքան հարմար, որ ոչ անձրեն էր անհանդստացնում, ոչ էլ քամին։

Թաթիկը սիրում էր իրենց բագիկներին, հավերին ու աքաղաղներին, որովհետեւ փոքրիկ տիրոջ մայրիկն էլ հոգում էր նրանց մասին։ Նա նույնիսկ խազում էր կատվի հետ, որովհետեւ երբ մեկ անգամ ցանկացավ պատժել այդ ստախոսին, տիրուհին բղավեց նրա վրա, նույնիսկ ցանկացավ թակել, իսկ այդ նշանակում է, որ հարկավոր է հաշտ լինել, ակրուհին իրենից լավ է հասկանում, թե ինչ է հարկավոր, և ինչ՝ ոչ։ Այդ արդեն Թաթիկը փորձից գիտե։ Երբ հարկավոր է հալածել, հարձակվել որևէ մեկի վրա, Միջան սուլում է կամ կանչում նշանակալից ձայնով, այն ժամանակ Թաթիկը գիտե իր գործը։

Նա սիրում էր իրենց դարրասի ճաղերը, որովհետեւ զբանք արգելում են օտարների մուտքը, անծանոթ, թափառական շները չեին հալածում իրեն։

Նա սիրում էր իրենց տան կտուրը, որովհետեւ այնտեղից ավելի լավ էր դիտում հեռուն, տեսնում էր հանդից վերադարձող իրենց կովին, վագում վախեցնում էր, ապա սկսում էր խաղալ նրա հետ և հաճույք էր զգում, երբ լսում էր հորթուկի բառաշքը

Խելոք շունը նույնիսկ իր մեծ տիրոջ հյուսնառ կան գործիքները՝ ուրագն ու սանդան էր սիրում, որոնք տաշեղ էին պատրաստում, իսկ նա հաճույք էր զգում, երբ ընկնում էր տաշեղի մեջ, խշացնում էր՝ մարմնի վրա դգալով դյուրակի խտիս:

Հապա իրենց տան պարսպի դուռը: Դա արդեն նրա սիրելին էր: Օրվա մեծ մասը նա անցկացնում էր այնտեղ: Այդտեղից էլ նա տեսնում էր տուն վերադարձող Միշային, դպրոցական պայուսակը թեփ տակ: Վազում էր ընդառաջ, թոչկոտում էր, ցատկում, ընկնում էր սաքերը, ապա դառնում էր ետ, կրկին մանում տուն, դանում էր աֆրուհուն և սկսում վաղաքական ձայներ հանել: Իսկ այդ նրա լեզվով նրանակում էր, թե Միշան վերադառնում է դպրոցից: Տիրուհին, իհարկե, հասկանում էր այդ և ժպտում: Իսկ Թաթիկը նորից դուրս էր պրձնում, վագում, նըստում էր պարսպի դաշն առաջ, ապա դունչը թաթերին գրած, խորամանկ ու սպասողական՝ մնում էր մինչեւ փոքրիկ տիրոջ հայտնվելը, որը շուտով չարաձնի խաղեր էր սարքելու նրա հետ:

Բայց ինչպես փոխվեց ամեն ինչ, այդ ինչպես պատահեց: Թաթիկը դրա մասին պարզ հասկացողություն չունի: Միշայն մեկ անդամ դարմացավ, տես-

Նելով տիրուհու անսովոր լացն ու կսկիծը, սակայն
հետո այդ էլ մռացավ:

Իսկ ուր զնաց իր մեծ տերը, ինչո՞ւ այլիս տուն
չի դալիս՝ սպիտակ գոգնոցի մեջ ուրագն ու ունդան
փաթաթած, այդ էլ չի կարող հասկանալ նա: Միայն
զգում կամ հիշում է երբ երեկո է լինում, երբ գա-
լիս է մեծ տիրոջ աշխատանքից վերադառնալու ժամը:
Ահեղ որուներից հետո քաղաքում և իրենց տանը
շատ բաներ փոխվեցին:

Շատ տեղերում բոցեր առաջացան, որ ձգվում
էին դեպի երկինք, սարսափելիորեն վախեցնելով թա-
թիկին:

Միշտ զալոց չէր գնում այլիս: Թույլ չէր տա-
լիս, որ թաթիկն էլ գրառում շատ մնա: Տխուր էր տի-
րունին, առաջի զվարճալի խաղերը չէր կատարում
նաև փոքրիկ տերը:

Թաթիկի համար այդ էլ սովորական դարձավ:
Թվում է, թե մռացավ անցածը, հաշտվեց նորի
հետ, ուրիշ ինչ կարող էր անել: Բայց ահա հայտնվե-
ցին վատ մարդիկ:

Նախ տարան կովը, որն իրենց կաթ էր տալիս,
ապա տարան բաղերը, հավերն ու աքաղաղը, տարան
և ուրիշ շատ բաներ, որ իրենց այնքան հարկավոր
էին:

Զար մարդիկ, վիշտ պատճառելով տիրունուն,
պատից պոկեցին խալիչան և այն էլ տարան: Թա-
թիկն այդ արդեն լավ է հիշում, որովհետեւ երբ նա-
յում էր խալիչայի վրա եղած գունագեղ նկարներին,
նրան թվում էր, թե որանք կենդանի բաներ են, ինչ
որ պատճառով քարացել են, չեն շարժվում:

Եկվորները շատ բաներ տարան: Թաթիկն ույն էր զգում միայն, որ զբանք անսովոր մարդիկ են և պազառում, հաջում էր, աշխատելով վախեցնել, հեռացընել նրանց, իսկ նրանք ընդհակառակը, մոտենում էին և ցանկանում էին խփել իրեն: Միշան զսպում էր Թաթիկին, փաթթվում էր պարանոցով:

Թաթիկն հասկանում էր, որ փոքրիկ տերն ուղարկում էր ասել, թե միենույն է, նրանք քեզ էլ կըսպանեն, հանգիստ եղիր:

Տիրուհու, Միշայի և հարևանների մշտական խօսակցությունից խելոք շունը ճանաչեց վատ մարդկանց: Հետագայում, երբ լսում էր նրանց անունը, սրում էր ականջները, գլուխը բարձրացնում էր՝ զգույշ ու սպասողական: Իսկ այդ, նրա լեզվով ասած, նշանակում էր, թե մի վատ բան է մոտենում, ինչպես օրինակ, խելազարված մի անասուն, կատաղած մի գագան, որ կդա, կավերի, կտանի: Եվ իրոք, օտարականներն այդպես էին վարվում: Ուրեմն պետք էր զգույշ լինել:

Նորեկների անունը Թաթիկի համար վտանգի ազդանիշ դարձավ: Բայց հետադայում այդ էլ նրա համար դարձավ սովորական: Վատն այն էր, որ գնալով պակասում էր ուտելիքը: Ճշմարիտ է, փոքրիկ տերը հացի վերջին պատառը կիսում էր նրա հետ, երբեմն էլ ուրիշ տեղերից ուտելու բաներ էր ճարում, բայց դա քիչ էր, շատ քիչ:

Հատկապես այդ օրերին Միշան ու նրա մայրը ավելի լուակյաց էին դարձել: Նրանք համարյա թե,

ուսանից դուրս չէին գալիս: Թաթիկը նկատում էր փոռ-
փոխությունը, բայց նա ինչպե՞ս կարող էր հասկանաւ-
որ վատ մարդիկ ամեն ինչ տանելուց հետո, հիմա էլ
մարդկանց են տանում հեռավոր տեղեր:

Մայրը կարող էր բաժանվել որդուց, դա էր
սարսափելին: Խելոք շնիկը դժբախտաբար չէր կարող
դատել այդ մասին, հասկանալ, և այդ էր պատճառը,
որ կատակ սկսելու նպատակով մի քանի անգամ վա-
զեց ետ ու առաջ, հաջեց: Միշան ցուցամատով լոելու
նշան արեց:

Դուռը թակում էին: Գլուխը բարձրացնելով Թա-
թիկը ոտքի կանգնեց և ցանկացավ դուրս վազել:
Միշան սաստեց նըան:

Համարյա թե ջարդում էին դուռը: Միշայի և
տիրուհու զգուշավոր խոսքերից Թաթիկը ոչինչ չէր
կարող հասկանալ, բայց նրա համար շատ բան հաս-
կանալի գարձավ, երբ լովեց վտանգի ազդանիշը, օ-
տարականների անվան հիշատակություննը՝ տիրուհու
կողմից: Դուռը բախողը չար մարդիկ էին:

Ականջները ցցած, զգույշ ու սպասողական զի-
տում էր: Նա զգում էր, որ վտանգն է մոտենում:

Միշան ու մայրը որոշել էին դուռը չբանալ,
գուցե թե կարծեն տանը մարդ չկա և հեռանան:
Բայց իզուր, մի ահեղ հարված՝ և կոտրված դուռը
ետ ընկալվ, կատաղած մարդիկ, որ զինված էին
ոտից-զլուխ, ներս թափվեցին: Թաթիկը, ատամները
ցույց տալով, ցատկեց տեղից: Եկվորներից մեկը ու-
վինն առաջ ուղղելով, դուռաց՝ զսպել շանը և հետեւ
ժեզ:

Միշան սաստեց շնիկին:

Բայց այս ինչ է կատարվում... Թաթիկը կրկին ստքի կանգնեց: Վատ մարդիկ քաշքառմ, խփում էին իր տիրուհուն, ձեռքերը կապկապեցին, տանում էին: Թաթիկը ցանկացավ վրա պրծնել, մեկ էլ այն նկատեց, որ Միշան, ճարպիկ մի շարժումով, ցատկեց մորն հարվածող մարդու վրա: Թաթիկը հետեւ աիրով: Բոնեց եկվորի ստքի սրունքից, բայց նույն պահին էլ իրեն այնքան մոտ, լսեց պայմանուն, իր զրւխին էլ իջավ մի ծանր հարված, բայց կարողացավ փախչել: Հետեւից կրակեցին, սակայն գնդակը վրիպեց:

4

Երբ կրկին տուն վերադարձավ, ամեն ինչ լուս էր: Միշան ընկած էր գուան շեմից քիչ այն կողմ՝ ձեռքերը լայնորեն տարածած:

Թաթիկը երկար ժամանակ կանգնել էր նրա մոտ, ապա սկսեց քաշքառել թեից այնպես, ինչպես արթնացնում էր նրան, երբ թախտի վրա քնած էր լինում: Դնչով խփում էր ուսին, լիզում ճակատին թափած մազերը, բայց Միշայի արտասովոր անշարժությունը նրան ստիպեց ազիտորմ մղկանալ...

Լիալուսնի շողե՞րն էին, որ փայլեցին նրա աչքերում, թե՞ արցունքի կաթիլները ընկան: Ո՞վ դիտե... Ասում են, թե կենդանիները չեն լալիս:

Թաթիկը հասկացավ, թե ինչ էր կատարվել, զդաց: Աև դլուխը սպիտակ թաթիկներին զրած, նըստել էր իր տիրոջ մոտ և լուռ էր, իսկ հետո սկսեց հաջել անհանգիստ լուսնի վրա, որ երբեմն մտնում էր ամպերի տակ, բոլորովին մթագնելով Միշայի-

գեմքը: Ամբողջ գիշերը թաթիկը մնաց տիրոջ գիտի
մոտ, սպասում էր, զուցե թե վերադառնան կատա-
զած մարդիկ, կամ ուր որ է կդա իր տիրունին, նա
Միշային հոր է մենակ թողել:

Բայց ոչ ոք չայտնվեց: Փողոցներում մարդիկ
չեին երեսում, չկային հարազատները:

Օրեր անցան: Մշտական վտանգի սպառնալիքը
ավելի էր ուժեղացրել Թաթիկի զգաստությունը:
Այս կամ այն անկյունից լսվում էր կրակոց, լսվում
էին ցավատանջ ձայներ: Թաթիկը փողոցներով անց-
նում էր զգուշ և մի կերպ հագեցնում էր իր քաղցր:
Ուտելու ոչինչ չկար արդեն, իսկ նրա նման անտե-
րունչները շատ էին:

Մեկ օր էլ Թաթիկը կատաղի կավի մեջ մտավ
թափառական մի շան հետ, որը դադտագողի մոտե-
ցել էր իր տիրոջը և ցանկանում էր պատառտել նրա
գիտիկը կորիվ ծանր էր, բայց Թաթիկը դիմագրում
էր, երկու անդամ օտար շունը գետին տապալեց նը-
րան, մեկ անգամ էլ ատամները խրեց ոտքի մեջ,
բայց կարծես թե Թաթիկն ուժեղացել էր: Այն բը-
նողը, թե թափառականը պատառոտելու է անօդնա-
կան Միշայի մարմինը, նրան ուժ էր ներշնչում և
նորից ոտքի կանգնեցնում: Վերջապես նրա համա-
ռությունը հաղթեց:

Թաթիկը կարողացավ փախուստի մատնել իր
հակասակորդին, բայց ոտքի ցամք ուժեղ էր: Թափա-
ռական շունը, կարծես, անօդուտ համարելով իր ջան-
քերը, թողել հեռացել էր, իսկ նա, պարսպի դռան
առաջ նսաած, հսկում էր:

Նրան ևս քաղցը տանջում էր, բայց այդ ոկա-

հին շատ ավելի ուժեղ էր ոտքի ցավը։ Սկսեց լիզեռ
ոտքից հոսող արյունը, և մի պահ նրա զգացմունք-
ները գրգռվեցին սեփական արյան հոտից։ Անտանե-
լի քաղցի թելազրանքն էր դա։ Իսկ զրանից հետո
նա զգաց մի ուրիշ, բոլորովին անսովոր բան։ Ի՞նչ էր
այդ։ Դարձյալ արյան հոտը…

Չէ՞ որ այնտեղ ընկած էր իր տիրոջ ջախջախ-
ված մարմինը։ Եվ ահա թե ինչն էր, որ մինչև այս-
տեղ էր բերել օտարական շանը ևս, — նույն այդ
զգացումը։ Մի պահ… Եվ Թաթիկը դունչը գրեց առ-
ջեկ ոտքերի վրա, աչքերը փակեց։ Թվում էր, թե նա
մտածում էր, իսկ հետո սկսեց աղիողորմ մնջա-
տալ։ Այնքան տխուր ու վշտագին էր այդ ձայ-
նը, որ թվում էր, թե մեկը կտրտում է նրա սիր-
ուը… Ո՞վ գիտե, գուցե դա ինքնահանդիմանանք էր,
վաղանցուկ, բայց սեփական, անազնիվ զգացման
դեմ։ Նույն պահին էլ Թաթիկի ականջներին հասան
ոտնաձայներ։ Նա բացեց աչքերը և տեսավ, որ թա-
փառական նույն շունը կրկին վերապարձել է և ցան-
կանում է մոտենալ Միշային։

Թաթիկի աչքերը կատազությունից փայլեցին։
Ատելությունը դեպի աներես հակառակորդը, անսահ-
ման էր։ Չէ՞ որ նրա մեջ ծագած անսովոր զգաց-
մունքն էլ այդ օտարականի խելազար վերաբերմուն-
քից էր ստեղծվել։

Այս ամենի մասին նա զգում կամ գատում էր,
ինչպես ինքը կարող էր, բայց փաստն այն էր, որ
թափառականի կրկին հայտնվելը Թաթիկին լրիվ կա-
տապության հասցըց։ Մինչ հակառակորդը կմտածեր
պաշտպանվել, նա, ին օրերի ուժությամբ, վրա

պրծտվ, արգեն ոսկըռոտ իր կրծքով. թափով խփեց թշնամուն, որը երեք անգամ գետնի վրա գլորվեց, իսկ թաթիկը ժամանակ չտվեց, կրկին վրա ողբծտվ և կիսեղդեր հակառակորդին, եթե վերջինս մի կերպ չազատեր իր գլուխը: Թաթիկը նրան հալածեց մինչե փողոցի ծայրը և վերադարձավ բավական կայտառացած, աշխույժ քայլերով:

Ո՞վ գիտե, գուցե թե այն միտքը, որ չար հակառակորդը պատժվել էր, նրան ոգի էր տալիս: Մըտնելով բակը, թաթիկը առաջին հերթին մոտեցավ տնշարժ պառկած Միշային: Նստեց նրա ոտքերի մատ, նայեց դեմքին և մի քանի անգամ նշանակալից հաջեց, կարծես թե զրանով ցանկանում էր ասած լինել իր տիրոջը, որ թափառականը պատժված է և այլես երեք, ոչ մի պայմանով չի վերադառնա:

Քիչ հետո բարձրացավ կտուրը, նայեց շուրջը, թվում էր, թե նա ստուգում է՝ արդյո՞ք ամեն ինչ իր տեղումն է, ապա կտուրից իջավ ցած, գնաց պարսպի դուռը, նստեց իր սովորական տեղը, և կրկին նրան տիրապետեց այն, ինչ ստվերի նման հետեւում էր: Դա քաղցն էր:

Բարձրացավ տեղից և դանդաղ քայլերով գնաց իր սովորական ցըագայությանը՝ մի բան ճարելու մտադրությամբ: Բայց իզուր, ոչինչ չկար, ոչ մի բան: Նա արգեն բավական թափառել էր: Ռտքերը սկսում էին դավաճանել, իսկ ուշ աշնան քամին վայում էր ցըտաշունչ:

Երեկոյան, երբ տուն վերադարձավ, քիչ էր մընում ինքն իրեն չհավատար: Իսկապես, գուցե թե մոռացել էր իրենց տան ճամբան, մոլորվել էր, բայց

ո՛չ, սա իրենց տունն է, որն ահա չըրս կողմից կրակ-
ների մեջ ընկած այրվում է: Թաթիկը ցանկացավ ա-
ռաջ գնար բայց անտանելի կրակն ու ծուխը վանում
էին: Այլև ուր գնար նա, քաղցած էր ու անտանէ
Այդտեղ մնալ չէր կարող, կրակը ընդգրկել էր տունն
ու ամբողջ բակը և սպառնում էր իր մոտ եղած ա-
մեն ինչին:

Թաթիկը նոր միայն նկատեց, որ այրվում էր
նաև հարեանի տունը: Կրակը բռնել էր ամբողջ փո-
ղոցը: Հեռվում ևս բոցեր էին երեսւմ:

Թաթիկը գիտում էր այդ կրակները և չպիտի
ինչու՝ ցավատանջ վնասում: Նա ստիպված էր նե-
ռանալ: Բայց ուր էլ որ գնար, անհանգիստ էր: Եր-
կար տարիների սովորույթի ուժը նրան կրկին ձգում
էր գեղի տուն: Նա հաճախ անցնում էր բոցերի մի-
ջից, կարծես թե մի գերող ուժ նրան քաշում էր զե-
պի տուն: Գիշերվա մեջ երեք անգամ եկավ: Թվում
էր նրան, թե այս անգամ էլ որ զա, արգեն հեռա-
ցած կլինեն այրող բոցերը, և ամեն ինչ խաղաղ կլի-
նի առաջվա նման, բայց իզուր, ընդհակառակը, չար
էին կրակները և ավելի զարհուրելի էին զառնում:
մինչեւ որ լափեցին ամեն ինչ:

Թաթիկը կրկին շրջեց բոլոր կողմերը, բայց ոչ
մի աեղ բան չգտավ: Մի փողոց էլ անցավ: Այդտեղ
գտնվում էր քաղաքի մեջտեղից անցնող գետակը:
Նա գնաց գեղի ջուրը և շուտով կանգնեց զետակի
ամիսն:

Նրա՝ մի բան գտնելու տեսչից լայնորեն բաց-

ված աչքերը ինչ որ տեսնում էին: Առաջացավ դեպի ջուրը: Հոսում էր պղտոր գետակը, որի միջից զուրս էին ցցվել խոշոր, լերկ քարեր: Զուրը թաթիկի կը քարից մի քիչ ցածր էր: Երերուն քայլերով, ջրի հոսանքին հակառակ, նա լուսթյամբ առաջ էր դնում և կարծես մտքերով տարված, որոնում էր:

Տանջանքից և տեսական քաղցից տենգավառ աչքերն ազահարար նայում էին զեսի գետի հատակը: Ինչ որ բան կորցրած մի գիտակից էակ էր կարծես դա, որ գլուխը կախ, համառ ու անթարթ որոնում էր:

Խեղճ շուն: Հողի վրա ոչինչ չկար այլեւ: Եկան ֆրիցները և լափեցին ամեն ինչ, տարան, այրեցին: Հողը մնաց գտարեկ: Հողի վրա այլնս ոչինչ չգտավ՝ նու և ահա ապրելու կենդանական բնուզգով սկսեց որոնել ջըերի մեջ: Մկզրում դա օգնում էր: Մի մուլրված ձուկ, ջրային մի կենդանի, հեռուներից պատահմամբ բերված մի բան... Շատ անդամ էլ թաթիկի թափառութներն իզուր էին անցնում: Ոչինչ չեր գտնում, ջուրն էլ էր աղքատանում: Իսկ սառնաշունչ քամին, որ աղքարարում էր մոտեցող ձմեռը, ավելի էր աղատություն տալիս իր թերեին:

Այդպես է — սովը և ցուրտը դալիս են իրարից անբաժան, ավելի անողոքը՝ սովն է: Նա եկավ, երբ օտարականները մտան այս քաղաքը, որն առաջ հարուստ էր ու ծաղկյալ: Այդ սովը սառնամանիքի նման թափանցեց, մտավ ամեն տեղ, իր հակայական լեզվով լիզեց, տարավ ամեն ինչ, նրա շնչից հողն անդամ ճաքճքվեց, նա էր, որ փշքից քարերն անդամ, անտառներից փախան վայրի գաղանները և լուսինն էլ սկսեց գունատվել:

Թաթիկը, որ առաջ սիրում էր կատակներ անել
լուսնի հետ, նրան այլես չէր էլ հիշում: Խելոք շնիկի
կենդանական բնագլը մշուշվել էր: Նա արդեն շատ
րան էր մուսացել: Սակայն ամեն օր, հին սովորու-
թյան համաձայն, մոտենում էր արդեն այրված տան
պարսպի գուանը, ավելի ճիշտ կլինի ասել՝ գալիս էր
այնտեղ,ուր մի ժամանակ դուռն էր կանգնած: Պառ-
կում էր, գունչը դնում թաթիկների վրա և սպասում:
Ննջում էր հոգնած ու սովատանջ, փակում աչքերը,
և մի պահ նրան թվում էր, թե ահա իր մոտ կանգ-
նած է բարի տիրուհին, ահա և Միշան... Իրեն են
մոտեցնում համեղ մի ուսելիք: Թաթիկն աչքերը
բանում էր, բայց ոչինչ չկար, անըջանքն էր միայն:
Դեմն այրված տունն էր, իսկ փողոցում՝ երեսնի-
վայր բնկած էր ջարդված մի տանկ:

6

... Բայց այս ի՞նչ ձայներ են, կրկին որոտներ
են լսվում: Այդպես եղավ և այն ժամանակ: Որոտա-
ցին, բարձրացան ահավոր ձայներ և ամեն ինչ փոխ-
վեց: Բայց թաթիկը հիմա դրա մասին չի կարող
մտածել: Այդ օրը ջուրը ոչինչ չէր բերել, բոլորովին ի-
զուր էին անցել նրա համառ որոնումները: Տարօրինակ
մի թմիր էր իջել նրա վրա, կարծես թե վերջնակա-
նապես բժացել էին զզացմունքները: Նույնիսկ չկա-
րողացավ հենվել ոտքերին, թուլացել, ընկել էր կողքի
վրա: Երբեմն միայն, երբ մեծ դժվարությամբ հավա-
քում էր իր ցրված ուժերը, զգում էր, որ որոտներն
աստիճանաբար մոտենում էին: Այրված քաղաքում
արտակարդ շարժում կար:

Այդը վաղուց էր բացվել Հեռուներից բարձրանում էր արևը: Լուսավորվում էր նաև ավերված քաղաքը:

Թաթիկը կորցրել էր իրեն: Հետո բոլորովին մթագնեց նրա հիշողությունը: Կարծես թե ամեն ինչ վերջացավ: Բայց մի արտակարգ զրդիո նորից ցնցեց նրան: Շրթունքների մոտ սարսուռ տվող ուժով տարածվում էր հացի հոտը: Հայը, որ հաղթում է սովին, մի պահ Թաթիկին կենդանության ուժ տվեց: Բացվեցին նրա աչքերը, ցանկացավ կուլ տալ իրեն մոտեցրած ուտելիքը, բայց ծնոտներն այլնս չէին շարժըվում: Սկսեց նայել, որոնում էր և տեսավ հրացանը ձեռքին, իրեն այնքան մոտ նստած, մի մարդու:

Հրացանավոր մարդը Միշայի սպանությունը հիշեցրեց նրան, թե մի ուրիշ բան,— դրա համար էլ ցանկացավ վերցնել հացը, փախչել սակայն իզուր, հաղիվ կատարեց աննշմարելի մի ցնցում:

Այդ ժամանակ էր ահա, որ նրա լսողությանը հաստավ ծանոթ, շատ ծանոթ մի ձայն: Թաթիկի աչքերը ավելի բացվեցին:

Դիտում էր: Այս, նա չէր սխալվում, դա իս մեծ տերն էր, որ ամեն իրիկուն տուն էր դալիս, բերելով ուրագն ու ուանդան, դա նա էր, որ իր համար հարմար բուն էր շինել, որ պահպանում էր իրեն:

Հացի ներկայությունը՝ միացած կարոտին և հիշողությանը՝ ավելացրին կենդանության նշույշները: Բազմախորհուրդ աչքերով նա նայում էր իր մեծ տիրոջը:

Այս, եթե լիզու ունենար... Բայց իր խելոք...

բարի աչքերով կարծես թե ասում էր,— դու որտե՞ղ
էիր, իմ տեր:


Թե՞ այդպես էր թվում իր ակրոջը, որն այլևս
իզուր էր գորովանքով շոյում թաթիկի գլուխը և մը-
տորում,— լեզու ունենայիր, պատմեիր, որտե՞ղ են
մերոնք...

Թաթիկի աչքերը փակվել էին: Հավատարիմ
շունչն այլևս չբացեց աչքերը, վերջացավ, չկար նա:

Տերը ստքի ելավ: Դիմացը այրված տունն էր:
Խոտի գեղը, որի մոտ մի ժամանակ ընկած էր Միշայի
դիակը, մոխրակույց էր գարձել: Ոչինչ, ոչինչ չկար:
Հարազատ ծխնելույղն էր միայն, որ գեղի երկինք
բարձրացած, սրաակտուր հիշողություններ էր արթ-
նացնում, ծխում՝ էր կարծես....

Մեկ անգամ էլ նայեց սեփական տան ավերա-
կին, ապա սրբեց աչքերի արցունքը և հրացանը բըռ-
նած շարժվեց դեպի Արևմուտք, դեպի թշնամին:

1943 թ.



ԶՈՐՍ ՆՈՎԵԼ ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆԻ ԿՅԱՆՔԻՑ

(«Մեր արտիստները» համբից)

1. ԽՈՐՀԵՐԴԱՎԱՐ ՇԱԽՄԱԴԱՅԱ

Հիմա, 1940 թվականի օգոստոսին, երր Փափազյանն արգելն հիսուն երեք տարեկան է, ուղիղ երկու հաղար անդամ Օթելլո է խաղացել:

Նա եղել է աշխարհի բոլոր կողմերում, անցել է հաղաղ օվկիանոսի անծայրածիր ջրերավ, եղել է Օթելլոյի հայրենիքում, շատ բան է տեսել, շատ վիշտ և ուրախություններ ապրել, սակայն այն գետքը . . .

Դա պատահեց Փարիզում, Խաղում էր իր հոչակավոր դերը՝ Օթելոն:

Բոլորը խորին սիրով լսում էին մավրին: Նա հուզում էր մարզկանց, տիրապետում, զերում էր:

Լուս էին:

Եվ ոչ ոք չնկատեց, որ այնահեղ, դահլիճի վերջին նատարաններից մեկի վրա, մի մարդ անհանդստորեն շարժվում էր այս ու այն կողմ, իսկ հետո, երր Փափազյանի խաղը հասով գագաթնակետի, իրեն զսպել չկարողացավ այլևս, ոտքի կանգնեց և թեքվեց առաջ:

Թվում էր, թե նրան զերել է խորհրդավոր մի ուժ և ուր որ է կտանի . . .

Նա սկամորթ էր՝ Օթելլոյի ցեղակիցը: Ունեք հակայտկան մարմին, հաղթական բազուկներ: Երկա-

թակուռ էր սիրտը, բայց դարձել էր հեզ, որպես ծաղիկ մի նրակերտ, որ պատրաստ է հավերժորեն անթառամ մնալ սիրելի Օթելլոյի համար:

* * *

Ներկայացումը վերջացավ: Մարդիկ սպասում էին որ գուրս գար Փափազյանը, որ տեսնեին նրան՝ առանց գրիմի, կյանքում ինչպես որ կար: Եղավ մեկը սակայն, որ առանց սպասելու, գնաց գեղի կուլիսները, շատպեց բողե առաջ լինել Փափազյանի մոտ:

Դա այն մարդն էր:

Առանց խնդրելու, ինչպես սեփական տանը, նաքացեց գուրով և մտավ ներս:

Լսելով մոտեցող ոտնաձայները, Փափազյանը հեռացրջեց:

Նա գրիմը դեռ չէր մաքրել:

Երկու սեամորթ նայում էին իրար:

Արտիստը լուռ էր, իսկ օտարականը մոտեցավ: Ճերմորեն սեղմեց Փափազյանի ձեռքը և ասաց:

— Ապրես գու, իսկական մավր ես, մերոնցից ես...

Արտիստը սպասում էր: Մավրիտանացին այլև չխոսեց: Նա նայում էր մի կողմ: Երկար լուելուց հետո միայն, ասաց:— Այդպես, բայց այս մեկը քեզ չեսազում, մեզ համար էլ լավ չէ:

Փափազյանը նայեց այն կողմը, ուր սեեւված էր անծանօթի հայացքը: Այնտեղ գրված էր Փափազյան—Օթելլոյի բեմական դաշույնը, որը պատրաստված էր փայտից:

Սեամորթ մարդը հանդարտ, բայց վճռական

քայլերով մոտեցավ, վերցրեց փայտե սուրբ, նայեց Փափաղյանին, ապա դաշույնը դրեց ամբակուռ մատների արանքը, սեղմեց, մեջտեղից երկու կես արավ և սրբեա թեթե տաշեղ, նետեց մի կողմէ, իսկ նետո դուկատեղից դուրս քաշեց սեփական սուրբ և մեկնեց աբախտին.— Առ, նվիրում եմ քեզ: Նա շատ յագուների վրա է աշխատել:

Մավրիտանացին՝ ուղում էր ասել, թե դաշույնը շատ յագոներ է սպանել:

* * *

... Այդ օրից Երկար տարիներ են անցել, սակայն Փափաղյանը պահում է խորհրդավոր դաշույն—յառաղանը, այն՝ որ նվիրել է խօկական մավրը, այն՝ որ հազվագյուտ է և պատրաստված է թունավոր մետաղից:

Երբ Փափաղյանին տեսնեք Օթելլոյի դերում, դիտցեք, որ նրա ձեռքում մավրիտանական դաշույնն է... այն՝ որ շատ յագոների վիզ է թոցրել:

2. ԹԱՆԿԱԳԻՆ. ՄԵԴԱԼԻՇՆԸ

Այն ժամանակ նա բոլորովին Երիտասարդ էր, սակայն անունը, շատ նման այն խարույկին, որն ապակայում մեծ հրդեհ պիտի առաջացնի, իր վրա Երբեկու մարդկանց ուշադրությունը:

Ամենքն էլ ցանկանում էին տեսնել Փափաղյանին: Եվ ով ուղում էր, կարող էր տեսնել, իսկ ինքը՝ Փափաղյանը չէր կարող տեսնել նրան, ում երազում, կարուտում էր:

Մահն ու սև հողը, որպես հավերժական պատճեշ,
փակել էին ճանապարհը: Իսկ արտիստը, երխտասարդ
մարզը, երազում էր՝ գոնե մեկ անգամ հրաշքով տես-
նել նրան, գեթ շոշափել զգեստները:

Եվ . . . Ով մարդկային երջանկություն, բարի
ասողի ասկ էր ծնվել արտիստը, նրա երազն իրա-
կանություն դարձավ:

Փափազյանը կարող էր տեսնել իր հոչակավոր
նախորդին՝ Պետրոս Աղամյանին: Բայց, սպասեցեք...
Կյանքում այդպիսի բաներ չեն լինում:

Փափազյանը լսել էր, որ Պոլսում, մի առետրա-
կանի մոտ գտնվում էին Պետրոս Աղամյանի բեմա-
կան շորերը, այն զգեստները, որոնցով մեծ արտիս-
տը հանգես է եկել Օթելոյի, Համլետի գերերում: Ու-
րեմն հասել էր երջանկության ըոսեն: Փափազյանը
կարող էր շոշափել Աղամյանի զգեստը, նույնիսկ հազ-
նել, բեմ բարձրանալ:

. . . Մեկ օր էլ, վաղ լուսաբացին, նա ներկա-
յացավ առետրականին և խնդրեց իրեն վաճառել բղ-
դեստները:

Առետրականը, ինչպես բոլոր առետրականները,
խորամանկ էր: Նա զգաց, որ այդ սիրուն շորերը շատ
ավելի թանկարժեք են, քան ինքը կարծել էր մինչ
այդ: Աղամյանի բեմական զգեստը ինչպե՞ս էր ըն-
կել վաճառականի ձեռքը, անհայտ էր: Սակայն հայտ-
նի էր այն, որ պճնասեր պոլսեցիները փող էին տա-
լիս առետրականին, վերցնում Աղամյանի շորերը, կի-
րակի օբերը հագնում, իսկ հետո վերադարձնում էին
տիրոջը:

Շահասեր առետրականն իմացավ զգեստների

գաղտնիքը և Փափազյանից պահանջեց այնպիսի գումար, որի մասին արտիստը երազել անդամ չէր կարող:

Աւըեմն այդպիս, Աղամյանի շոքերը պետք է մը-
նային առեարականի ձեռքին, հանճարի զգեստը պետք
է մնար մի մարդու մոտ, որը նրան շահույթի առար-
կա էր դարձրել: Իսկ Փափազյանի կարժարը...

կաց լացեց երիտասարդ արտիստը, բայց ի՞նչ
կարող էր անել:

一一六

Եվ մի գիշեր, երբ Բոսֆորի ափին քուն էր մը-
տել Պոլիսը, գաղապողի վաճառականի տանը մտե-
ցավ մի մարդ։ Նա կարողացավ առանց աղմուկի ներս
մտնել։ Փնտուց և գտավ . . .

Նրա ձեռքի տակ ընկան անդին քարեր, ոսկի,
ապաբանջան, անբավի մի հարստություն: Բայց այդ
բոլորը չէին գերում որոնող մարդուն: Վերջապես նա
տեսավ այն անդուկը, որը հարկավոր էր իրեն:

Որոնող մարդուն թվաց, թե սնգուկի մեջ
պահպաժ իրերը շնչնջում էին. — Տար, ապատիր:

Շտապով վերցրեց իր երազածը, սեղմեց կրծքին
ու բաց լուսամուտից թռավ դուրս:

Վահրամ Փափադյանն էր դա:

Նա փախցրեց Պետրոս Աղամյանի բեմական շուրերը։ Գնաց և երր բավական հեռացել էր արդեն, կանգնեց։

Գիշերն էր նըան շրջապատողը, իսկ վերևից բաւելքամի աչքերի նման ժպտում էին աստղերը

Երջանիկ էր Փափազյանը։ Աղամյանի շոքերը նա

սեղմեց շուրթերին, նայեց Աղամյան—Համլետի մեզ գալիսինին և մի պահ պատկերացրեց Աղամյանին այդ շորերն հագած՝ Համլետի դերում։ Նրան թվում էր, թե արդեն լսում է Աղամյանի հրաշալի ձայնը,— «Լինել, թե չինել...»

Ասում են, թե մինչև հիմա էր, երբ արգեն երկար տարիներ են անցել, երբ, ավազ, սպիտակում են արտիստի մազերը, բեմ բարձրանալիս, Համլետ խաղալիս, Փափաղյանն իր կրծքին է դնում Աղամյանի կախարդական մեղալիոնը, որպեսզի Համլետը բախտավոր լինի...

3. Ա.Պ.ՉԱԽ. ՊԱՀԱՆՁԸ

Փափաղյանը մի աղջիկ ունի, անունը՝ Մարգու Այն, ինչ պատմելու եմ, եղել է Երևան քաղաքում, տարիներ առաջ, երբ Մարգոն դեռ երեխա էր, նա զջում էր հայրիկի հետ և միշտ էր, ներկայացումների ժամանակ, նստում էր առաջին կարգի մի հարմար աթոռի վրա, թաթիկներին էր հենում սիրունիկ կըդակը և դիտում էր պապային—Օթելոյին։

Թանի՛ քանի՛ անգամ նա հորը տեսել էր այդ գերում, սակայն դարձյալ դիտում էր և չէր հագենում։

Մեկ անգամ, սակայն, փոքրիկ Մարգոն իրեն վատ զգաց։ Գլուխն էր ցավում։

Վազեց գեպի կուլիսները, գտավ Փափաղյանին և առաց։— Պապա, այսօր մի խաղա, հիվանդ եմ, տուն գնանք։

Պապան, ի հարկե, չպիջեց, հարկավոր էր խաղալ, հասարակությունը սպասում էր, դրա համար էլ գրկեց։ Համբուրեց աղջկան և առաց։— Հանգիստ եղիր, բավկա, շուտ կվերջացնեմ։

Մարդոն նորից եկավ դահլիճ և իր տեղը նստեած, շարունակեց նայել: Բայց զլխի ցավը չէր կարվում: Հանդիսատեսը Փափաղյանի խաղով հմայված, տարվել էր: Մարդիկ կարծես թե տեղափոխվել էին մի ուրիշ աշխարհ: Խում էին Օթելլոյին, որի որտում արդեն բորբոքվել էր ահավոր խանջը: Տանջվում էր Օթելոն, տանջվում էր Դեղգեմոնային, իսկ Յագոն՝ որոդայթ էր լարում:

Մարդիկ սրտատրոփ լսում էին Փափաղյանին և ահա, այդ ժամանակ, բարձր ձայնով, այնպես որ հայրը լսի, Փափաղյանի աղջիկը բռավեց, — Պապն, այսօր մի քիչ շնոր խեղդիր Դեղգեմոնային, տուն դնանք:

Ասում են, թե դահլիճում եղած մարդիկ այս ձայնը լսելով, հանկարծակի եկած՝ զարմացան, իսկ Փափաղյանը մի քանի քայլ առաջ եկավ և լայն բացված աչքերով նայեց աղջկան: Դիտում էր Օթելլոն... Նրա աչքերում՝ խանդի և կատաղության բոցերի վրա իջել էր հայրական սիրո խորհուրդը, մի բան, որը միայն Մարդոն կարող էր տեսնել:

Աղջիկը հասկացավ:

Օթելոն ասում էր. — Լոիր, լոիր, գառնուկս...

4. ՄԱՅՐԸ

Հանճարեղ Շեքսպիրի Օթելոն եղել է արարտ Նրա նախնիները փախել են հայրնի աշխարհից: Մի մասը գնացել է գեղի եղեան ծովը, իսկ մյուսը՝ արևմուտք: Արևմուտք փախած արարները կոչվել են մավրիտանացիներ: Հիմա էլ, երբ վենետիկի մավրի Օթելոյի ժամանակից դարեր են անցել, ապրում են

նրա ցեղակիցները: Պարզ ասած՝ կան Օթելլոյի հետ-
նորդները և սիրով են դիտում Օթելլո-Փափաղյանին,
իրենց նախահորը:

Մեկ անդամ Փափաղյանը խաղում՝ էր մավրի-
տանացիների համար: Նրանք սպասում էին: Քիչ հե-
տո բեմ էր բարձրանալու ինքը՝ Օթելլոն:

Որոտացին ծափերը, բացվեց վարագույրը: Իսկ
Օթելլոն չեկավ: Ի՞նչ էր պատահել Փափաղյանին: Նո-
րից որոտացին ծափերը, կանչեր տեղացին, իսկ Օ-
թելլոն չկար ու չկար:

Լռեցին: Որպես գիշերը՝ իջավ կառկածանքը: Տիուր
էին, ի՞նչ պատահեց, ուր է Օթելլոն...

Երկար սպասեցին և այն ժամանակ սկամորթ-
ներից մեկը՝ փորձված մի ծերունի գնաց դեպի ընմ,
անցավ կուլիսները: Այնտեղ, աթոռի վրա, արդեն
կը իմ եղած, նստել էր Փափաղյան-Օթելլոն: Սկամորթ
մարդը փոքր ինչ կկոցած աչքերով նայեց Օթելլոյին
և զարմացավ: Մավրի աչքերում արցունքներ կային:
Լալիս էր Փափաղյանը:

Մավրիանացին ջերմորեն գրկեց նրա դլուխը,
նայեց Օթելլոյի աչքերին և ասաց.— Ի՞նչու ես լա-
լիս...

Պատասխանի փոխարեն Փափաղյանը վերցրեց
նոր միայն ստացված հեռագիրը և մեկնեց սկամորթ-
մարդուն:

Այնտեղ պարզ տառեցով դրված էր— «Մայր,
մահամերձ հիվանդ է, շտապիր»:

Փափաղյանի մայրը.... Օթելլոն լալիս էր.... Նու-
որ հզոր էր, լալիս էր: բեմ բարձրանալ չէր կարող:

Ծերունին մեկ անգամ էլ կարգաց հեռագիրը և
բաղմախորհուրդ շարժեց գլուխը:

Իջել էր ծանր, սիրտ մաշող լուսթյուն:

Ծերունին դեռ նայում էր հեռուները, իսկ հետո
ձեռքը դրեց Փափազյանի ուսին, թափանցող հայաց-
քով նայեց նրա վշտակիր աչքերին և ասաց.— Մի
լար, Օթելլո, բոլոր սկամորթների մայրերը քո մայ-
րերն են, դու մի մայր չունես... Հավատա, նա չի
մեռնի:

Նորից թնդացին ծափերը և բեմ բարձրացավ
հղոր Փափազյան — Օթելլոն՝ բազում մայրերի զա-
վակր:

Ու ասում են, թե այդ օրը նա այնպես խաղաց,
որ այլևս չի կրկնվի:

1940 թ.





ՀԱՆԴԻՊՈՒՄ

Մութ էր սենյակում, լույսը վառեց: Ահա պարզ երևում է նրա գեմքը: Ի՞նչ կերպարանք է դա: Գերմանացի է: Մայոր է եղել, իսկ հիմա գերի է, անպիտանը քծնում է:

Գրիգոր Համբարձումյանը պետք է հարցաքննի նրան:

Եվ սկսվեց: Շատ բաներ իմացավ Համբարձումյանն այդ գերմանացուց, գրանք բոլորն էլ հարկավոր էին իր իշխանությանը, իմացավ և այն, ինչ անձամբ իրեն էր հարկավոր:

* * *

— Ձեր գեմքն ինչու է այդպես տարօրինակ, կարծես թե կարկատել են,— զիմելով գերմանացուն, հարցրեց Համբարձումյանը: Սկզբում գերին չէր ուզում պատասխանել, բայց քննիչի ժպիտը, խոսակցության մեջմ տոնը նրա մեջ մտքեր հարուցեցին և ուրոշեց սրտաբաց լինել:

— Ի՞նչ կա որ, կասի իրականությունը, զուցե թե շահի հարցաքննողի համակրանքը:

Գերմանացին ցանկանում էր դիմել խորաման-
լության:

— Դեմքս . . . իսկապես որ կարկատած է: Պա-
տահեց կիսում, արկի ահեղ շփումը, ա՛յ, տեսեք, գեմ-
քիս մի մասի կաշին պոկեց, հետո կարկատեցին, բը-
ժիշկը հմուտ էր, ժամանակակից բժշկությունը այդ-
պիսի բաներ անում է:

— Կարկատեցին, — Համբարձումյանը Ժպտաց
(հարցաքննելիս ինչու բարկանալ), իսկ կարկատան
որտեղից, ձեզ մոտ ճարվում է, ինչ է, շա՞տ կա, —
կատակեց նա:

— Կարկատա՞նը, — գերմանացին մի պահ ես վա-
րանեց, ասե՞լ իսկությունը, թե ոչ, բայց որոշել է, կա-
սի, գուցե և իր համար լով լինի:

Պարոն քննիչ, դուք ոռւս եք, այդպես չէ՞

— Ինարկե, — ասաց Համբարձումյանը:

Նրա շիկավուն մազերը, կապույտ աչքերը, ոռւ-
սերեն մաքուր խոսելը, կասկածի տեղիք չեին տալիս,
իսկ գերմանացին ոռւսերեն բավական գիտեր:

— Դե, ուրեմն կասեմ, — ստորաքարշ Ժպտաց գե-
րին, վիզը ներս քաշեց, կուցավ և շարունակեց, — ա՛յ,
թե ինչ կասեմ, բայց հավատացեք:

— Նու, ի հարկե:

— Պարոն քննիչ, ես ոռւսներին սիրում եմ, այս,
այն, ես ուրիշ գերմանացիների նման չեմ, ես սիրում
եմ ոռւսներին, սիրում եմ . . .

Գերին նկատեց, որ քննիչը կարծես թե հասկա-
սում էր իր կեղծիքը, դրա համար էլ ավելի կուցավ,
աչքերը կկոցեց և համոզիչ տոնով կրկնեց, — սիրում
եմ, իմ պապս, իմ հայրս էլ այդպես էին, ոռւսների

գեմ ոչինչ չունեմ, իսկ այ, մյուսները — ահա ուկարախացիները, վրացիները, հայերը . . . Կվառեմ մեկ մեկ, աստված է վկա՝ կապանեմ, — բայց դուք ուսեք չէ՞ պարոն քննիչ:

— Մո՛ւս, ի հարկե, բայց պատմիր, շարունակիր:

— Ահա այդպիս, կիևում պատահեց: Ինձ պառկեցրել էին հիվանդանոցում, բերին մի հայ կնոջ, երկու տարեկան աղջիկ ուներ կրծքին, անպիտանը թույլ չտվեց աղջկանից կաշի պոկել իմ գեմքը կարկատելու համար, ուրեմն և սպանեցին, իսկ աղջկա զեմքի կաշին . . . Պոկեցին, կարկատեցին գեմքիս, շատ լավ է բռնում: Ահա:

— Այդպե՞ս . . .

— Աստված վկա, պարոն քննիչ, հայ էր, հայ: Դե, ևս նրա անունն էլ գիտեմ, ինչպես մոռանալ չ'է որ կաշի տվին, անունն այսպես էր՝ Մուսաննա Համբարձումյան, իսկ աղջիկը՝ Մանուշ: Ինչպես չգիտենալ, չ'որ նրա կաշին գեմքիս վրա է, բայց հայ էր, աստված է վկա, հայ . . . Պարոն քննիչ, ևս ուսւների գեմ ոչինչ չունեմ, իսկ մյուսներին . . .

— Ի՞նչ է ասում այս դեղ . . .

Ինչո՞ւ սենյակը մթնեց, ի՞նչ մշուշ էր այդ, ի՞նչ պատահեց Համբարձումյանին . . . Բայց ոչ . . . Քննիչը ցասումով ոտքի կանգնեց: Գերու օձիքից բռնած քաշեց, մոտեցրեց իրեն, նայում էր ուղիղ աչքերի մեջ:

Գերմանացին, որ գեռ բարբառում էր, քըթընջում, թե հայ էր, Համբարձումյանի աչքերին այլևս նայել չէր կարող և ինչպես նայել, մի՞թե այդ շափմոտիկից հնարավոր է գիտել կըակի լեզուները, որոնք

այրելու սպառնալիքով կարծես թե ակնակապիչներից
դուրս են թռչելու:

— Կոկիծն ու ատելությունը բոցավառվում է ին
մարդկային աչքերում:

Համբարձումյանը նայում էր նրա գեմքին, որի
երեսի վրա, որպես գերեզմանում, հանգչում էր իր
տանջամահ արած աղջկա մարմնի մի մասը:

1943 թ.





ՈՐՆ ԷՐ ԱՐԴԱՐ

Եկա, — կարծես թե ազգարարում էր շոգեքարշը, որ սուլելով կանգնեց Լենինական կայարանում:

Եվ իրոք, շատերն էին սպասում նրան:

Ուղևորներին դիմավորելու համար կառամատույց եկած մարդիկ որոնում էին ամենքն իր ցանկացածին: Խսվում էին սրտառուչ բացականչություններ, հարազատներն էին գրկախառնվում: Իսկ Հայկ Շահնշաթունուն ոչ ոք չէր դիմավորում: Նա հայրենիքաղաքը մտավ օտարականի պես... — Ինչու ինքն էլ հեռագիր չէր տվել, որ դիմավորեին, — մտածեց նա, բայց այդ նույն պահին էլ նախատեց իրեն, — ինչ թուլամորթություն, չէ՞ որ որոշել է առանց աղմուկի, հանկարծ հայտնվել:

Երկար տարիներ բացակայելուց հետո, մայոր Հայկ Շահնշաթունին կրկին մտավ իր ծննդավայրը: Նա, որ մինչ այդ ուրիշ մտքերով էր տարված, ուստից վերապրել այն ամենը, ինչ մտորել էր հայրենի քաղաքի մասին:

— Հայրենի՝ քաղաք... Աշխարհում եղած բոլոր քաղաքներից նրա համար ամենածանոթն ու հարա-

պատճ այս փոքրիկ քաղաքն է, Ո՞րն է դրա պատճառը, միթե միայն այն, որ այստեղ է ծնվել, կամ այն, որ նրա պապերի հիշատակներն անգամ այստեղ են, թե այն, որ գարնան մի անուշ օր նրա առաջին սերը ծաղկի նման բացվեց այս քաղաքում, ծառաշաբարակի վրա լսեց երազուն կույսի խոստովանությունը... Հավանական է, և այն է հարազատ դարձնում այս քաղաքը, որ Շահիսաթունին սովորել, կրթություն է ստացել, ապա ավարտելով բարձրադույն դպրոցը, աշխատել է որպես կառուցող ճարտարապետ այստեղ բարձրացնելով իր գործի առաջին պտուղները՝ մի քանի գեղեցիկ շենք, որ արձանների նման կենդանի են պահում կառուցողի հիշատակը:

Ո՞վ դիտե, զրանցից ո՞րն է ավելի զորեղը, բայց զրանք իրար միացած մի հզոր, մի ձգող ուժ ունեն, որ Շահիսաթունու համար այս քաղաքը դարձնում են, ամենաանվիրականը:

— Հայրենի՝ քաղաք... Եվ որտեղիցորտեղ Շահիսաթունին կրկին հիշեց իր ուսւ ընկերոջ պատճությունը, որ լսել էր ուղմաճակատում։ Մի անգամ, խրամատի մեջ, երբ թնդանոթը լսեց, Վասյան ասաց. — Մի մարդ շըջում է ամբողջ աշխարհը, ծերության օրերին վերադառնում է հայրենի քաղաքը և սկսում է որոնել... Անցնում է վաղուց ծանոթ փողոցներով, կարոտով շոշափում է պատերը, կարծես թե նրանց մեջ որոնելով անցած իր կյանքը։ Դիշերով կանգնում է այն լուսամուտի առաջ, որտեղից մի ժամանակ նայում էր իր սիրած աղջիկը, հետո գալիս է այն կաղնու մոա, որի շվաքի տակ մայրը, վաղ մանկության օրերին, իրեն օրոր էր ասել, ծերունազարդ

գլուխը դնում է այն քարի վրա, ուր իր մայքն էր նստում և քնում է հանդիսատ, հավերժական քնով:

Հայրենի՝ քաղաք... Այնտեղ, ուազմաճակատում, թնդանոթների որոտի մեջ, երբ Շահխաթունին լսեց այս պատմությունը, հուզվեց, իսկ հիմա, երբ ինքն է վերադարձել և կանգնել է հարազատ քաղաքի հարազատ կայարանում, նոր միայն լրիվ չափով հասկանում է ընկերոջ պատմության ողջ իմաստը:

Այս կարդի մտորումներով նա գուրս եկավ կայարանից գեպի քաղաք տանող ճանապարհը: Մարդիկ շտապում էին ըովե առաջ հասնել տուն: Հայկը մի պահ կանդնեց: Գարնանային երեկոյի զովաշունչ քամին էր այդ, որ հաճությամբ կպչում էր նրա գեմքին և նորից թուչում էր հեռուն:

Հայկը սպասում էր: Նրա աչքերը, որ կիսախուփ էին, իրենց մեջ ունեին խորասույզ մարդու արտահայտություն:

Որպես անհանդիսատ ճանապարհորդներ նրա մտածումները փոխեցին իրենց ուղիները՝ տեղի տալով բոլորովին ուրիշ բաների: Ավելի ճիշտ կլինի ասել՝ նորից ընկան իրենց հին ընթացքի մեջ: Շահխաթունին կրկին սկսեց մտածել այն մասին, ինչ իրեն զրադեցնում էր, երբ գնացքը մտանում էր քաղաքին:

— Գուցե թե մոռացել է ինձ,— ահա այս էր նրա մտածմունքների առարկան:

Նա կանգնած էր ոտքերը փոքր ինչ իրարից հեռու, ճանապարհորդական պայուսակը ձեռքին:

— Եկա, — կարծես թե այդպես էր ասում նրա կեցվածքը:

Այս քաղաքում ժկվ էր սպասում Հայկին: Սպասում էր մայրը, հարազատ քույրն էր սպասում, ընկերներն ու բարեկամները և նա...

Ահա թե ինչն էր այս բողեին Հայկին հռւղողը: — Նա...

Սրանից ուղիղ վեց տարի առաջ, մի երեկո, երբ Հայկ Շահիսթունին մեկնում էր սազմաճակատ, կինը փարվեց կրծքին և լաց եղավ:

— Շնուռշնուր գրիր, չմոռանաս, — ասում էր Հասմիկը:

— Սպասիր, — համբուրելով Հասմիկի աչքերը, ասաց Հայկը և դնացը տարավ նրան: Սկզբում մասնակցեց սպիտակ ֆինների դեմ մղված կովին, հետո պետք է գար, բայց սկսվեց Հայրենական պատերազմը: Դրանից հետո դըեց միայն մի նամակ: Դեպքերն այնպես դաստվորվեցին, որ անցավ թշնամու թիկունքը, զործեց որպես պարտիզան, կովեց՝ մինչև այնտեղ հասավ սովետական զորքը: Վիրավորվեց մի քանի անգամ և ահա վերադառնել է: Շատերն էին կարծում, թե այլիս չի դա, բայց եկավ:

— Իսկ սպասում են, իսկ Հասմիկը... Դեռ մտում էր Հայկը:

Հանկարծ վճռական որոշումով գլուխը վեր բարձրացրեց: Նրա աջ կողմում, ոչ ավելի քան մի քանի հարյուր քայլ այն կողմ, գտնվում էր երկաթուղային հիվանդանոցը:

Երբ Հայկը բանակ էր գնում, Հասմիկը որպես քույր աշխատում էր այնտեղ:

Նա շտապով նայեց ժամացույցին։ Ֆոսֆորային-
փայլը ցույց տվեց դիշերվա ժամը տաննմեկը։

Գուցե այստեղ է։ Գնա՞լ թե ոչ։

Մինչ ցանկանում էր որոշում հանել, քայլելու
արդեն տանում էին նրան։ Եվ իսկապես, էլ ինչու-
առասել։

Ահա և հիվանդանոցը։

— Բարե՛ ձեզ։

— Բարե՛, — ոտքի կանգնելով պատասխանեց նա-
խամուտքի հերթապահը։

— Կարմղ եք ասել, քույլ Հասմիկ Բաբայանն
այստե՞ղ է աշխատում։

Այո, և հիմա էլ հերթապահ է։

Եահսաթունու դեմքը կարմիրը պատեց։ Այն-
քան երազածը, սիրելին, այսքան մոտ..., նրա սիրան
անհանդիսա բարախեց։ Անսովոր մի ջերմություն
համակեց նրան, բայց կարողացավ ծածկել հուզմուն-
քը և վազուց կայացրած որոշման համաձայն աշխա-
տեց ներկայանալ հանկարծ, հանդիսա։

— Ասացեք, որ ցանկանում եմ ներս գնալ —
խոսեց նա։

— Իսկ ով եք, չի կարելի իմանալ, ախր հիմա-
ուշ է, — Ժպտաց հերթապահը։

— Հետո կիմանաք, հիմա խնդրում եմ...

— Լավ, — կրկին Ժպտաց հերթապահը և զան-
գահարեց։

Պատասխանեցին։

— Հասմիկ, զինվորական մի երիտասարդ խընդ-
րում է վեր բարձրանալ, — ասաց հերթապահը և
լսելով պատասխանը, քաղաքավարությամբ դարձավ

Հայկին. — Տեսա՞ք, ընկեր, ես ձեզ չէի՞ ասում, այս
ժամին հիվանդին տեսակցության գնալ չի կարելի:

— Հիվա՞նդ, ի՞նչ հիվանդ, — ծիծաղեց Հայկը, —
ես իրեն եմ ցանկանում, իրեն եմ ուղում:

Հերթապահը զիջեց. — գե՛, որ այդպես է, խընդ-
րե՛մ, բարձրացե՛ք:

Հայկը շտապով հանեց գարնանային վերնա-
զգեստը:

Գեղեցիկ, ատլետիկ մարմնին հավասարապես
նստած շորերը առանձին փայլ էին տալիս նրան:
Կրծքին շողոզում էին շքանշանները: Դեպի վեր սան-
րած մազերն ավելի ցայտուն էին գարձնում տղա-
մարզկային լայն ճակատը, որի տակ շողում էին
ուսորակ աչքերը:

Հերթապահը, որ մոտ քառասունհինդ տարեկան
կին էր, փորձված դիտողի հմտությամբ նայեց, հա-
ճայցքով ժպտաց, կըկին ուղղեց ակնոցները և բարե-
կամական մտերմությամբ հարցրեց. — Երիտասարդ,
կարելի՞ է իմանալ, զուք նրա ի՞նչն եք:

— Ի՞նչը... ամուսինը, ահա, — ժպտալից,
փակելով աչքի մեկը, ինչպես նա անում էր որևէ
գաղտնիք հայտնելիս, ասաց Հայկը, մի պահ մոռա-
նալով իր որոշումը՝ հանկարծներկայանալու մասին:

— Ի՞նչ ամուսին, ի՞նչ եք ասում, ախր...
Նա...

Հերթապահը ուսերը վեր քշելով, ներքեկի շըր-
թունքը փոքր ինչ զուրս դցեց: Նրա զեմքին խոսուն
մի արտահայտություն կար:

Շահիմաթունին թեքվեց դեպի նա, — ի՞նչ է ա-
սում այս կինը:

Ժաղիտն արդեն սառել էր Հայկի գեմքի վրա, բայց շուտով հալվող մոմի նման մաշվեց այդ ժպիտը, անէացավ, տեղի տալով անորոշ մի արտահայտության, նման հալվելուց հետո նորից սառած մոմի զանգվածին, որ չես կարող ասել, թե սկզբից ինչ ձեւ ունեցել:

Սակայն Հայկը ջանաց իրենից հեռու վանել անորոշ այդ դրությունը: Քննող աչքերով ցանկանում էր առանց ավելորդ խոսքերի կամ հարցի իմանալ հերթապահի միտքը, որ նրան կարեոր գաղտնիք էր թվում:

Բայց ի՞նչ գաղտնիք, մի՞թե Հայկն ընդունակ է կասկած հարուցող որևէ հարց տալ, կամ լսել վրա պատասխանը: Միթե գա աննպատակ չէ: Նա պետք է վեր բարձրանա և տեսնի Հասմիկին: Ահա բոլորը:

Մինչ տիրապետում էր այս տարօրինակ պահը, շեմքի վրա հայտնվեց ինքը՝ Հասմիկը: Կարծես թե գարնան պայծառ առավոտն էր, որ կնոջ կերպարանք առած ներս մտավ:

Զյունի նման սպիտակ խալաթը, որ գրկել էր ոըլլացիկ հասակը, նրան խոկական կարապ էր դարձրել: Լայնորեն բացված կապույտ աչքերի վրա, որպես բընատուր հովանի իջած արտեանունքներն անշարժ մընացին: Անհավատալի մի պատկերի առաջ կանգնած մարդու տարակուսանք և ահավոր սարսափ էր ապրում նա:

Հայկի համար, սակայն, անցավ տարակույսի պահը, մի ոստյունով նա ցատկեց առաջ, մոտեցավ Հասմիկին: Զէ՞ որ այդ նա է, իր ջերմ սիրո առարկան:

Չանցած վայրկյան, Հայկի ամուր բազուկների

մեջ ոլուխը խոնարհած հեկեկում էր Հասմիկը:

— Դե՛, մի՛ լար, տես, եկել եմ, ինձ ոչինչ չկա, Հասմիկ, — հուզված ասում էր Հայկը և կարոտով համբուրում:

Եվ ո՞վ կարող էր արդելել նրան, ո՞վ իրավունք ուներ, չէ՞ որ տարիներ էր երազել.. Իսկ հերթապահի ունեցած զարժա՞նքը.. Պարզ է, իհարկե, զա Հայկի հանկարծակի հայտնվելուց էր: Բայց այս ի՞նչ է, ինչո՞ւ Հասմիկը Հայկի դեմքին ուղիղ չի նայում, ինչո՞ւ խուսափում է, ի՞նչու ձգտում է հեռու մնալ.. Ինչո՞ւ...

Զար մի նախազուշակում վերջնականապես երեւաց Հայկի ուրախության վրա: Նա ևս բնազգաբար ետքաշվեց:

Շահխաթունին կրկին տեսավ հերթապահի բազմախորհուրդ աչքերը, դուրս ընկած, մաեղ շրթունքները, որոնք բացված գրքի նման պատրաստ էին հայտնել գրադանիքը:

Ահա թե ի՞նչ...

Օգավելով առիթից, Հասմիկը թողեց Հայկին և հեկեկալով ներս գնաց, ընկավ բազմոցի վրա:

Անպատճախան մնացած Հայկը կանգնել էր շվար, բայց կասկածը, ինչպես յուրաքանչյուր մի իրավացի կասկած, կես պատճախան էր նրա համար:

Կարճ տեսեց Շահխաթունու և հերթապահի միշտ տեղի ունեցած խոսակցությունը: Հայկի համար ամեն ինչ պարզ զարձավ:

Հասմիկը չէր սպասել:

— Բայց մենք երեխա ունենք, — ինքնիրեն, հա-

դիվ լսելի ձայնով խոսեց Շահինաթունին:

— Նա կա, ձեր տանն է, ծնողներիդ մոտ, նուայնքան լավն է, ձեզ այնքանեւ նմանաւ

Երբ դուրս եկավ Հայկը, քամին դադարել էր: Լեռնինականի պարզկա, հիանալի գիշերն էր:

Վրդովված մարդուն դիմավորեց հայրենի քաղաքի կարծես թե համբուրող, դուրգուրող բնությունը:

3

Հասմիկը մնաց մենակ: Նա խնդրեց ակնոցավոր հերթապահին, որը Շահինաթունու գնալուց հետո բարձրացել էր վեր, իրեն մենակ թողնել: Հերթապահը, չը զիտես ինչու, նախ հանեց թաշկինակը, մեծ խնամքով սրբեց ակնոցների ապահինելը, ապա լուս, առանց որևէ խոսքի, հեռացավ:

Ամեն ինչ իր վերջն ունի: Հասմիկը ևս դադարեց լաց լինելուց: Նստած էր բազմոցին ու ակնապիշնայում էր մի կետի: Նա մտածում էր: Ո՞րն էր նրա մտածմունքի առարկան: Որոշակի դժվար էր ասել, ուրովինետե ոչ մի բանի վրա միտքը երկար չէր մնում: Սակայն փաստն այն էր, որ բոլոր խնդիրներում կար Հայկի ներկայությունը: Հասմիկը, եթե ցանկանար էր, չէր կարող որևէ որոշում կայացնել: Նրա մտքերը նըմանվում էին պղասորված ջրի, որն ալիքվում է, բայց ոչ մի որոշակի բան չի ցուցադրում: Նա աշխատում էր կենտրոնանալ, բայց իզուր, խառնիխուռն մտածութներն անորոշ էին, չնայած, որ նրան տանջող բոլոր հարցերը որոշակի մի նպատակ ունեին:

— Մի՞թե կարելի է ասել, որ Հասմիկը չի սիրել

Հայկին: Ոչ,— ներսից բողոքում էր նրա սիրտը, որպես նույն հարցի պատասխան — սիրել է . . . իսկ հիմա՞ , հիմա՞ . . . Եթե «այո», ինչպես թելագրում է նրա սիրտը, հաղա ինչն չսպասեց, ինչն . . . Միթե ամեն ինչ կատարվեց նրա ընկերունու խոսքով, որը դիշեր ու ցերեկ հասմիկի ականջն ի վայր շնչում էր՝ չթառամել, չդառնալ անտեր ծաղիկ: Ոչ, հասմիկը երեխա չէ, հաղա ինչն նա չլսեց իր մորը, որ իմանալով հասմիկի վարմունքի մասին, դառնորեն լաց եղավ, և ավելին, նույնիսկ հիշեցրեց ընտանիքի պատվի մասին:

— Մի արատավորիր անսւնդ, աղջիկս, սպասիր, կգա ամուսինդ և ավելի շատ կսիրի քեզ. . . Վերջապես, մի անպատճիր ինձ, որ քեզ դաստիարակողն եմ եղել... Մարդը սպասել պիտի դիտենա:

Այն ժամանակ այդ խոսքերը հասմիկի համար անարժեք էին թվում: Նրան գերում էր միայն և միայն այն միտքը, որ մարդիկ նախանձով պիտի նայեն իրեն, եթե դառնա Ամբատյանի կինը:

Թե՞ իր վարմունքը նրանից էր, որ շատ էր գեղեցիկ, հետեւում էին: «Գեղեցիկ լինել, մեղավոր լինել»... Հասմիկը հիշեց այս խոսքերը: Օ՛, ոչ, հաղար անդամ ոչ. նա չի կարող դա արդարացուցիչ համարել, միթե քիչ են այն գեղեցկունիները, որոնք սպասում են սրբությամբ, խնամում են իրենց զավակներին, եթե ուրիշները չգիտեն, աղա հասմիկը լավ գիտե: Նրանք, այդպիսի կանայք, մի ժամանակ այնքան մոտ էին հասմիկին, այնքան հարազատ:

Ամուսիններին ուազմաճակատ ուղարկած կանանց սրտալի կապն էր ստեղծել այդ հարազատությունը:

Իսկ հետո... Նրանք, շատերն, այս՝ չխռուեցին Հասմիկիւն հետ: Ուղղակի «Երես դարձրին» նրանից, երբ հետացավ: Իսկ նրանցից մեկը, այդ արդեն նա չի ուզում հիշել, բայց հիմա, հաշվեհարդարի այս ըստեին, չի կտրող չհիշել, երբ մեկ անգամ հանդիպեց Հասմիկիւն, նայեց ակնբախ արհամարհանքով և շատ խորհրդավոր եղանակով՝ իրեն թե թափ տվեց իր վերաբերուի վրայի փոշին: Դրանով նա շատ բան ուզեց ասել Հասմիկիւն, և Հասմիկն էլ հասկացավ: Այն ժամանակ Հասմիկը բոլորովին անկուլտուրական, նույնիսկ վայրի համարեց այդ վերաբերմունքը... Նա կրկին լաց եղավ:

Եվ ինչու մինչև հիմա, մինչև այսօր նա իրեն մխիթարել է այն մտքով, թե Հայկն այլիս չկա, չի գալու, ուրեմն էլ ինչ սիրո մասին նա կարող է խռանել... Բայց ինչպես, չէ՞ որ քիչ առաջ, երբ տեսավ Հայկին, նրա ամբողջ էությունը տակն ու վրա եղավ: Եկել է իր Հայկը:

«Ի՞ր լը, ինչ վատն է Հասմիկը, — ինքն իրեն դատապարեց նա: Ինչպես է նա Հայկին իրենը համարում... Ինչպես, բայց ինչպես կարող է չհամարել, չէ՞ որ նա իր Սուրբիկի հայրն է, — իր որդու... Սուրբիկի, բայց ոչ, նա իրավունք չունի Սուրբիկի անունը տալու, հասկա ինչպես թողեց, ինչպես հետացավ... Իհարկե, հեշտ է ասել այդ, բայց չէ՞ որ իր որդին է... Հասմիկը լաց եղավ: Սակայն ի՞նչ շահ այլիս անօգուտ ինքնապատապարտումից: Բայց չէր կարող հանդիսանալ: Անկախ իրենից մտածում էր և բոլոր հարցերում դարձյալ նա էր՝ Հայկը:

Նա ցանկանում էր իրեն արդարացնող կոնկրետ սկատճառներ գտնել, սակայն չէր կարողանում, որով-

հետև հենց որ մի պատճառ էր գտնում, գտնում էր նաև զբան ժխտողը:

Ի վերջո, նրա համար պարզ դարձավ (ասենք այդ սկզբից էլ պարզ էր), որ ամեն ինչում ինքն էր մեզափոր, ինքը և միայն ինքը, իր ոտին, իր սիրտը—ինքը, այս... Հապա ի՞նչ անել ուրեմն, ինչպես վարվել.

Այդ ժամանակ ինքն իր աչքում ընկած մի մարդ էր նա, որին պետք էր խղճալ, սակայն նա ինքն էլ իրեն չէր խղճում: Եվ. այնուամենայնիվ, շարունակում էր որևէ արդարացուցիչ բան գտնել: Զկար այդպիսին, բայց համառորեն որոնում էր:

Շուտով Հասմիկի դատողությունները բոլորովին շաղաղվեցին:

... Սակայն այդ ովկ է դուռը թակում: Հասմիկը նոր միայն զգաց, որ վաղուց արդեն լսում էր դուռը բախումը: Յանկացավ հավաքել իր ցրված մտքերը:

— Ո՞վ է, — հարցը նա:

— Բա՛ց, ես եմ, այդ ի՞նչ է պատահել քեզ,— պատասխանեցին դրսից:

Ի՞նչ... Իսկ դուք ովկ եք... ջղային, խզված ձայնով հարցը Հասմիկը: Սակայն ի՞նչ էր ասում նա, մի՞թե ձայնից չհասկացավ, այդ նա էր, որ ամեն օր, աշխատանքից հետո, գալիս էր իրեն տուն տանելու, — նոր ամուսինը:

Թատրոնական նկարիչ Սմբատյանն էր դաւ ձշմարիտ է, Հասմիկի համեմատությամբ բավական տարիքավոր մի մարդ էր, բայց Հասմիկին գեպի իրեն ձգողը նրա համբախ էր, և միայն այդ:

Փառամոլությունն էր, որ Հասմիկին մղում էր գեպի Սմբատյանը:

Սակայն խարուսիկ դրությունը երկար տևել չէր կարող:

Հասմիկը հասկացավ իր սխալը: Նա վերջնականապես համոզվեց, որ աշխարհում Հայկը, իր որդու հայրը, իրեն համար անփոխարինելի է: ավելի ճիշտ դրա պատճառն այն էր, որ հասարակությունը չխրախուսեց Հասմիկին: Նա, որ սպասում էր, թե ըոլորք նախանձով պիտի նայեն իրեն, հանդիպեց ընդհանուրի հանդիմանությանը:

Եվ ահա, այս պայմաններում, Հայկի վերադարձը նրան չէր կարող չկանգնեցնել վճռական որոշման առաջ:

Սակայն դուռը թակում էին: Ամբատյանը երկար էր սպասել:

Բայց չդիտես ինչո՞ւ՝ Հասմիկը պատրաստ էր հարձակվել նրա վրա, բղավել: Գուցե այդ էր պատճառը, որ մեկ անգամ ևս ասաց, — Ո՞վ եք դուք: Եվ, այնուամենայնիվ, տարտամ քայլերով մոտեցավ դըռանը:

Բանալին դուան անցքի մեջ զանդաղ շուռ տըրպեց: Ներս մտավ նա, որի ներկայությունը այդ պահին Հասմիկի համար անտանելի էր:

Հայկ Շահիսաթունին դնում էր զեպի քաղաք, գնում էր հանգարտ, առանց շտապելու: Ճշմարիտ է, շատ էր խռովահույզ, բայց պատերազմի կրակներից եւ լած մարդու վճռականություն ուներ նա: Պատերազմում ամենակարեսը բաները վերջին հաշվով լուծվում են սրբ հարգածով: Հայկը սովորել էր զրան, սակայն այս հարգը... նա ստիպված էր կռվի մտնել սեփա-

Հան զգացմունքների հետ: Այսուեղ որոշողը սիրտն էր, սուրբն ի՞նչ կարող էր անել: Բայց սխալ կլինի խնդրին հենց այլպես, ուղղակի մոտենալ: Մի՛թե պատերազմական կրակների մեջ կոփված, վճռական դարձած մարդը վճռական չէ նաև ուրիշ հարցերում: Դրան երկու պատասխան լինել չի կարող: Եվ այդ հանգամանքը շատ օգնեց Շահխաթունուն: Ճիշտ է, նրա ներքին աշխարհում, աշխան քամու և անձրեի բերանն ընկած ուռենու նման, թախծում էր ինչ որ բան, բայց վճռականությամբ կարողանում էր մեղմել, լոեցնել աներենությ այդ ուռենուն:

— Այո՛, — դատում էր Շահխաթունին, — հանգիստ ժամանակ, երբ խաղաղ էր ամեն ինչ, ես կարող էի ամբողջ կյանքու անկացնել և կարծել, թե կը նս նվիրված է, զժվարությունների ընկեր ու սրտակից... Զե՞ս որ այդ էր ասում նրա լեզուն, բայց նեղության մեջ բացվեցին բոլոր ծածկոցները:

Մտածելով այսպես, Հայկը նույնիսկ մի տեսակ թեթեսություն զգաց:

— Դա լավ է, ճշմարիտ, իսկ ինչ որ ճշմարիտ է, բարձր է ամեն ինչից, — կրկին խորհեց նա:

Բայց ահա աներենությ ուռենին... Իսկ որդի՞ն:

Սակայն նույն պահին էլ Հայկը կարողացավ լըսեցնել դրան... Նա դատում էր այսպես: — Լավ է, որ իմ որդին մայր չունենա, քան թե ունենա վատը:

Բայց ինչու հենց իրեն պետք է հանգիստեր այլպիսի մի կին, ինչու եղակիներից մեկը հենց իրեն պետք է հանդիպեր: Կան մարդիկ, որ չարությամբ են լցված դեպի կանայք: Շահխաթունին այդպիսին չէ: Նա կյանք է տեսել արջել է ամբողջ նուռախայով մեկ:

Նա հիշում է, թե ինչպես ահեղ կռվի ժամանակը ամուսինները գտնվում էին իրար կողքի: Մարդը ընկավ, կինը վերցրեց նրա հրացանը, կռվեց, պաշտպանելով ամուսնու դիակն անդամ, մինչև որ մի չար գնդակ խոցեց նրա սիրաը ևս: Շահխաթունին սեփական աշքով է տեսել և գիտե, որ պատերազմի գծից շատ հեռու, թիկունքում, ամուսիններին փոխարինելու համար գործարան են գնում կանայք: Նա հիշում է իր ընկերոջ կնոջը, որը հիմա աշխատում է նույն գաղգահի վրա, ուր նախքան պատերազմն աշխատում էր իր ամուսինը: Շահխաթունին այստեղ գալուց առաջ եղավ Խարկովում, Բաքվում, Երևանում: Ամեն տեղ նույնն էր տեսնում և կարոտը գեղի Հասմիկը՝ գրանից ավելի էր ուժեղանում: Իհարկե, նա տեսավ նաև բացառություններ, բայց ինչո՞ւ հենց իր սերն էր ընկնելու այդ բացառությունների մեջ, ինչո՞ւ...

Հայկն այս մասին էր գատողություններ անում, սակայն քմծիծաղ տվեց իր անօգուտ մտածումների համար և յուրովի ասաց.— Ի՞նչ ավելորդ բաններ, մեկի հետ պիտի պատահեր, դե՛, ուրեմն, ինձ հետ պատահեց:

Ահա և իր տունը: Հայկը կանգնեց: Փոքրիկ, մեկ հարկանի, թիթեղյա կտուրով մի տուն էր դա, ուրի դռանը կանգնած էին երեք բարդի և կատարները երկինք բարձրացրած, կարծես ցանկանում էին սլանալ գեղի վեր, բայց հողը ամրորեն ձգում էր նրանց: Որքան հարազատ է այս տունը, իսկ բարդիների ուղացքը... Հայկը զգույշ քայլերով, կամացուկ, կարծես թե երեխային չարթնացնելու համար, մոտեցավ լուսամուտներին: Այնտեղ մայրն էր, քույրը և որդին:

Լույս չէր երեսում, քնած էին: Հստ երեսույթին, բավական ժամանակ էր անցել: Նրանց տունը կայարանից շատ հեռու չէր, բայց գանգաղ էր եկել: Հայկը թեքվեց գեղի լուսամուտը, ոչինչ չէր երեսում, ոև քող էր քաշված:

Լուսաքողարկում է,— մտածեց նա և ձեռքը բարձրացրեց, ցանկացավ թակել լուսամուտը, նույն պահին էլ ինչ որ բան հիշեց: Անմիջապես կողքից առաջ քաշեց զինվորական պայուսակը: Որոնեց, գտավ ցանկացածը և դուրս հանեց: Լուսինը, որ երբեմն աղատվում էր ամպերից, այս անգամ լուսավորեց Հայկի ձեռքում եղած իրը, որը շողարձակ փայլեց: Շահխառթունին դիտում էր, իսկ լուսինը, կարծես թե դիտավորյալ, դեռ մնում էր ամպերից աղատ և լուսավորում շողշողուն իրը:

Դա մի վարսակալ էր, կանացի յուրածե սանր, որը Հայկը գնել էր ճանապարհին: Վարսակալն ուներ շողշողուն քարեր:

Գնելիս Հայկը մտածել էր, թե գա շատ լավ կսապի Հասմիկի ճոխ, երկայն մաղերին, իսկ հիմա... Հանկարծ կարծես թե այդ «հիմա»-ի պատասխանը տաւլով, տենդային շարժումով նա մի քանի կտոր արեց վարսակալը: Շողարձակ քարերը պոկվեցին և կաթկաթ, ինչպես տղամարդու արցունքի դուստ, բայց խոշոր կաթիւներ, սահեցին, ցած ընկան:

Հայկը թակեց լուսամուտը:

* * *

Այդպիս եղավ: Բայց կյանքն էլունի իր օրենքը: Կովից հաղթանակով վերադարձին փառքով են ընդունում:

Հենց լուսարացին, փոքրիկ բայց անսահման - դեղեցիկ այս քաղաքում, արևի լույսի նման տարածվեց Շահխաթունու վերապարձի լուրը: Ուրախությունից երիտասարդացել էր ծերացած մայրը, իսկ քույրը, հապա որդիին ու ընկերները: Եղան բարեկամները: Անմիջապես, ըստ ավանդական սովորության, առաջ բերին այն բաժակները, որոնք լիքն էին, երբ Հայկը բանակ էր գնում: Նորից փրփրեց հայրենի դիսին: Վերապարձի բաժակները լիքն էին արդեն:

Մայրն օրհնեց...

Նրա անհուն ուրախությունը բաժանում էին բոլորը:

Սակա խանդավառվել էին որքան համեստ, նույնաքան հոյակապ խոյակներով իրենց ճակատները զարդարած շենքերը, որոնք լուսավորված էին վաղորդյան արևի ճառագայթներով... և հպարտ էին, որովհետեւ կանգնած լինելով հին Անիին չափազանց մոտ, իրենց մեջ նորի հետ, նրա ճարտարապետական բարեմասնություններից շատ բան ունեն: Վերջապես հպարտ էին, որովհետեւ եկել էր իրենց կյանք տվող մարդկանցից մեկը:

Մայրական ուրախությանն այսօր մասնակից է չնաշխարհիկ Ալագյաղը... Որտեղից արդյոք այս հիանալի սարն այսչափ պայծառ է երեսում, որքան այստեղից... Լենինականի գեղեցկության պսակը լինելով, այդ նա է, որ մոր նման իր կրծքից բխեցնելով կաթնաղբյուրները, առատությամբ է լցնում Շիրակի դաշտավայրը... Որեմն նա էլ մի մայր է, որ իրավունքով բաժանում է մայրական ուրախությունը: Հապա Ախուրյանը... Որքան մեղմ, նույնքան

քաղցրանուշ մի երդով, որ միայն Ախուրյանն ունի, նա առաջ էր գաղում, որպեսզի իմաց տար իր ափերին մայրական ուրախության մասին և այն մասին, որ հրճվում են երկրի տերերը:

Հայկ Շահխաթունու ընկերները դատարկում էին ուրախության բաժակները:

Իսկ գրանից մի քանի օր անց, քաղաքային մեծ սրահում հանդիպման երեկո էր կազմակերպված: Ժողովուրդը մեծարում էր իր քաջարի համաքաղաքացուն: Հանդարս, առանց շատավելու, պատմում էր Հայկը: Նրան լսում էին խորն ուշադրությամբ: Նա պատմում էր հաղթական կոխվների մասին, իր ընկերների մասին, իր մասին: Նա պատմում էր ուկրաինական պարտիզանական խիզախ ջոկատների մասին, այն մասին, թե ինչպես էին ջարդում անարդ թշնամուն: Նա պատմում էր նաև իր սիրո մասին:

— Այստեղ, հեռավոր անտառներում, ես միշտ հիշում էի Հայաստանը, մեր քաղաքն էի հիշում, ձեզ էի հիշում, ընկերներ, և խփում էի թշնամուն, — ասաց Հայկը և փոքր ինչ լռելուց հետո, կրկին շարունակեց: — միշտ հիշում էի մորս, որդուս, իմ հարազատներին էլ հիշում...

Հայկը հանկարծ լռեց... Կոկորդում մի բան ճընշում էր:

— Նրա՞ն էր — գուցե այդ էր ուղում ասել, բայց ինչպե՞ս, ի՞նչ ասեր: Հայկը լուս էր: Ժողովի նախագահն անհանգստացավ: Լուսությունը բավական երկար էր տեսել: Հանկարծ Հայկը սկսեց որոնել: Ուշադիր նայում էր հայլաքածներին, — գուցե թե Հասմիկն էլ է այստեղ:

Նա որոնում էր իրեն շատ լավ ծանոթ դեմքը, կապույտ, երկնքի նման կապույտ աչքերը: Որոնում էր, այն, բայց և զայրացած էր:

Այդ պահին կարո՞ղ էր արգյուք Հայկը գիտենալ, որ կապույտ աչքերն էլ, ներումն խնդրելով, իրեն էին որոնում:

Հասմիկը գիտեր քաղաքային ժողովի մասին: Հանդիպման լուրը նրան հայտնի էր: Դուրս գալով տնից, նա ցանկանում էր տեսնել Հայկին: Սակայն չուներ այնքան համարձակություն և կամք, որ մտներ ժողովարան և ինչպե՞ս կարող էր այդպես վարվել:

Ի՞նչ էր ցանկանում Հասմիկը:

Նա կանգնել էր մթության մեջ, հենվել մի պատի և նայում էր գիմացը, ուր երեսում էին ժողովասրահի լույսերը: Նա թաքնվում էր մարդկանցից, ինչպես հանցագործ և անհանգիստ էր: Հասմիկը ներքին մի վճռով արգեն քանոդված էր համարում իր կյանքում նոր ստեղծված կամուրջը և կանգնել էր հեղեղատի մեջ: Ի՞նչ էր լինելու նրա հետ: Նա սպասում էր:

Անձրե էր գալիս: Նոր միայն զգաց, որ ամբողջովին թրջվել են շորերը: Շալը քաշեց դլխին, բայց իզուր, անձրեաջուրը թափվում էր գեմքին և արցունքի նման հոսում այտերն ի վայր... Նա, որ բոլորովին մեղավոր էր ճանաչում իրեն և զզջացել էր, կրկին հիշեց որդուն և չգիտես ինչո՞ւ ձեռքով շոշափեց այն պատի քարերը, որի մոտ կանգնած էր ու ցնցվեց: Զէ՞ որ նա կանգնած էր այն շենքի մոտ, որը կառուցել էր Հայկը: Հասմիկը հիշեց, թե ինչպես փոքրիկ երեխային գրկած ինքը գալիս էր այս շենքի մոտ, որ նոր էր կառուցվում: Հայկն իջնում էր վերելակներից,

չըկում աղային, ջերմ դուրդուրանքով նայում էր Հասմիկին և ասում.— Գիտե՞ս, Հասմիկ, շենքն էլ մեծանում, հասունանում է մարդկանց նման, տես բարձրանում է մեր շենքը:

Մի պահ Հասմիկը հանդարտվեց: Նա ցանկացավ փարվել շենքին, նույնիսկ համբուրել նրա քարերը, բայց դա մի պահ միայն, կրկին ցուրտ զգաց և ինքնարերաբար հեռացավ պատից, կծկվեց շալի մեջ:

Դիմացը վառվում էին ժողովասրահի լույսերը: Հասմիկը սպասում էր:

Այսօր նու շատ մտածեց գտնել մեկին, որ դար, խոսեր Հայկի հետ, խոսեր իր փոխարեն, իր օգտին, բայց ոչ ոքի չգիտեց և միակ թեկնածուն ինքը մնաց:

Նա գեռ սպասում էր, իսկ քիչ այն կողմ, էլեկտրական պայծառ լույսի տակ, ուժգին հոսանքով իջնում էր աղբյուրի ջուրը: Հասմիկը ակնապիշ նայում էր... եվ դարձյալ Հայկը: Զէ՞ որ այդ ջուրը բերվեց հեռուներից, մինչ այդ ևենինականը չուներ սառը, մաքուր ջուր: Դեռ պատերազմից առաջ պլանավորվեցին ջրի ճանապարհները, սկսվեցին աշխատանքները:

Հայկը անսահման ողեսորություն էր ապրում: Իսկ մեկ անգամ, թեյի սեղանի շուրջը նա բռնեց Հասմիկի ձեռքը և ասաց:— Գիտե՞ս ինչպիսի ջուր է դա, Հասմիկ, կյանք է դա, իսկական կյանք: Մեր քաղաքում շատերն են տառապել վատ ջրի պատճառով, իսկ այդ ջուրը... եթե թերթը դնես 30 սանտիմետր խորություն ունեցող ջրի տակ, կարող ես տպատ կերպով կարդալ... իսկ դա չտեսնված պարզություն է: Մաքուր է, ինչպիս իսկական կյանքը:

Հասմիկը սպասում էր, հանդարաւ հոսանքով իջնում էր շողարձակ ջուրը, անձրեփ կաթիլները շեղաւի խփում էին նրան, երբեմն գետնից վեր էին թըռչում կեղաղջրի կաթիլներ, գիտչում էին հոսանքին, նրան շփվում էր նաև քամին, բայց իզմեր, համառ ու անկանգ, պարզ ու մաքուր իջնում էր ջուրը:

Հասմիկը դեռ մտորում էր, իսկ նրա շուրջը քաշաքն էր տալրում իր միասնական, ընդհանուր կյանքը: Կենդանի մի մարդու նման՝ առողջ և հզոր, նա շնչում էր կարծես: Բնդհանուրից միայն Հասմիկն էր դուրս մնացել այդ պահին, ասես սայթաքել էր նա, ևս մնացել:

Նա խորապես գիտակցում էր այդ և համոզված էր, որ Հայկը չի թողնի իրեն այդ վիճակում, կհասկանա իրեն, կների, բայց կների^o...

Հանկարծ ժողովասրանից ծափերի որու լսվեց: Թվաց թե բյուրավար աղավնիներ շփշփացնելով թիերը, ուրախ ճախրանքով թուան դեպի եթեր:

Ժողովը վերջացավ: Քիչ հետո Հայկը դուրս կը գտը:

Անձրե էր դալիս:

Հասմիկն սպասում էր:


Կապույտ աչքերը լիքն էին արցունքով:

Հայկը նրան ի՞նչ կպատասխաներ: Կների^oր, թիւ կմերժեր:

Ո՞րն էր արդար:

1945 թ.





ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Փարիզում կատարված այս դեպքը հետաքրքրական է, և ես ուզում եմ, որ բոլորը գիտենան դրա մասին:

— Եորիս Դավուն մեծ հարստության տեր էր: Եվ նա էլ, ինչպես նրա շրջանի մարդիկ, ուներ միայն իրեն հատուկ թերություն: Նրա թերությունն էլ այն էր, որ շատ էր սիրում կանանց ետեից ընկնել, իսկ կանայք, ստանանան տանի, Դավուի կարծիքով, բարձրացնում են մարդու ճաշակը, և մարդ դրանից հետո դժվարանում է որևէ մեկի հետ հիմնական կապ հաստատել, ամուսնանալ:

Եվ այդպես, անհկատելի, ինչպես ջրի հոսանք, անցնում են տարիները, իսկ երբ ուզում ես ամուսնանալ, նկատում ես, որ ուշ է արդեն:

Սկսվում է մի նոր գժվարություն: Երիտասարդներն ու դեղեցիկները քեզնով չեն զբավվում, իսկ զու չես հավանում պառաված օրիորդներին:

Ի գեղ, երբ տարիքը բավական անցկացրած այս

կարգի մարդիկ ամուսնանում են ջահել կանանց հետ,
դառնալով հոգատար ամուսիններ, ապա դեմք նման
խանդու են լինում, կասկածամիտ և խուզարկու:

Այդպես էր վիճակված նաև Մորիս Դավուին:
Սակայն երիտասարդ կին ունենալու համար նա այն-
քան էլ չէր չաբչարվում:

Եվ իրոք, աղջիկներ հրամցնող մի կին, որ չգիտես
ինչու կըում էր այնպիսի ակնոցներ, որոնք ամեն
ինչ գեղին դույնով էին պատկերում, Մորիսին ցույց
տվեց մի իսկական հրաշք:

Մորիսը, որ տարիքն առած մի մարդ էր և
տեսել էր բազմաթիվ գեղեցկուհիներ, դրա նը-
մանին դեռ չէր հանդիպել: Ո՞վ էր այդ աղջիկը, որ-
տեղից էր գալիս նա և կամ ինչպիսի ընտանիքի
ծնունդ էր՝ չգիտեր Մորիսը: Սակայն նա խորին
համոզմամբ դիտեր, որ դա երկնային մի պարզե էր,
որ իրեն՝ այդ տարիքում, ամենակարողը ցանկանում
էր նվիրել: Մնում էր զանձը ձեռքից բաց չթողնել
մի դանձ, որը միայն խելացի և փորձված մարդիկ
կարող են ինչպիս հարկն է գնահատել:

Բավական գումար ծախսելով, Դավուն տեր գար-
ձավ էմիլիային:

Հարսանելան հանդեսը գարմանալի շքեղ էր և
փառավոր:

Փարիզի մայր եկեղեցում կատարվեց նրանց
հարսանելան ծեսը, և շատերը երանի տվին Դավուին:
Իսկ ինքը՝ Դավուն յոթներորդ երկնքումն էր զգում
իրեն:

Անսպասելի հարստություններ ունեցող հանքի նման քանի գնում գրավիչ էր դառնում էմիլիան։ Այդ միայն փորձված Դավուն կարող էր անսխալ հասկանալ, որ էմիլիայի մարմին ոչ միայն գեռ չէր դիպել տղամարդկային ձեռքը, այլև նրա սիրտը զեռ չէին պղտորել սանձաթող այն հայացքները, որոնք հետեւմ են աշխարհի բոլոր կողմերում ապրող աղջկներին։

Ընդհանրապես լուակյաց էր էմիլիան։ Նա բոլորովին չէր խոսում իր անցյալի մասին։ Մորիսն այնքանն իմացավ, որ էմիլիան Լանս գավառում է ծընվել մայրը վազուց է մահացել, իսկ հայրը, որ ածխահատ էր, մնաց փլվածքի տակ, աշխարհի վրա մենակ թողնելով իր խեղճ աղջկան։

— Օ՛, դու բոլորովին էլ մենակ չես,— խանզավառությամբ բացականչում էր Դավուն։

Մորիսը մեկ էլ այն իմացավ, որ էմիլիան ունի մի հարազատ միայն, հորեղբոր մի տղա՝ Միշել անունով, որ գնացել է աշխարհում բախտ որոնելու։

— Ա՛խ, եթե գտնե՞նք նրան, — ափսոսանքով ասում էր Դավուն, իսկ էմիլիան, տխուր հայացքը հեռուները հառելով, հոգոց էր քաշում, — Ո՞վ դիտե ուր է նա...

Իրեն երջանիկ էր զգում Դավուն։ Նա, որ շոայլել էր իր երիտասարդությունը և արդեն ապրում էր կյանքի խորին աշունը, կարծում էր, թե արդեն ձեռք է բերել անվերադարձ մի զարուն։

Մորիսը երբեք չէր մոռանում պապից լսած

խոսքը, թե «Աքաղաղը բարձր թու է որոնում, նավը՝ բաց ծով, կինը՝ հանգիստ կյանք»:

Եվ դժա համար էլ այն ամենը, ինչ կարող է անել չափազանց հարուստ և տարեց ամուսինն իր կնոջ համար, մեծ պատրաստակամությամբ անում էր Դավուն: Մակայն նա զգում էր, որ Էմիլիան կաղված է իր հետ ինչպես մի երեխա, որ անշատավել է հարազատներից, հանկարծ կորսվել մեծ քաշաքի փողոցներում և ահա զօրովանքով կաղվում է իրեն հանգիստ առաջին մարդուն՝ փրկությունը նրա մեջ որոնելով:

Իսկ եթե հանկարծ հայտնվեն հարազատները... Եվ խորը մի կսկիծ հանգիստ չէր տալիս նրան: Էմիլիան քանի գնում փարթամանում էր, գեղեցկանում: Նա ապրում էր կանանց այն հասակը, եթե նրանք բացվում են ինչպես արեելքի վարդը, իսկ ինքը, ա՛խ, ընության օրենք, ավելի էին սպիտակում մտղերը:

Բայց իզուր չեն ասել, թե լավ կինը մարդուն ջանել է պահում և գործն էլ՝ հաջողակ: Մորիս Դավուն ճիշտ և ճիշտ այդ վիճակութիւն էր զգում իրեն: Եվ չնայած նրան, որ ճյունն անխնատ իջնում էր մաղերին, նա ջանում էր չկորցնել իր աշխատյժը: Խելագարի նման հետեւում էր կնոջը ու սարսափով էր նըկատում, որ Էմիլիան երեխին թախծում էր մաշող մեթախծով:

Մի վայրկյան անգամ Դավուն չէր ուզում մըտածել, թե ուղղակի զոհվում է երիստարդ մի կյանք... Կարեսը ինքն էր... Իսկ Էմիլիան...

Նա տխրում էր՝ ինչպես աղատ սարերից վար բեր-

շված և վաճակի մեջ փակված եղնիկն է տիրում։ Ի՞նչ
քանի համար էին թափառում էմիլիայի խորախոքհուրդ
աչքերը, ինչ էին ուղում։

Մորիսը գաղտապողի, սրտի արոփյունով, հետեւում էր էմիլիային, և նրա կասկածները անցնում էին չափն ու սահմանը։

Նրան երբեմն թվում էր, թե էմիլիան ուրիշ մի երկը պտուղ է, ուրիշ տեսակ մի արարած։ Այս, հազար ինչո՞ւ նրա գեմքին չկա այն անհոգ ծիծաղը, որն այնքան ծանոթ է Դավուին։

Մորիսը կասկածում էր, ինչպես կարող է կասկածել զարհուրելի այդ հիվանդությամբ տառապող մի մարդ, բայց սարսափելին այն էր, որ իր կասկածների մասին ոչ ոքի չէր ուղում հայտնել։ Իր նըման աղամաշը համար դա անարժան բան էր համարում նա։

Հաճախ էմիլիային այցի էր գալիս անձանոթ մի կին։ Դավուի խուզարկու աչքերից այդ հանդաւմանքը չէր կարող վրխալել։ Բայց նա ջանում էր չհասկացնել, թե ինքը կասկածում է։ Դրա համար էլ ցույց տվեց, թե բավարարված է, երբ էմիլիան առաջ նրան, որ անձանոթ կինը լավ ձեռագործներ է պատրաստում, իսկ ինքը շատ է սիրում ձեռագործականել։

Այդպես էր Մորիսը։

Նա պատրաստ էր ամեն բանում կասկածել, սակայն բոլոր դեպքերում էլ զգում էր, թե սխալված է ինքը։ Ինքը, այսուհետեւ Սակայն մվ է ձեռագործների այդ վարպետուհին, որ այցի է գալիս իո ենո՞ւ... Միթե դա որոգայթների «ձեռագործ» չէ, որ պատրաստ

վում է իր դեմ: Դավուն լավ գիտե «Ճեռագործների» այդ վարպետուհիներին, որոնք մի ժամանակ, երբ ինքը երիտասարդ էր, գործում էին իր օգտին... Իսկ հիմա... Մտածելով այս մասին, նա վախ էր ապրում նաև իր հարստությունների համար... Ի՞նչ կա որ...

Բայց, վերջապես, ինչո՞ւ էր թախծում էմիլիան: Միթե՞ այս հոյակապ պալատները, ծառաշատ գաստակերտները, ուր բուրում են հովտաշուշաններն ու նարինջները, իրեն չեն պատկանում, միթե՞ էմիլիայինը չեն մարդաբայա այս մանյակները, թանկարժեք մորթերը, վերջապես կյանքի այս բոլոր հարմարանքները: Ել ի՞նչ անի Դավուն, էլ ում համար է նա շռայլումներ անում:

Եվ խորը մի վերք կսկիծ էր պատճառում Մորիսին: Զե՞ որ ինքը չափազանց մեծ է էմիլիայից:

Տանջալից ցավը պղառը ունեմ էր Դավուի սիրաը: Սակայն էմիլիան չէր թողնում, որ վշտանա Մորիսը: Բացվող դարնան հմայքներով նա նվիրում էր իր սիրատն ու սերը: Դավուից հեռանում էին չար կասկածաները: Նա կրկին զղջում էր, որ կասկածել է:

Եվ ապրում էին նրանք:

Սակայն մեկ օր էլ գժրախտությամբ սկսվեց լուսաբացը:

Մորիսն ուղղակի կորցրեց իրեն: Էմիլիան, որ վերջերս շատ էր տխուր, ընկավ անկողին:

Բարեկամ բժիշկը հայտնեց, որ հիվանդի զրությունը չափազանց վտանգավոր է, պետք է լավ խնամելք:

Երկու օր հետո էմիլիան կորցրեց գիտակցությունը:

Ոչ ոքի չվստահելով, ինքը՝ Մորիսն էր խնամում կմիլիային:

Նրա դեմքը մի տեսակ փոխվել, գորշավուն էր դարձել: Անհանդիսա մտածութները կարծես թե մարտում էին աչքերի հուրը: Չէ՞ որ հիվանդ էր սիրելի կմիլիան, չէ՞ որ Մորիսը կարող էր կորցնել մեկին, որն իրեն կյանք էր տալիս, ապրեցնում էր սիրով... Եվ վերջապես, հսկայական գումարներ վատնելով միայն նա տեր դարձավ կմիլիային: Ուրեմն ինչպես կորցը նել նրան:

Դավուն խնամում էր հիվանդին առաջին հերթին իր համար: Նա մի մարդ էր, որ ամեն բանում իր անձնական հաշիվն ուներ: Նա մտածում էր, որ կորցնելով կմիլիային, այլև դժվար թե գտնի այդշափ ջահել և այդքան բարի մի կին:

Եվ ահա, Մորիսի պահանջով, հիվանդին այցելում էին Փարիզի ամենանշանավոր բժիշկները:

3

Սովորականի նման այդ օրն էլ Դավուն նստած էր կմիլիայի մահճակալի մոտ, ձեռքը նրա ճակատին, երբ նկատեց, որ շարժվում են հիվանդի շրաթունքները:

Կմիլիան խոսում էր Մորիսին բոլորովին անծանոթ մի մարդու հետ: Մորիսը կռացավ դեպի հիվանդը, լսեց նրան, և աչքերը մթնեցին: Բայց անմիջապես սկսեց մխիթարել իրեն: Գուցե թե բորբոքված ուղեղի անհիմն թռիչք էր դա, որ չի կըկնավի: Սակայն կմիլիան ոչ միայն կրկնում, այլև ասում էր

այնպիսի բաներ, որոնք անշուշտ կապված էին հիշողության հետ: Այստեղ արդեն Դավուն չէր կարող մխիթարել իրեն: Այդ էր պատճառը, որ նա գունատվեց, իսկ կինը շարունակում էր խոսել:

— Ա՛խ, Լեոն... Լեոն, իմ սիրելիս, վառվում եմ քո կարոտից, արի, որտե՞ղ ես, — ասում էր Էմիլիան:

— Ո՞վ է այդ Լեոնը, ով է նա, — մտածում էր **Մորիսը**:

Նրանք ահա քանի տարվա ամռախիններ են, բայց այդ անունը դեռ չէր լսել: Մի ըսպե Մորիսը մտքում որոնեց՝ արդյոք չի ճանաչում Լեոն անունով մեկին:

Եվ չգտավ, չկար այդպիսին:

— Ահա թե ինչն է տիսրեցնում Էմիլիային, ահա գաղտնիքը, — տարօրինակ մի վիճակում, ինչպես լինում են ըոլոր խարված ամռախինները, երբ համոզվում են գրանում, ինքն իրեն խոսում էր Դավուն:

Արդեն դառնորեն թունավորված էր նրա սիրաը, սակայն դեռ սալասում էր, որ կինը նորից տա այդ անունը, նորից խոստովանի, բայց Էմիլիան ըոլորովին կորցրեց իր գիտակցությունը, մթագնեց հիշողությունն անդամ և այլևս ոչ մի բառ չհնչեց նրա ընթանից:

Կասկածներն ու թունավորված խեղզում էին Դավուին: Հաջորդ երեք օրվա ընթացքում նա դարձյալ չհեռացավ կնոջ մահճակալից: Ոչ ոքի չէր թողնում, որ խանդարեն իրեն: Նա ցանկանում էր նորից լսել կնոջը:

Զորլորդ օրվա գիշերը Էմիլիան իրեն լսով զգաց:

Փոքր ինչ տպաքինվելով, նորից սկսեց խոսել ջերմի տղիցությունից: Մորիսի համար կատարվեց բոլորովին անսովուելի մի բան: Մինչ այդ նա գիտեր, որ իր կինը միայն ֆրանսերեն գիտե, բայց այս ի՞նչ է... Նա Լեոնին կամ Լեոնին կանչում է նաև ուրիշ, Մոքիսի համար բարովին անհասկանալի լեզվով...

Ահա թե ինչպես են հյուսվում ձեռագործները... Այս, Մորիսը պետք է զգույշ լինի:

Իսկ մեկ անգամ աչքերը բանալով, էմիլիան ակնապիշ նայեց դիմացը, կարծես թե տեսավ մեկին, ճանաչեց, ժպտաց, նույնիսկ ցանկացավ բարձրանալ տեղից, առաջ պարզեց ձեռքերը, կարուանքով բացեց ջերմից վառվող շուրթերը և շշաց.— Արի՛, արի սիրելիս, արի վերջին անգամ քեզ սեղմեմ կըծքիս, ի՞նչպես առաջ, արի, իմ լեռն... Արի՛, հոգիս...

Եվ լսեց: Բայց այլիս ի՞նչ ուժ կարող էր լսեցնել Դավուի վրդովմունքը:

— Ահա թե ի՞նչ դուրս եկավ կարծեցյալ սուբբը: Եվ այսպես, նա՝ Մորիս Դավուն, որ կանանց գործերում իրեն անսխալ էր համարում, խարված էր մանուկի նման:

— Հըմ, դավաճան կին... Հասարակ դասի այդ աղջիկը, որ մոխիրների մեջ է մեծացել... Հայրը, որ ածուխ կարելով է կերակրել սրան, հազիվ թե այսպիսի աղջիկ ունենար:

Մտածում էր Դավուն և ավելի դառնանում, հիշելով, որ ի՞նքը մեկ անգամ արգեն որոշել էր չամուսնանալ, հասլա էլ ի՞նչո՞ւ ամուսնացավ... Եվ այն էլ ո՞ւմ հետ, հանքափորի աղջկա... Տեր իմ աստված... Ահա թե ո՞վ է ձեռագործների վարպետունին, ահա, թե ի՞նչպիսի ձեռագործ է պատրաստվել...

Սակայն այդ ամենն արդեն կատարված փաստ էր: Նրա համար պարզ էր և այն, որ գավաճանված է իր ամուսնական անկողինը: Հիմա արդեն Մորիսի խնդիրն այն էր, թե այլիս ինչպես պետք է ապրեր այդ կնոջ հետ:

— Թողնել էմիլիային, նրան հեռացնել իրենից,— ոչ, այդ իր ուժերից վեր է: Ճշմարիտ է, նա պատրաստ էր վատարանել կնոջը, բայց նրան ուրիշից գրկում տեսնել չէր հանդուրժի: Չե՞ որ նա սիրել է էմիլիային, ապրել նրա կյանքով, խոկ հիմա... Թե՞ զիտենալ ամեն ինչ և լոել կեղծել, ցույց տալ, թե ոչ չինչ չգիտե: Մի՞թե քիչ կան աշխարհում այդպիսի տղամարդիկ, բայց նա այդպես վարվել չի կարող: Մորիսը մեկն էր իր շրջապատի այն հաղվաղեպներից՝ որոնք ամուսնությունից հետո մաքրություն են պահանջում:

Ավելի ճիշտ այդ պահանջի պատճառն այն էր, ինչ քարոզում են բոլոր տարիքավոր մարդիկ իրենց երիտասարդ կանանց:

Էմիլիան սկսում էր ապաքինվել: Այդ արդեն ավելի էր ուժեղացնում Մորիսի հոգեկան տվյալանքը: Նա ինքն իրեն ստիպում էր մոռացության տալ բոլոր այն լավն ու հմայիչը, ինչ մի ժամանակ տեսնում էր էմիլիայի մեջ:

Միակողմանի, միշտ իրենց կողմը քաշող մարդկանց մոլեգնությամբ, նա իր կնոջը համարում էր խարերա, ստոր, խոկ իրեն՝ մի զոհ, որ հատուցման իրավունքով է օժտված:

Խանդն ու զայրույթը բնից դուրս եկած օձի նը-

ման արորում էին ամեն ինչ, վերջնականապես պղտութելով՝ Դավուի էռթյունը:

Գլխավոր բժիշկը նրան պատվիրել էր՝ ամեն օր էմիլիային տալ երկու կաթիլ ուժեղագույն այն գեղից, որը միայն կարող էր փրկել նրան: Մորիսն այդպես էլ անում էր: Եվ իրոք, էմիլիան ապաքինվում էր:

Սակայն հիմա արդեն ամռանը դադարել էր հարազատ լինելուց: Նա ուղղակի չէր կարող տանել իր կը նոյն ներկայությունը: — Այստեղ ևս Մորիսին հրամայողն իր «Հան» էր:— Եթե փրկվեր էմիլիան, Դավուց գուցե թե դժվարանար այլիս հեռանալ հըմայիչ այդ էակից — իսկ դա կնշանակեր վտանգել թե իր հարստությունը, և թե իրեն, ով գիտե ինչեր կարող էր ստեղծել էմիլիայի և Լեոնի կապը... Այդ էր պատճառն ահա, որ երկար մտատանջությունից հետո չարությունն հաղթեց Մորիսին, նա որոշեց հիվանդին գեղ չտալ:

— Կապրի՝ թող ապրի իրեն համար, իսկ եթե ոչ, ուրեմն այդպես է կամենում տերը:— Դուցե թե նույն այդ տիրոջ առաջ իրեն արդարացնելու նպատակով մտածում էր Մորիսը:

Սակայն դա որոշում էր միայն: Ինչպես բոլոր, այնպես էլ մանավանդ այս որոշման իրագործելն էր դժվարը: Բայց նա այստեղ ևս կարողանում էր գլունել իրեն արդարացնելու հանգամանքներ:

Եվ որպեսզի այլևս չխարվի ինքը, և ուրիշները չվայելին այն, ինչ նա իր սեփականությունն էր համարում, Մորիսը կատարեց իր որոշումը: Կատարեց... Սակայն քանի՛-քանի՛ անգամ, ուշ գեշերներին, գեղի սրվակը ձեռքին, մոտեցավ հիվանդի սեն-

յակի դաներին, բայց մի զորեղ ձեռք ևս վանեց նրան:

— Հարկավոր չէ, — կարծես թե թելադրում էր մի ուրիշ Մորիս, որը հակադրվում էր Էմիլիային կըթին օգնել ցանկացող Մորիսին:

Իսկապես որ Դավուն երկվառթյուն էր ապրում: Սակայն, ինչպես բոլոր գեղքերում, այս անդամ էլ ուժեղը հաղթեց:

Բայց ի՞նչն էր պատճառը, ինչու արցունքներ ընկան Դավուի երբեք արցունքներ չտեսած աչքերից: Դժվար է դրա պատասխանը տալ, ինչպես որ դժվար է տսել, թե ինչու նա շտապեց սրբել արցունքները և զբանից հետո ավելի անողոք գարձափ:

Փաստն այն էր, որ Էմիլիան անպաշտուան մնաց:

Զարհուրելի ցավը, բոլորավին ազատ զդալով իւրեն, հարձակվեց զոհի վրա:

Էմիլիան չգիմացավ:

Մեկիկամեկիկ մարդեցին կյանքի կրակները:

Լուսաբացին մոտ մեռավ Էմիլիան:

4

Սովորականի նման կվերջանար այս պատմությունը, ինչպես վերջանում են մեղ հայտնի շատ նուվելներ, եթե 1944 թվականին Փարիզ չգտար մի մարդ, որը բացնց բոլոր գաղտնիքները: Նա Մորիս Դավուի բնակարանը մտավ, երբ արդեն օրը երեկոյանում էր: Անծանոթը դժվարությամբ, բայց կարողացավ գըտնել այդ տունը: Նա ցանկանում էր ժամ առաջ ներս մտնել և տեսնել իր հարազատին: Նրա հարցմանը, թե

արդյո՞ք այս է պարոն Դավուի բնակարանը, ծանրաբարո, ճաղատ լաքեյը գրական պատասխան տվից՝ հայտնելով, որ պարոնը հենց նոր վերադարձավ շըջապայությունից և հիմա գտնվում է իր առանձնասեհնակում:

Ճանապարհին, երբ գալիս էր այստեղ, նա տեսսավ սովալլուկ մանուկներ, պատերի տակ ընկած ծերունիներ, որ հաց էին խնդրում... Իսկ այս փառավորպալալատը...

Տանտիրոջից թույլտվություն առնելուց հետո, ծառաները նրան տարան Դավուի մոտ: Թանկարժեք-խալաթը հազին, փափուկ ըազմոցին թեք ընկած, հանգստանում էր մի մարդ:

— Խնդրեմ, նստեցեք, — ասաց նա և մի պահ ըստպասելուց հետո, ավելացրեց.

— Ի՞նչ եք կամենում, պարոն:

Անծանոթն անախորժ մի բան զգալով հանդերձ, ժպտում էր:

— Դո՞ւք եք պարոն Դավուն, — ուշագիլ նայելով Մորիսին, հարցը եց նա: Իսկ Մորիսը, որ արդեն գարձել էր գնդիկ, սակայն անհանդիսա աչքերով մի ծերունի, ժպտաց և փափլիկ ձեռքը կրծքին դնելով՝ ասաց. — Այս տանը, այս, ես եմ Մորիս Դավուն, եթե ուրիշ մարդ չինի, իհարկե:

— Բարե ձեղ, — ձեռքն առաջ պարզելով բացուկանչեց անծանոթը:

— Բարին ձեղ հետ լինի, պարոն, նստեցեք խընդրեմ:

Անծանոթը տեղավորվեց դիմացը զրված թիկ-նաթուրին և նայեց շուրջը:

Սենյակը դարդարված էր տանտիրոջ հարսառության համեմատ։ Այսաեղ բոլոր իրերն ու առարկաները շողարձակ էին և ոսկեպատ։ Հին ձեփի ֆլանդարյան գորգերը, որ իջնում էին պատերից, հյուսվածքների մեզմ գույներով քնարեր թմրիր էին տարածում։ Անկյունում աստղանման շրջանակներով հայելին էր։

Թեղեցիկ քանդակները, հախճապակյա պատկերներըն ու ոսկեղեն փնջակալի մեջ հանդչող շուշանները գիտելու համար չէր, սակայն, որ անծանոթը նայում էր կարստով։

Եվ իրոք, իր ցանկացածը չգտնելով, դարձավ տաքակուսանքով իրեն գիտող Մորիսին և ասաց։ — Ես, թանկագին պարոն, ցանկանում եմ տեսնել ձեր կնոջը՝ էմիլիային։

Մորիսն աֆսախորժ սարսուռ դդաց։ Նրա ծերութնական դեմքը փոքր ինչ գունատվեց, բայց դսպելով իրեն, իրատ անտարբեր ասաց։ — Էմիլիային, կնոջը... Լավ, խնդրեմ։

Սակայն չկարողացավ պահել անտարբերությունը (ինչպես այդ հատուկ է ծերութներին) և հանկարծ, ակնրախ անհանգստությամբ ոտքի կանգնեց ու ըստուգող, խուզարկու աչքերը հառեց անծանոթի գեմքին։ Թվում էր, թե նրա ծերունական, ըստ երկույթին արդեն խաղաղված սրտում նորից մի կրակ բորբոքվեց։

Իսկ գուք որտեղից գիտեք նրան, այսինքն էմիլիային։

— Նրան... Հուզմունքից գողաց անծանոթի ձայնը, նրան ես լավ գիտեմ, — պատասխանեց ան-

ծանոթը և նկատելով Դավուի մեջ եղած փոփոխությունը, գուցե վերջինիս հանգստացնելու համար՝ ավելացրեց. — Էմիլիան իմ հարազատն է, հարգելի պարոն, ևս Միշելն եմ:

— Միշել...

— Այո, Միշելլ:

— Ես ձեղ գիտեմ, պարոն, — արդեն բավական հանգստացած խոսեց Մորիսը և առաջ մեկնեց ծխախոտի տուփը. — Համեցե՞ք:

Աղա ինչ որ մտածելով գնաց ներսի սենյակը, գըտավ մի մաթեթ, քանդեց, հանեց մի լուսանկար և վեգառնալով, լուսանկարն ուղղեց անանձոթին ու ասց. — Ահա, պարոն, այս է ձեր բարեկամուհին:

Անձանոթը Մորիսի ձեռքից շտապով վերցրեց նկարը, նայեց կարոտով: Դա ամուսինների առաջին նկարն էր:

Անձանոթն իր սկ, խոշոր աչքերի համարյա թե շոշափող հայացքով գիտում էր նկարը: Թվում էր, թե նա վերացել էր կյանքից, հիշողությունները նրան տարել էին ուրիշ մի աշխարհ, հետո դորովանքով նկարը հպեց շուրբթերին:

Դավուի գեմքին անհանգստության նշաններ երեացին: Այդ պահին նա ցանկանում էր ինչ որ ասել, սակայն զապեց իրեն և թեքվելով առաջ, հարցըրեց. — Դա՞ է:

— Այո, բարի պարոն, իսկ և իսկ նա է:

Որոշ ժամանակ նրանք նայում էին իրար: Մորիսը գլուխը կախեց: Նա լուռ էր: Խուսափում էր անձանոթի հայացքից, թե յուրովի ինչ որ որոշում էր կայացնում՝ անհայտ էր: Իսկ անձանոթը անսովոր

մի բան դդալով հանդերձ, հանդարտությամբ (ինչ ոք հատուկ է շատ բան տեսած մարդկանց) նայում էր Մորիսին և ջանում էր մի բան կուհել:

Այդ ժամանակ Մորիսն անծանոթի համար փակչված մի զիրք էր (և առհասարակ մարդիկ որքան նման են փակ զրքերի): Սակայն Դավուն անհամըեր էր և առաջինն ինքը խախտեց լսությունը: Վեր կացավ տեղից, խալաթի փեշերը քաշեց իրար, վերցրեց անզլիական մի հաստ զլանակ, ինտոմքով մարրեց ծայրը և փոխված, նույնիսկ իր համար անծանոթ ձայնով, ասաց.

— Նայում եմ ձեզ, պարսն Միշել և համոզվում, որ գուք իրոք Միշելն եք... Այս, պարսն, գուք չափազանց նման եք Էմիլիային: Զեր աչքերը, ձեք գիմագծերը, բայց... Լսեցեք թե ինչ կանեմ ձեզ:

Այսուղ խոսքը կիսատ թողնելով, Մորիսը մոտեցավ լուսամուտին, նայեց դուրս՝ մայրամուտի դիմուկ արեին, առաջ ետ դառնալով, միտքը լրացնելու փոխարեն, սկսեց լուցին որոնել Վասեց, մոտեցրեց ծխախոտին՝ դեմքը լուսավորելով: Անծանոթը, որ շարունակ լուս էր, նայելով Մորիսի լարված զիմագծերին, զգաց նրա վարանումը:

— Տարիքը, թե ուրիշ մի բան, ծերուկին ջղացին են դարձրել — յուրօքի որոշեց անծանոթը:

— Դուք, պարսն Միշել... Դուք պետք է հասկանաք ինձ:

Բավական լոելուց հետո, վճռական մի որոշումով խոսեց Դավուն. — Ասենք զբանից բացի, ես վազուց էի ձեղ սպասում... Զեղ, այս, և միայն ձեզ... Այս աշխարհում ոչ ոք ինձանից հաշիվ պահանջելու իրաւ-

վունք չունի, և չի էլ կարող: Ներկա դեպքում իմ դատավորն ես իմ՝ և ահա կամ ենում եմ ձեզ, որպես իմիլիայի հարազատի, ճշմարտությունն ասել: Ես կարծում եմ, պարոն, որ նրա մասին, որպես այդպիսին, երկու հոգի պետք է դիտենան՝ ես և դուք: Դա թելադրում է նաև ձեր շահը: Այսպես, ուրեմն, լըսեցեք ինձ... Ես կարող էի լսել բայց չեմ ցանկանում: Քիչ տուաջ որոշեցի մի քանի օր ես ձեզ պահել այս տեղ ու նոր միայն բանալ խկությունը, բայց դրանով դարձյալ ես իմ մտահոգվելու...— Դավուն կրկին լսեց: Ծովսը բարձրանում էր վեր, պեծկլում էր ծխախոտի կրակը:

— Եվ ահա,— շարունակեց Մորիսը, — ցանկանում եմ տսել հենց հիմա, ինչո՞ւ ուշացնել: Այսօր վան, այսինքն ձեզ, շատ եմ սպասել: Վերջապես դուք պետք է գիտենաք, թե ինչպիսին է եղել ձեր բարեկամունին: Այսպես ուրիմն, լսեցեք ինձ. ձեր բարեկամունին արժանի չէ, որ ձեղ բարեկամունի համարվի: Նա անհավատարիմ և վտանգավոր մի կին էր... Քիչ տուաջ, երբ դուք համբուրեցիք նրա նկարը, ես ցանկանում էի ասել, թե արժանի չէ, բայց լոեցի:

Նա դավաճանեց իր ամուսնուն, մի մարդու, որ իր կյանքը նրան էր նովիրել:

Ուրեմն նա դավաճան էր ընդհանրապես... Այս, դավաճանեց և մեռավ...

Այն էլ տսեմ, պարոն, որ ես կարող էի օգնել, դուցե և փրկել նրան, բայց չկամեցա:

Զկարծեք, պարոն, թե ես իմիլիային չեմ օգնել Եկթե օգնություն չէր, երբ նրան, մի որբ և անտեր աղջկա, ազատեցի փողոցից, իսկ նա ինչնվ հատու-

ցեց: Ուրեմն ասացիք, երկրորդ անգամ ինչո՞ւ համար փրկեի: Ինչո՞ւ... Որ նորից գավաճաներ... Եվ վերջապես այդ ճանապարհով նա կարող էր ինձ էլ մասս պատճառել գուշ հասկանում էք:

Կարծես թե Դավուն վերջացրեց իր պատմությունը: Թվում էր, թե ազատվեց ճնշող մի բերից, ասաց այն, ինչ կուտակվել էր, ինչ պետք է ասեր, բայց ինչո՞ւ ընկեցվեց: Ի՞նչն էր զրա պատճառը, ինքն էլ չգիտեր:

Անձանոթը, որ ուշադիր նայում էր Դավուին, կարծես թե քարացել էր:

Լուկով Մորիսի խոսքերը, նրա ձեռքից նկարը ներքե ընկավ: Իսկ Մորիսը, փոքր ինչ ձայնը բարձրացնելով, շարունակեց: — Այո, նա սիրում էր Լևոն անունով մի մարդու: Դա հենց ինքը խոստվանեց, երբ հիվանդության ժամանակ զառանցում էր: Նա կարուտանքով կանչում էր այն մարդուն, որի հետ կապված էր եղել: — Ավարտելով իր խոսքը, Մորիսը նայեց անձանոթին, ապա նրա աչքերում ինչո՞ւ բան կարգաց, և որպես հիմնական մի փաստաթիկում, բառ առ բառ շեշտելով ավելացրեց: — Նա, որ գավաճանում էր ինձ, այդ բանում ես համոզված հմ, այո: Դուք ևս, պարոն, պետք է անիմնք նրան: Վատթարությունը նրա մեջ այնքան էր ուժեղ, որ այդ կեսն կամ Լևոն, ինչպես ինքը երբեմն ասում էր, կոչվածի հետ խոսում էր խորհրդավոր մի լեզվով: Դավերն այդպես են պատրաստվում... Ես այդ լ գիտեմ... Ես էլ կյանք եմ աեսել:

Մորիսը լսեց, բայց տարօրինակ մի զգացում շարունակ անհանգստացնում էր նրան: Դրությունն

ավելի էր ծանրանում, որովհետեւ օտարականը համառոքեն լուսում էր:

Մինչև հիմա, տարբներ շարունակ Մորիսին թղթացել էր, որ եթե մեկ օր տեսնի Միշելին, պատմի իր գաղտնիքը, բոլորովին կհանգստանա, որովհետեւ չկա մի մարդ այս մեծ աշխարհում, որ կարողանա պահել արևէ գաղտնիք, զեթ մեկն ու մեկին չպատմելով գրա մասին:

Բայց Մորիսը սխալված էր, հայտնելով իր գաղտնիքը՝ նա չհանգստացավ: Բնդիկակառակը, ավելի վրդովվեց: Առաջացան նոր մտքեր, որոնք ստիպում էին մտածել:

Անձանոթ մարդն իր սկ խորաթափանց աչքերի հայացքը, ուր կար զսովված, բայց դառն արգահատանք, չել հեռացնում նրա գեմքից, իսկ հետո թեքվեց առաջ և հաղիվ լսելի ձայնով հարցրեց: — Ուրեմն նրա համար, որ էմիլիան երազում էր կեռնին, խոսում էր նրա հետ ուրիշ մի լեզվով, սպանեցիք նրան:

— Սպանե՛լ, ոչ պարոն, ես միայն գեղ չտվի, այդ է ճշմարտությունը... Եվ միայն այդ, ես պարզն ասացի... Ես չուզեցի օգնել, իսկ դա իմ իրավունքն էր: Այդպես կամեցա, այս... Ես չեմ կեղծում և կեղծելու կարիք չունեմ:

Կրկին լոեցին: Անձանոթի ատելությունն անստիման էր: Նա խոնարհեց իր գլուխը, մտածեց մի պահ, ապա բարձրացնելով հայացքը, նորից նայեց սենյակի պատերին և հարցրեց: — Իսկ նրանից երեխաներ չունե՞ք:

— Ոչ, պարոն, ո՛չ, — չղիտես ինչու, արդեն ընկ-

ճըված ձայնով պատասխանեց Դավուն: Իսկ անծանոթն ուղիղ Մորիսի աչքերի մեջ նայելով, խորը մի կոկիծ արտահայտելով, ասաց: — Ուրեմն, լսեցեք, պարոն... Ձեր կինը մի աղնիվ կին էր: Նա կանչել է իր հարազատ եղբորը, երբ հիվանդ է եղել... Նրան է կարոտել նրան է կանչել:

— Եղբարը, — տարտկուսանքով տեղից վեր ցատկեց Դավուն և մի պահ վարանեց, բայց ինչ որ հիշելով, որոշակի չարությամբ ասաց: — Նա եղբայր չուներ, պարոն Միշել, այդ դուք ինձանից լավ դիտեք, այս:

— Աւնե՞ր, ունե՞ր, պարոն... — Անժխտելի համոզմունքով, բայց հազիվ զապելով իր ներքին հուզմունքը, խոսեց անծանոթը և վեր կացավ:

Նա կանգնած էր իր հսկայական հասակով: Մոռիսը նայում էր ներքեից: Այնպես փոքր էր նա այդ անսովոր մարդու համեմատությամբ, որ ինքն էլ էր նեղվում: Հսկայական մի ուժ, որ բխում էր նորեկ մարդուց, Մոռիսին գամել էր իր տեղում և նրան լռակյաց էր գարձրել: Մի պահ թվում էր, թե ուր որ է անծանոթը դատավճիռ է կարդալու, բայց ահավոր լությամբ ետ գարձավ, այնպես որ այլևս դժվար էր նրան ետ պահել, և դուրս եկավ, դնաց...

Բավական ժամանակ էր անցել արդեն, երբ նոր միայն Դավուն, կարծես թե իրեն հասցրած տարօրինակ մի հարվածից ուշքի գալով, զգաց, որ այդ մարդը շատ բան կարող էր ասել իրեն: Վերջապես նա պարտավոր էր բացահայտել գաղտնիքը:

Մոռիսն աճապարանքով հագավ գարնանային վերաբերն, վերցրեց ձեռնափայտը և շտապեց դուրս: Նա որոնում էր անծանոթին:

Ո՞ւր դնաց այդ գարմանալի մարդը, որ կտնեածանքի կը ակներ վասեց նրա սրտում:

Եթե այզպիս է... Եթե ճիշտ է տում անձանութը, ուրեմն իր կինը... Ուրեմն ինքը... Հարկավոր է զտնել անձանոթին, նա պարտավոր է հաշիվ տալ իրեն, այլապիս ինչո՞ւ եկավ, ինչո՞ւ ասաց:

Դավուն որոնում էր:

* * *

Նույն այդ ժամին, Փարիզի փողոցներով անցնում էր մի հայ մարդ: Դա ինքը՝ Լեոն Մուշելյանն էր, Դավուի տանը եղած օտարականը: Գընում էր Լեոնը և մտորում:

Երեկոյի կիսամութի մեջ թաղված Փարիզի փողոցներով երկար ձգվում էր նրա ստվերը, որ կարծես թե շոշափում էր պատերը, ձգվում գեղի վեր, մըտնում լուսամուտներից, նորից դուրս գալիս և ընթանում էր առաջ՝ ծանր ու ձգված:

Քնում էր Լեոնը և մտածում իր անբախտ քըրջ, իր Փառանձեմի մասին, նրա վերջին և միակ նամակի մասին: Այդ նամակը Լեոնը ստացավ շատ տարիներ առաջ: Քույրը, որին նա մեռած էր համարում, գրում էր, թե ապրում է Փարիզում և մի հայ կնոջ միջոցով, որը նրա միակ մտերիմն է, իմացել է, որ Լեոնն ապրում է Սովետական Հայաստանում:

Քույրը հայտնում էր եղբորը, որ բախտը նրան Փարիզ բերեց: Մի կնոջ տանը աղախին դարձավ: Ա դ կինը ցանկանում էր օգտագործել նրան և ահա

Հանդիպեց Մորիս Դավու անունով մի մարդու:

«Տարիքավոր մի մարդ է Դավուն, բայց ինչ արտծ...»: Քույրը զրում էր, որ ինքը սկզբում կարծում էր, թե ըսլոր կողմերում էլ հայերի հետ պետք է վարվեն այնպիսի գաժանությամբ, ինչպես վարվեցին Թյուրքիայում: Այդ էր պատճառը, որ սկզբում չհայտնեց իր ով լինելը: Ամուսինը մինչև հիմա էլ համոզված է, թե նա ֆրանսուհի է, եմիլիա անունով, գավառացի մի աղջիկ: Վերջապես օտարության մեջ ապատ ապրել անհնարին է:

«Այդ արդեն ես լավ դիտեմ, օտար հոգի վրա երջանկություն լինել չի կարող»:

«Քաղցրիկ եղբայրս, ես ամուսնուս հայտնել եմ, որ ունեմ միայն մի հարազատ՝ Միշել անունով, որն իմ հորեղբոր տղան է: Եթե պատահի այնպես, որ հանդիպենք, սիրելիդ իմ, գու հանդես արի որպես Միշել»— զրում էր քույրը, հայտնելով նաև այն, որ ինքը վախենում է իսկությունն ասել. «Նա առանց այդ էլ չափազանց կասկածող մարդ է և բացի գրանից, ամենեին չի սիրում օտարազգինեցին...»

Նյութապես վատ չեմ, բայց ձեզ եմ կարոտում, մեր անուշ երկիրն եմ կարոտում, բաղձակի եղբայրս: Կլինի մեկ օր, որ նորից դառնամ դեպի Հայաստան...»: Այսպես էր զրում քույրը:

Այդ նամակից հետո Լեոնն ուրիշ նամակ չստացավ:

Հայ կնոջ հասցեով բազմաթիվ նամակներ գրեց, բայց ոչ մի պատասխան:

ծանապարհները փակվեցին և ամեն ինչ թաղվեց խորհրդավոր լոռւթյան մեջ:

Այդ պահին Լեռնն անցյալն էր վերհիշում:

Նրանք ապրում էին Թյուրքա-Հայաստանում: Հայրը, որ Փրանսերին լեզվի դասառու էր, իր տղային և աղջկան փոքրուց վարժեցրեց այդ լեզվին:

Մեկ օր էլ Թյուրք բռնավորները, ինչպես միշտ, սուր բարձրացրին: Այս անգամ կոտորածն ավելի կատաղի էր:

Ամեն տեղ մահ էր, ամեն տեղ ավեր:

Նա հիշում էր կախազան բարձրացրած հորը, սպանված հարազատներին:

Լեռնը մի կերպ կարողացավ փախչել դեպի Լեռինական: Հետո գտավ մորը, որ չղիտես ինչպես հասել էր այսակ: Իսկ Բնչ եղավ քույրը, չղիտեր:

Այսակ, հեռուներում մնաց ծննդավայրը, վառված, մոխրակույտ գարձած հայրենի օջախը: Իսկ ոլացիկ այն բարդիները, որոնց տակ նա իր մանկությունն էր անցկացրել, մինչեւ հիմա էլ իր աչքերի առջև են և, օրորվում են քամիների տռաջ, որպես սղվորներ:

Կորավ իր քույրը: Բայց եկավ նամակը և շատ գաղտնիքներ բացեց: Ինչպես երեսում էր, քույրը տեղեկություն չուներ մոր մասին՝ չղիտեր, որ նու կաև միայն եղբարն էր երազում:

Լեռնը ապրում էր Սովետական Հայաստանում: Ուներ կին ու երեխաներ:

Սովետները փրկեցին հայերին:

Նորից վառվեց հանգած օջախը: Լեռնն ավարտեց բարձրագույն դպրոց և գարձավ բժիշկեր:

Անվանի վիրաբույժին ճանաչում էին բոլորը:
 Եվ ահա սկսվեց 1941 թվականի պատերազմը:
 Նա զինվորագրվեց, որպեսզի նորից չքանդվի Մուշեղ-
 յանների տունը: Խարկովի մոտ զերմանացիների
 կողմից շրջապատվեց նրանց զորամասը: Դերի ընկալ
 նաև նա: Դերմանացիներն Լեռնին տարան ֆրան-
 սիա, նա փախավ ճամբարից և միացավ ֆրանսա-
 կան հայրենասերներին, դարձավ պարտիզան, կովեց,
 մինչև որ սովորական զորքերը ջախջախեցին զեր-
 մանացիներին: Մյուս պարտիզանների հետ նա էլ մը-
 տավ Փարիզ:

Փարիզի փողոցներով լուս ու մտազբաղ զնում
էր Լեռնը:

Շուտով նա վերադառնալու էր Հայաստան:

Սնսահնմանորեն կարոտել էր իր հայրենիքը, որը
 փարոսի նման կանչօւմ էր իրեն:

Բայց նա մտածում էր, թե ի՞նչ պատասխան
 պետք է տա մորը, որ տարիներ շարունակ սպասում
 է Փառանձեմին տեսնելու հույսերով:

Սակայն մորը, ինչպես և բոլորին, նա շատ բան
 ուներ պատմելու:

Լեռնը, որ եվրոպայում՝ պարտիզանական իր կյանշ-
 քի օրերին եղել էր բազմաթիվ հայ աշխատավոր
 ընտանիքներում, դժուկը նրանց անսահման կարոտի
 մասին, տեսել էր նրանց (և ինչու միայն նրանց)
 անապահով կյանքը, պատմելու շատ բան ուներ:

Հանդարա, ասանց շատապելու, Փարիզի փողոց-
 ներով անցնում էր Լեռնը:

Արդեն իջնում էր գիշերը:

Փարիզը թաղվում էր ընդհանուր խավարի մեջ:

Իսկ լեռնը դեռ մտածում էր: Նրա աչքերի
առաջ, կենդանի գույներով պատկերվում էր իր վա-
զամեռ քրոջ տարօրինակ, բայց տառապալից կյանքի
ճանապարհը:

* * *


Սրանից մեկ և կես տարի առաջ նամակաբերն
ինձ հանձնեց անսովոր մեծություն ունեցող մի ծրար,
որի արտաքինից գատելիս, արդեն, պաշտ էր, որ ծրարը
սովորական նամակ չէր ամփոփում: Երբ բացեցի
ծրարը, գուրս եկավ թղթերի մի կապոց, որին կցված
էր մի փոքրիկ գրություն:


Այստեղ զրկած էր. «Հարդելի ընկեր, զրել եմ այս
նովելը, որն իրական մի պատմություն է, խնդրում
եմ կարդաք և հայտնեք Զեր կարծիքը: Մի քանի
օրից անձամբ կդամ, կլոսսենք:— Լ. Մ.»

Մեկ և կես տարի է արդեն, համարյա ամեն օր,
սպասում եմ անձանոթ բարեկամիս, բայց նա չկա ու
չկա: Ես կարծում եմ, որ այս նովելի հեղինակը ինքը
էեոն Մուշեղյանն է: Զէ՞ որ նամակի վերջում նա
ակնարկել էր այդ մասին:

Գրական որոշ մշակումից հետո, ընթերցողի
ուշադրությանն եմ հանձնում այս նովելը:

1946 թ





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եերածական հոդված Տ. Հայումյանի 3—10

Լ Ե Գ Ա Խ Ա Բ Ը Ն Ի Ռ

Կյանքի գաղտնիքը	13—14
Հոմանիւ վերջին խոսքը	15—21
Արցունքները	22—26
Աղբյուրի մոտ	27—29
Սեփական և Դանիելը	30—33
Եվերը	34—35
Արձիվը	36—38
Արման Մեղավորը	39—44

Ն Ա Վ Ե Լ Ե Վ Ք

Թաթիկը	47—62
Զորս նովել Վահագմ Փափագյանի կյանքից	63—71
Հանդիպում	72—75
Ո՞քն էր արդար	76—96
Կյանքի ճանապարհը	97—121

Պատ. Խմբագիր՝ Տ. ՀԱԽՈՒՄՅԱՆ

Շապիկը և նկարագարդումը՝ նկարիչ Ռ. ՍԱՐԴՅԱՆԻ-

Տեխ-խմբագիր՝ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սքըշպրիզ՝ Լ. ՊԱՅԱԶԱՑՅԱՆ

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ДОРОГА ЖИЗНИ

(Новеллы и легенды)

На армянском языке

Արմгиз, 1946 թ.

Վ.Յ. 06011, Տիրաժ՝ 4000, տպագրական 8 մամուլ

Ստորագրված է տպագրության 1-8-1946 թ.

ՀԱՅԻ ՄԻՆԻՍՏՐ. ՍՈՎԵՏԻ ԿԵՐՆ ՊՈԼԻՊՐԱՓ. և հրատարակ. վարչության № 4 տպարան, Ռուսթավելի № 3, Կենինական, 1946 թ.

ԱՅ.ՐՈՎԱՆԻՐ ԱՐԵՎԱՆԻՆԵՐ

<i>b₂</i>	<i>ՏՐԴ₂</i> <i>q₁</i> <i>q₂</i>	<i>Տպաղըզած է</i>	<i>Պետք է կարդալ</i>
28	6	Հապու	Հապու
74	4	Քըթնչուժ	Քըթնչուժ
75	2-3	Նըա զիմքին, սըի երեսի վըս	Նըա զիմքին, սըի վըս
86	5	Զիշել	Զիշել
89	14	Անկացնել	Անկացնել

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220027177

268

ԳՐԱԴԱՐԱՆ Ե ԾԱՀ.

